ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի չավարտված հանցագործությունները դասակարգվում են հիմք ընդունելով սույն օրենսգրքով նախատեսված պատժի առավելագույն ներքոհիշյալ ժամկետները՝

1) հանցագործության նախապատրաստության համար՝ սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը,

2) հանցափորձի համար՝ սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 51-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով, ինչպես նաև սույն օրենսգրքի 77-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից (այսուհետ՝ նվազագույն աշխատավարձ) երեքհազարապատիկի չափով:».

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների երեք ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքը գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ: Տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարվող հաշվարկի ժամանակ թվային արժեքները կլորացնելը կատարվում է դատապարտյալի օգտին:»:

Հոդված 3. Օրենսգրքի 54-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ, ինչպես նաև սույն օրենսգրքի 77-րդ հոդվածով նախատեսված դեպքերում: Հանրային աշխատանքները նշանակվում են երեքից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով:».

2) 3-րդ մասից հանել «ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունը ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝» բառերը փոխարինել «դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո» բառերով,

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հանրային աշխատանքները չեն կատարվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, հղի կանանց, տասնվեց տարին չլրացած և ժամկետային զինվորական կամ այլընտրանքային զինվորական կամ այլընտրանքային աշխատանքային ծառայության մեջ գտնվող անձանց նկատմամբ:».

4) 5-րդ մասը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդ որում, հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը կալանքով կամ որոշակի ժամկետով

ազատազրկմամբ փոխարինելու համար կատարվող հաշվարկի ժամանակ թվային արժեքները կլորացնելը կատարվում է դատապարտյալի օգտին:»:

Հոդված 4. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առավել հիմնավոր որոշում կայացնելու նպատակով դատարանը իրավասու մարմնից կարող է պահանջել ներկայացնելու պատիժ նշանակելու կապակցությամբ համապատասխան խորհրդատվական զեկույց:»:

Հոդված 5. Օրենսգրքի 69-րդ հոդվածը 6-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«4. Պատժի նշանակում է համարվում նաև դատարանի դատավճռով նշանակված պատժի տեսակը կամ չափը փոփոխելը ներման, համաներման կամ իրավական այլ ակտի հիմքով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 70-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «դատապարտյալի» բառը փոխարինել «անձի» բառով,

2) 2-րդ մասը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առավել հիմնավոր որոշում կայացնելու նպատակով դատարանը իրավասու մարմնից կարող է պահանջել ներկայացնելու պատիժը պայմանականորեն չկիրառելու կապակցությամբ համապատասխան խորհրդատվական զեկույց:»,

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածով սահմանված կարգով փորձաշրջան սահմանելու դեպքում անձի պարտականությունները սահմանվում են օրենքով: Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս, դատարանը անձի համար կարող է նաև սահմանել որոշակի լրացուցիչ պարտականություն կամ պարտականություններ՝ բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին, որոնք անձը պետք է կատարի փորձաշրջանի ընթացքում և այլն: Դատարանը անձի համար

պարտականություններ սահմանում է կամ դրանք փոփոխում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից ներկայացված զեկույցի կամ միջնորդության հիման վրա կամ առանց դրա:»:

Հոդված 7. Օրենսգրքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը երկրորդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առավել հիմնավոր որոշում կայացնելու նպատակով դատարանը իրավասու մարմնից կարող է պահանջել ներկայացնելու պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կապակցությամբ համապատասխան խորհրդատվական զեկույց:»:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածով սահմանված կարգով պայմանական վաղաժամկետ ազատված անձի պարտականությունները սահմանվում են օրենքով, որոնք անձը պետք է կատարի պատժի չկրած մասի ընթացքում: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելիս, ի հավելումն օրենքով սահմանված պարտականությունների, դատարանը անձի համար կարող է սահմանել որոշակի լրացուցիչ պարտականություն կամ պարտականություններ՝ բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին, որոնք անձը պետք է կատարի պատժի չկրած մասի ընթացքում և այլն: Դատարանը անձի համար պարտականություններ սահմանում է կամ դրանք փոփոխում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից ներկայացված զեկույցի կամ միջնորդության հիման վրա կամ առանց դրա:»,

2) 5-րդ մասի «եթե դատարանը գտնի, որ նա պատիժը հետագա կրելու կարիքը չունի և փաստորեն կրել է» բառերը փոխարինել «եթե դատապարտյալը փաստացի կրել է» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 77-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 77. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը

1. Որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ կրող անձի պատժի չկրած մասը դատարանը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով՝ հաշվի առնելով պատիժը կրելու ժամանակահատվածում նրա դրսևորած վարքագիծը, հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կամովին հատուցելը կամ հարթելը, տուժողին պատճառված վնասը հարթելուն ուղղված այլ գործողությունները: Ընդ որում, անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել լրացուցիչ պատժից: Առավել հիմնավոր որոշում կայացնելու նպատակով դատարանը իրավասու մարմնից կարող է պահանջել ներկայացնելու պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կապակցությամբ համապատասխան խորհրդատվական զեկույց:

2. Պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը,

3) առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը, բացառությամբ սույն մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունների,

4) սույն օրենսգրքի 104-րդ հոդվածի երկրորդ մասով, 132-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 132.2-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 138-րդ հոդվածի երրորդ մասով, 139-րդ հոդվածի երրորդ մասով, 175-րդ հոդվածի երրորդ մասով, 217-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 218-րդ հոդվածի երրորդ մասով, 221-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով, 222-րդ հոդվածի առաջին մասով, 266-րդ հոդվածի երրորդ մասով, 269-րդ հոդվածի երրորդ մասով, 299-րդ հոդվածի առաջին մասով, 305-րդ հոդվածով, 384-րդ հոդվածի երկրորդ մասով, 387-րդ հոդվածի երկրորդ մասով, 388-րդ հոդվածի երկրորդ մասով, 389-րդ հոդվածով, 390-րդ հոդվածի առաջին և երրորդ մասերով, 391-րդ հոդվածի հոդվածի երրորդ մասով, 392-րդ, 393-րդ և 394-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը:

3. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատժի փաստացի կրած ժամկետը չի կարող երեք ամսից պակաս լինել:

4. Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս դատարանը կարող է ընտրել սույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ կետով նախատեսված պատիժը՝ յուրաքանչյուր պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում: Ընդ որում՝ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս ազատազրկման մեկ օրվան համապատասխանում է հանրային աշխատանքների երեք ժամը, իսկ տուգանքի դեպքում՝ նվազագույն աշխատավարձը:

5. Սույն հոդվածով սահմանված կարգը չի գործում ներման ակտով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքում:»:

Հոդված 9. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասը տվյալ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առավել հիմնավոր որոշում կայացնելու նպատակով դատարանը իրավասու մարմնից կարող է պահանջել ներկայացնելու պատիժը կրելը հետաձգելու կապակցությամբ համապատասխան խորհրդատվական զեկույց:»:

Հոդված 10. Օրենսգրքի 79-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 79. Պատիժը կրելուց ազատելը հիվանդության պատճառով

1. Եթե դատապարտյալը հանցանք կատարելուց հետո հիվանդացել է քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, որը նրան զրկել է իր գործողությունների (անգործության) փաստական բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դրանք ղեկավարելու հնարավորությունից, ապա դատարանը նրան ազատում է պատիժը կրելուց: Այդպիսի անձի նկատմամբ դատարանը կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց:

2. Եթե դատապարտյալը հանցանք կատարելուց հետո հիվանդացել է սույն հոդվածի առաջին մասով չնախատեսված այլ ծանր հիվանդությամբ, որը արգելք է հանդիսանում պատիժը կրելուն, ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված անձը առողջանալու և պատիժը կրելուց ազատվելուց հետո նոր հանցանք կատարելու դեպքում կարող է ենթարկվել պատժի, եթե չեն անցել սույն օրենսգրքի 81-րդ հոդվածով սահմանված վաղեմության ժամկետները: Նման դեպքում անձի նկատմամբ վերջնական պատիժը նշանակվում է դատավճիռների համակցությամբ՝ սույն օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողը պատիժը կրելուց ազատվում է այնպիսի հիվանդության դեպքում, որի հետևանքով նա համարվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

5. Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունները, որոնք կարող են արգելք հանդիսանալ պատիժը կրելուն, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 11. Օրենսգրքի 82-րդ հոդվածը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդ որում, համաներման ակտով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս կարող է ընտրվել սույն օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված ցանկացած ավելի մեղմ պատժատեսակ՝ յուրաքանչյուր պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում:»:

Հոդված 12. Օրենսգրքի 83-րդ հոդվածը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ընդ որում, ներման ակտով պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս կարող է ընտրվել սույն օրենսգրքի 49-րդ հոդվածով նախատեսված ցանկացած ավելի մեղմ պատժատեսակ՝ յուրաքանչյուր պատժատեսակի համար սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում:»:

Հոդված 13. Օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասը երկրորդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առավել հիմնավոր որոշում կայացնելու նպատակով դատարանը իրավասու մարմնից պահանջում է ներկայացնելու պատիժ նշանակելու կապակցությամբ համապատասխան խորհրդատվական զեկույց:»:

Հոդված 14. Օրենսգրքի 91-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 15. Օրենսգրքի 354-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 354. Պատիժը կրելուց կամ կալանքի տակ պահվելուց խուսափելը

1. Դատապարտյալին առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս գտնվելու թույլտվության կամ կարճաժամկետ մեկնելու կամ պատիժը կրելը հետաձգելու ժամկետի ավարտից հետո պատիժը կրելուց խուսափելն ազատազրկման դատապարտված անձի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Կարճաժամկետ մեկնման ժամկետի ավարտից հետո կալանավորվածներին պահելու վայր վերադառնալուց և կալանքի տակ պահվելուց խուսափելը կալանավորված անձի կողմից, ում թույլատրվել է կարճաժամկետ մեկնում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Դատապարտյալը՝ սույն հոդվածի իմաստով համարվում է պատիժը կրելուց խուսափող, եթե վերադառնալու համար սահմանված ժամկետին հաջորդող հաշվառման ժամանակ չի գտնվում ուղղիչ հիմնարկում: Կալանավորված անձը համարվում է կալանքի տակ պահվելուց խուսափող, եթե վերադառնալու համար սահմանված ժամկետին հաջորդող հաշվառման ժամանակ չի գտնվում կալանավորվածներին պահելու վայրում:

4. Պատիժը կրելուց կամ կալանքի տակ պահվելուց խուսափող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե քրեական վարույթը կարճվել է արդարացման հիմքով կամ տվյալ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ է կայացվել այն գործով, որով անձը դատապարտվել էր ազատազրկման կամ կալանավորվել էր:»:

Հոդված 16. Օրենսգրքի 355-րդ հոդվածի վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 355. Փախուստը քրեակատարողական հիմնարկից, ձերբակալվածներին պահելու վայրից, պահախմբի կողմից հսկվող վայրից կամ պահախմբով փոխադրելիս

1. Դատապարտյալի, կալանավորված անձի կամ ձերբակալված անձի փախուստը քրեակատարողական հիմնարկից, ձերբակալվածներին պահելու վայրից, պահախմբի կողմից հսկվող վայրից կամ պահախմբով փոխադրելիս՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով։»։

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 431-434-րդ և 436-438-րդ հոդվածները ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 12-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Դատապարտյալն ազատ է կատարելու այն, ինչ արգելված չէ օրենքով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները:»:

Հոդված 2. Օրենսգրքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Դատական հսկողությունը

1. Պատիժներ կատարող մարմնի և հիմնարկի վարչակազմը դատարանին հայտնում է պատիժը կատարելու մասին:

2. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ, որոնք կապված են դատական ակտերն ի կատար ածելու հանձնման և կատարման հետ:

3. Դատական ակտերի կատարման հետ կապված հարցերը դատարանի կողմից քննելիս, դատապարտյալն իրավունք ունի մասնակցել դատական նիստին և տալ ցուցմունքներ, ներկայացնել ապացույցներ, հարուցել միջնորդություններ և հայտնել բացարկներ, ծանոթանալ գործի բոլոր նյութերին, բողոքարկել դատարանի գործողությունները և որոշումները: Եթե դատապարտյալը օտարերկրյա պետության քաղաքացի է, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է դատապարտյալների փոխանցման մասին միջազգային պայմանագրով, կամ փոխանցման հնարավորությունը նախատեսված է փոխադարձության շուրջ

պայմանավորվածությամբ, ապա նա իրավունք ունի դիմելու դատարան՝ պատիժն իր քաղաքացիության պետության տարածքում ի կատար ածելու հարցումով:

4. Դատապարտյալն իր իրավունքները կարող է իրականացնել անձամբ կամ պաշտպանի օգնությամբ: Անչափահաս, ինչպես նաև ֆիզիկական կամ հոգեկան արատներով տառապող դատապարտյալի նկատմամբ դատական ակտերի կատարման հետ կապված հարցերը դատարանի կողմից քննելիս պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

5. Դատարանի կողմից՝ պատժի կատարման կարգի և պայմանների հետ կապված հարցերի քննարկումը չի կասեցնում պատժի կատարումը:

6. Պատժի կատարման հետ կապված հարցերը լուծում է դատավճիռ կայացրած դատարանը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով: Ընդ որում՝ դատավճիռ կամ այլ դատական որոշում կայացրած դատարանն իրավունք ունի լուծել դրա կատարման ընթացքում ծագած կասկածները կամ մեկնաբանել դրա անհստակությունները, այդ թվում՝ հստակ որոշել հաշվարկվող պատժի չափը, եթե դատարանի դատավճռում այն սահմանված չէ: Եթե դատական ակտը կատարվում է որոշումը կայացրած դատարանի դատական տարածքից դուրս, ապա այդ հարցը լուծում է տվյալ դատական տարածքի միևնույն ատյանի դատարանը: Տվյալ դեպքում դատական ակտի պատճենն ուղարկվում է դատական ակտը կայացրած դատարան:»:

Հոդված 3. Օրենսգրքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 24. Տուգանքի կատարումը

1. Տուգանքի կատարումն ապահովում է տուգանքի դատապարտված անձի (սույն գլխում այսուհետ՝ դատապարտյալ) բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումը:

2. Դատապարտյալը պարտավոր է դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել դատավճռով որպես տուգանք նշանակված գումարը՝ վճարման անդորրագիրը ներկայացնելով պատիժը կատարող մարմնին, բացառությամբ սույն օրենսգրքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 4. Օրենսգրքի 27-րդ, 29-րդ, 31-րդ, 34-րդ և 35-րդ հոդվածներում «ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումը» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 1-ին կետի «քրեակատարողական մարմնի» բառերը փոխարինել «պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի» բառերով,

2) 2-րդ կետի «ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանման» բառերը փոխարինել «պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի» բառերով,

3) 3-րդ կետի «ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանմանը» բառերը փոխարինել «պատիժը կատարող հիմնարկին կամ մարմնին» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 32-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 32. Հանրային աշխատանքներ կատարելը

1. Հանրային աշխատանքների կատարումը դատական ակտի հիման վրա ապահովում է հանրային աշխատանքների դատապարտված անձի բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումը՝ իր որոշած վայրերում:

2. Հանրային աշխատանքների դատապարտված անձը (սույն գլխում այսուհետ՝ դատապարտյալ) պարտավոր է իր բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանում ներկայանալ դատարանի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Դատապարտյալը հանրային աշխատանքների ներգրավվում է, և նշանակված պատիժը կատարվում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում: Հանրային աշխատանքների կատարման ընթացքում պատժի կատարումը կարող է մինչև մեկ տարի ժամկետով ընդհատվել ոչ ավելի, քան մեկ անգամ:

3. Հանրային աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը հաշվարկվում է դատապարտյալի՝ հանրային աշխատանքների փաստացի ներգրավվելու պահից:

4. Հանրային աշխատանքների ներգրավման կարգը և ժամկետները, ինչպես նաև տվյալ պատժի հետ կապված այլ հարաբերությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 33-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանմանը» բառերը փոխարինել «իր բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանմանը» բառերով,

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դատապարտյալի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունենալու դեպքում նրա բնակության վայրի պրոբացիայի ծառայության տվյալ տարածքային ստորաբաժանման համապատասխան ծառայողը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատժից ազատելու նպատակով:»,

3) 5-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դատապարտյալի՝ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական կամ այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու կամ հղիության կամ տասնվեց տարին լրացած չլինելու դեպքում հանրային աշխատանքների ձևով պատժի կատարումը համապատասխանաբար ծառայության կամ հղիության կամ մինչև տասնվեց տարին լրանալու ժամկետով կասեցվում է:»:

Հոդված 8. Օրենսգրքի 37-րդ հոդվածի «քրեակատարողական մարմնին կամ հիմնարկին» բառերը փոխարինել «պատիժը կատարող մարմնին կամ հիմնարկին» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 54-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.

«4. Դատապարտյալի՝ բժշկական հաստատությունում անցկացրած ժամանակը հաշվակցվում է պատժի ժամկետի մեջ:»:

Հոդված 10. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասում «տեսակցություն» բառից հետո լրացնել «կամ կարճաժամկետ մեկնում մինչև մեկ օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել մեկ օրը» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 61-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.

«4. Դատապարտյալի՝ բժշկական հաստատությունում անցկացրած ժամանակը հաշվակցվում է պատժի ժամկետի մեջ:»:

Հոդված 12. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ուղղիչ հիմնարկի մանկատանը կամ սույն օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով դատապարտյալին երեխայի հետ համատեղ բնակվելու թույլատվության դեպքում, դատապարտյալներին անջատ պահելու՝ սույն հոդվածով սահմանված պահանջները կիրառվում են հնարավորինս:»:

Հոդված 13. Օրենսգրքի 80-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «ուղղիչ հիմնարկին կից մանկատանը» բառերը փոխարինել «ուղղիչ հիմնարկի մանկատանը» բառերով.

2) 1-ին մասի առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված անձին կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար սահմանված նվազագույն ժամկետը և նա պատիժը կրում է կիսաբաց կամ բաց ուղղիչ հիմնարկում:»,

3) 2-րդ մասի «Կիսաբաց, կիսափակ կամ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին» բառերը փոխարինել «Դատապարտյալին» բառով,

4) 5-րդ մասը «Բացասական բնութագրվող» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված» բառերով:

Հոդված 14. Օրենսգքրի 82-րդ հոդվածի «ուղղիչ հիմնարկին կից մանկատանը» բառերը փոխարինել «ուղղիչ հիմնարկի մանկատանը» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 83-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից» բառերը փոխարինել «բժշկական հաստատություններից» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Դատապարտյալի՝ բժշկական հաստատությունում անցկացրած ժամանակը հաշվակցվում է պատժի ժամկետի մեջ:»:

Հոդված 16. Օրենսգրքի 97-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ և 9-րդ մասերով.

«8. Դատապարտյալը պետք է նախապես տեղեկացվի այն խախտման հանգամանքների մասին, որի կատարումը նրան վերագրվում է, ինչպես նաև նրան պետք է համապատասխան հնարավորություններ ընձեռվեն այդ խախտման կապակցությամբ անձամբ լսվելու և բացատրություններ ներկայացնելու:

9. Դատապարտյալը չի կարող կրկին անգամ տույժի ենթարկվել նույն խախտման համար:»:

Հոդված 17. Օրենսգրքի 98-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ուղղիչ հիմնարկի պետը պարտավոր է հետաձգել պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատել պատժախցում գտնվելու ժամանակահատվածը կամ ժամկետից շուտ դատապարտյալին ազատել տույժը կրելուց՝ հաշվի առնելով հիվանդության կամ վիճակի հետ կապված պատժախցում գտնվելու անթույլատրելիության վերաբերյալ բժշկի եզրակացությունը: Եթե պատժախուց

տեղափոխելու հետաձգված ժամանակամիջոցում դատապարտյալը նոր խախտում չի կատարել և տույժի կիրառումն աննպատակահարմար է, ապա նրա նկատմամբ տույժը կարող է չկիրառվել»:

Հոդված 18. Օրենսգրքի 100-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում (այսուհետ՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին) գործող» բառերը,

2) 2-րդ մասի 2-րդ կետում «դատապարտվելու» բառից հետո լրացնել «կամ ռեցիդիվի (եթե նախկինում ազատազրկման ձևով պատիժ չի կրել)» բառերը,

3) 2-րդ մասի 3-րդ կետում «կամ ռեցիդիվի» բառերից հետո լրացնել «(եթե նախկինում ազատազրկման ձևով պատիժ է կրել)» բառերը,

4) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ըստ տեղաբաշխման առանձնահատկությունների կարող են ստեղծվել մեկից ավելի տեղաբաշխման հանձնաժողովներ»:

Հոդված 19. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 108-րդ հոդվածը:

Հոդված 20. Օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի «հանձնաժողովի որոշմամբ,» բառերը փոխարինել «հանձնաժողովի որոշմամբ կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղաբաշխված» բառերով:

Հոդված 21. Օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 112. Պատժից ազատելու հիմքերը

1. Պատժից ազատելու հիմքերն են՝

1) դատարանի դատավճռով նշանակված պատիժն ամբողջությամբ կրելը.

2) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը.

3) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը.

4) հղի լինելը կամ մինչև երեք տարեկան երեխա ունենալը.

5) պատիժը կրելուն արգելք հանդիսացող քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունը.

6) արտակարգ հանգամանքները.

7) մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելը.

8) ներումը.

9) համաներումը.

10) արդարացման դատավճռի կայացումը:

2. Օրենքով կարող են նախատեսվել պատժից ազատելու այլ հիմքեր:

Հոդված 113. Պատժից ազատելու կարգը

1. Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, կալանքի, կարգապահական գումարտակում պահելու կամ որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատժատեսակների կրումը դադարեցվում է պատժի ժամկետի վերջին օրը՝ հաշվի առնելով այն փոփոխությունները, որոնք օրենքով սահմանված կարգով կարող են մտցվել պատժի ժամկետի մեջ:

2. Կալանքի, կարգապահական գումարտակում պահելու կամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը պատժից ազատվում է պատժի ժամկետի վերջին օրվա առաջին կեսին: Եթե պատժի ժամկետն ավարտվում է ոչ աշխատանքային օրը, ապա դատապարտյալը պատժից ազատվում է դրան նախորդող աշխատանքային օրը: Պատժի ժամկետն ամիսներով հաշվելիս այն ավարտվում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը համապատասխան ամսաթիվ չունի, ապա այդ ամսվա վերջին օրը:

3. Դատապարտյալը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, հղի լինելու կամ մինչև երեք տարեկան երեխա ունենալու, պատիժը կրելուն արգելք հանդիսացող ծանր հիվանդություն ունենալու, արտակարգ հանգամանքների, ներման կամ համաներման, արդարացման դատավճռի կայացման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով ազատվում է համապատասխան փաստաթղթերը ստանալու օրը, իսկ եթե այդ փաստաթղթերը ստացվում են աշխատանքային օրվա ավարտից հետո և

օրենսդրությամբ սահմանված՝ պատժից ազատելու ընթացակարգը հնարավոր չէ պահպանել՝ հաջորդ օրվա առավոտյան:

4. Դատապարտյալի ներում շնորհելու և պատժից ազատելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5. Դատապարտյալի համաներմամբ պատժից ազատելու կարգը սահմանում է համաներման ակտն ընդունող մարմինը:

6. Պատժից ազատվելիս դատապարտյալին հանձնվում են նրան պատկանող գույքը, անձնական փաստաթղթերը, այդ թվում՝ պատժից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը: Պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմը պատժից ազատված անձին պարզաբանում է պատիժը կրելու ընթացքում կասեցված իրավունքների վերականգնման, ինչպես նաև պատժից ազատված անձի իրավական դրության վերաբերյալ:»:

Հոդված 22. Օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 23. Օրենսգրքի 115-րդ հոդվածում՝

1) վերնագրի «փոխարինելու ներկայացման» բառերից հետո լրացնել «և քննարկման» բառերով,

2) 1-ին մասի «պարտադիր լսում է» բառերից հետո լրացնել «պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների համար» բառերով,

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատում և պատժի չկրած մասը ավելի մեղմ պատժով փոխարինում դատարանը կիրառում է պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի՝ դատարան ներկայացվող միջնորդագրի հիման վրա, ընդ որում՝ միջնորդագրի հետ դատարան է ներկայացվում նաև դատապարտյալի անձնական գործը: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցերը լուծվում են դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից, անկախ այն բանից, թե որ դատարանն է դատապարտել:»,

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ որոշումները դատապարտյալի կողմից ստորագրությամբ ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:»,

5) 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու հարցը դատարանում քննելիս հրավիրվում է դատախազը և պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ներկայացուցիչը, որը դատարանին է ներկայացնում դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը: Գործի քննարկումն սկսվում է նախագահողի կողմից միջնորդագիրը հրապարակելով, որից հետո դատարանը հետազոտում է ապացույցները և լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Այնուհետև՝ դատարանը որոշում կայացնելու նպատակով հեռանում է խորհրդակցական սենյակ:»:

Հոդված 24. Օրենսգրքի 115.1-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ազատելու ներկայացման» բառերից հետո լրացնել «և քննարկման» բառերով,

2) 1-ին մասի առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժը կրող դատապարտյալի նկատմամբ պայմանական վաղաժամկետ ազատում դատարանը կիրառում է կարգապահական գումարտակի հրամանատարության միջնորդագրի հիման վրա:»,

2) 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

«5. Կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժը կրող դատապարտյալի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը լուծվում է դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից, անկախ այն բանից, թե որ դատարանն է դատապարտել:

6. Կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժը կրող դատապարտյալի՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը

դատարանում քննելիս հրավիրվում են դատախազը և պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ներկայացուցիչը, որը դատարանին է ներկայացնում կարգապահական գումարտակի հրամանատարության կողմից դատապարտյալի բնութագիրը: Գործի քննարկումն սկսվում է նախագահողի կողմից միջնորդագիրը հրապարակելով, որից հետո դատարանը հետազոտում է ապացույցները և լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Այնուհետև՝ դատարանը որոշում կայացնելու նպատակով հեռանում է խորհրդակցական սենյակ:»:

Հոդված 25. Օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 117. Պատիժը կրելը հետաձգելու ներկայացման և քննարկման կարգը

1. Պատիժը կրելը հետաձգելու հարցը դատարանի կողմից քննվում է դատապարտյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի, պաշտպանի կամ դատախազի միջնորդությամբ, ինչպես նաև դատական ակտը կայացրած դատարանի նախաձեռնությամբ: Միջնորդությանը կցվում են դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը, հոիության դեպքում՝ բժշկի եզրակացությունը, առկա երեխայի ծննդյան վկայականի պատճենը կամ այլ հանգամանքների մասին տեղեկանքներ, ինչպես նաև առկայության դեպքում՝ դատապարտյալի անձնական գործը:

2. Պատիժը կրելը հետաձգելու հարցի վերաբերյալ դատական համապատասխան ակտը դատարանն ուղարկում է պատիժը կատարող մարմնին կամ հիմնարկին: Եթե պատիժը կրելը հետաձգվել է դատապարտյալի ուղղիչ հիմնարկում պահվելու դեպքում, ապա ուղղիչ հիմնարկի վարչակազմը դատապարտյալի՝ ուղղիչ հիմնարկից դուրս գալու օրը դատապարտյալի բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանում է ուղարկում պատիժը կրելը հետաձգելու մասին դատական ակտի պատճենը՝ նշելով ազատման օրը և դատապարտյալից ստորագրություն վերցնելով՝ երեք օրվա ընթացքում, պրոբացիայի ծառայության տվյալ տարածքային ստորաբաժանումում հաշվառվելու պարտավորության մասին:

3. Դատապարտյալն իր բնակության վայր է մեկնում ինքնուրույն և իր հաշվին:

4. Դատապարտյալի ներկայանալուց և հաշվառվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, դատապարտյալի բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումը պարտավոր է ուղղիչ հիմնարկին տեղեկացնել այդ մասին, եթե պատիժը կրելը հետաձգվել է դատապարտյալի ուղղիչ հիմնարկում պահվելու դեպքում:

5. Պատիժը կրելը հետաձգելու հարցերով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

6. Պատիժը կրելը հետաձգելու դեպքերում պատժից ազատված անձանց վարքագծի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն:

7. Պատիժը կրելը հետաձգելու համար օրենքով նախատեսված հիմքերը վերանալու կամ պատիժը կրելը հետաձգելու մասին դատական համապատասխան ակտով սահմանված ժամկետը լրանալու դեպքում պրոբացիայի ծառայության համապատասխան ծառայողը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատժի չկրած մասից դատապարտյալին ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կամ նշանակված պատիժը կատարելու մասին՝ միջնորդությանը կցելով դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը:

8. Պատիժը կրելը հետաձգելու հարցը դատարանում քննելիս հրավիրվում են դատախազը, պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ներկայացուցիչը, որը դատարանին է ներկայացնում դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը: Գործի քննարկումն սկսվում է նախագահողի կողմից միջնորդագիրը հրապարակելով, որից հետո դատարանը հետազոտում է ապացույցները և լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Այնուհետև՝ դատարանը որոշում կայացնելու նպատակով հեռանում է խորհրդակցական սենյակ:

Հոդված 118. Քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու ներկայացման և քննարկման կարգը

1. Դատապարտյալի՝ հանցագործություն կատարելուց հետո քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ հիվանդանալու դեպքում, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն, դատարանը պատիժը կրելուց նրան ազատելու մասին որոշում է

կայացնում պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի ղեկավարի միջնորդագրի հիման վրա: Պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի միջնորդագիրը պետք է հիմնված լինի բժշկական հանձնաժողովի եզրակացության վրա: Միջնորդության հետ միաժամանակ դատարան են ներկայացվում դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը, բժշկական հանձնաժողովի եզրակացությունը և դատապարտյալի անձնական գործը: Քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու հարցը պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի կողմից քննարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Դատարանը քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց դատապարտյալին ազատելու վերաբերյալ միջնորդության կապակցությամբ որոշում կայացնում է մեկշաբաթյա ժամկետում, ընդ որում՝ միջնորդությունը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:

3. Քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ հիվանդացած դատապարտյալին պատիժը կրելուց ազատելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում դատապարտյալի անձը, հիվանդության և ցույց տրվող բժշկական օգնության ու սպասարկման բնույթը, տվյալ դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը:

4. Դատապարտյալի՝ քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու վերաբերյալ ընդունված որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

5. Դատապարտյալի՝ քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու հարցերը լուծվում են դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից, անկախ այն բանից, թե որ դատարանն է դատապարտել:

6. Դատապարտյալի՝ քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու վերաբերյալ հարցը դատարանում քննելիս հրավիրվում են դատախազը, պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի և բժշկական հանձնաժողովի ներկայացուցիչները, որոնք դատարանին են ներկայացնում համապատասխանաբար դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը և բժշկական հանձնաժողովի եզրակացությունը: Գործի քննարկումն սկսվում է նախագահողի կողմից

միջնորդագիրը հրապարակելով, որից հետո դատարանը հետազոտում է ապացույցները և լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Այնուհետև՝ դատարանը որոշում կայացնելու նպատակով հեռանում է խորհրդակցական սենյակ:»:

Հոդված 26. Օրենսգիրքը 118-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 118^1-րդ հոդվածով.

«Հոդված 118^1. Արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու ներկայացման և քննարկման կարգը

1. Հրդեհի, տեխնոլոգիական կամ տարերային աղետի, ընտանիքի միակ աշխատունակ անդամի ծանր հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժից ազատելու հարցը դատարանի կողմից քննվում է դատապարտյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի, պաշտպանի կամ դատախազի միջնորդությամբ, ինչպես նաև դատական ակտը կայացրած դատարանի նախաձեռնությամբ: Միջնորդության հետ միաժամանակ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմը դատարան է ներկայացնում տեղեկանքներ համապատասխան հանգամանքների վերաբերյալ, դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը, ինչպես նաև դատապարտյալի անձնական գործը:

2. Հրդեհի, տեխնոլոգիական կամ տարերային աղետի, ընտանիքի միակ աշխատունակ անդամի ծանր հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժից ազատելու հարցերով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

3. Հրդեհի, տեխնոլոգիական կամ տարերային աղետի, ընտանիքի միակ աշխատունակ անդամի ծանր հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժից ազատելու վերաբերյալ հարցը դատարանում քննելիս հրավիրվում են դատախազը և պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ներկայացուցիչը, որը դատարանին է ներկայացնում դատապարտյալի և նրա վարքագծի վերաբերյալ եզրակացությունը: Գործի քննարկումն սկսվում է նախագահողի կողմից միջնորդագիրը հրապարակելով, որից հետո դատարանը հետազոտում է ապացույցները

և լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Այնուհետև՝ դատարանը որոշում կայացնելու նպատակով հեռանում է խորհրդակցական սենյակ:»:

Հոդված 27. Օրենսգրքի 120-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 120. Վերահսկողությունը պատժից ազատված անձանց վարքագծի նկատմամբ

Պատժից ազատված անձանց վարքագծի նկատմամբ օրենքով նախատեսված դեպքերում պրոբացիայի ծառայության կողմից իրականացվում է վերահսկողություն՝ սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 28. Օրենսգրքի 22-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 22.

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ, ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ԿԱՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՎ՝ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ

Հոդված 128. Վերահսկողությունը պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում իրականացվում է վերահսկողություն դատապարտյալի վարքագծի՝ դատապարտյալի կողմից հասարակական կարգը պահպանելու և օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունները կատարելու նկատմամբ: Վերահսկողության նպատակն է, անձին ազատությունից չզրկելով, նրա վարքագծի փոփոխումը և նրա ուղղումը հանրային, մասնագիտական, վերահսկողության տարբեր միջոցների ընտրությամբ և կիրառմամբ՝ ելնելով հանրային անվտանգության ապահովման գերակայությունից:

2. Վերահսկողության խնդիրներն են՝

1) ապահովել դատապարտյալի՝ օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունների պատշաճ կատարումը.

2) դատապարտյալի վարքի և կենսակերպի դրական փոփոխման նպատակով իրականացնել սոցիալական կամ վերականգնողական համապատասխան ծրագրեր՝ աջակցելով դատապարտյալի համար կրթական, առողջապահական, աշխատանքային, բնակարանային, ինչպես նաև այլ սոցիալական ծառայությունների հասանելիությունն ապահովելու հարցերում:

Հոդված 129. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում անձի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները

Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում անձի վարքագծի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է դատապարտյալի բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումը, իսկ զինծառայողի նկատմամբ՝ նրա զորամասի հրամանատարությունը:

Հոդված 129[1]. Դատապարտյալի պարտականությունները պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում դատապարտյալի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացքում դատապարտյալը պարտավոր է՝

1) դատապարտյալի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության ողջ ժամանակահատվածում պարբերաբար ներկայանալ դատապարտյալի վարքագծի

նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին և կատարել համապատասխան ծառայողի՝ վերահսկողության իրականացման հետ կապված օրինական պահանջները.

2) դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան ծառայողի պահանջով վերջինիս ներկայացնել իր գտնվելու վայրի, ընթացիկ գործունեության, օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունների կատարման կամ վերահսկողության հետ կապված ցանկացած այլ անհրաժեշտ օբյեկտիվ տեղեկատվություն.

3) չխոչընդոտել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան ծառայողի գործունեությանը, այդ թվում՝ իր իրավասությունների սահմաններում այցելություն կատարելու դատապարտյալի աշխատանքի կամ բնակության վայր կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության հետ կապված տեղեկատվություն ստանալու հարցում.

4) դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան ծառայողին առնվազն հնգօրյա ժամկետում հայտնել բնակության վայրի կամ աշխատանքի փոփոխության վերաբերյալ, բացառությամբ օրենքով նախատեսված՝ դրանց հնարավորության բացակայության դեպքերի.

5) կատարել տվյալ հանցագործությամբ պայմանավորված տուժողին հասցված վնասի վերականգնմանն ուղղված ֆինանսական պարտավորությունները.

6) առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան ծառայողի նախնական համաձայնության՝

ա. չբնակվել կամ գիշերակաց անցկացնել այլ վայրում, քան իր բնակության վայրն է, բացառությամբ նախապես հաստատված բնակության վայրի.

բ. որևէ առնչություն չունենալ (ներառյալ դեմ առ դեմ, հեռախոսային, փոստային, էլեկտրոնային կամ երրորդ անձի միջոցով շփումները) տուժողի կամ նախկին տուժողի կամ նրա ընտանիքի անդամի հետ.

7) կատարել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան ծառայողի՝ իր իրավասության

սահմաններում ներկայացված պահանջները, այդ թվում՝ ուղղված օրենքով կամ դատարանի կողմից սահմանված այլ պարտականությունները (ներառյալ՝ սոցիալական, հոգեբանական, կրթական, մշակութային, բժշկական կամ այլ բնույթի ծրագրերին մասնակցելու պարտականությունը) կատարելուն:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 138-142-րդ կամ 166-րդ հոդվածներից որևէ մեկով նախատեսված հանցագործության համար դատապարտվելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում դատապարտյալը, սույն հոդվածի առաջին մասով նախատեսված պարտականությունների հետ մեկտեղ, պարտավոր է նաև առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան ծառայողի նախնական համաձայնության՝

1) որևէ առնչություն չունենալ (ներառյալ դեմ առ դեմ, հեռախոսային, փոստային, էլեկտրոնային կամ երրորդ անձի միջոցով շփումները) մինչև 18 տարեկան անձի հետ, բացառությամբ իր զավակների.

2) չթույլատրել որևէ անձի բնակվելու կամ գիշերելու իր բնակության վայրում, բացառությամբ իր ընտանիքի անդամների.

3) ձեռք չբերել կամ դիտել սեռական բնույթ պարունակող որևէ նյութ (տեսողական, լսողական կամ համակարգչային տարբերակ).

4) չտիրապետել կամ չօգտագործել վարձակալության հիմքով որևէ բնակելի շինություն:

3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 266-րդ կամ 268-րդ հոդվածներից որևէ մեկով նախատեսված հանցագործության համար դատապարտվելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում դատապարտյալը, սույն հոդվածի առաջին մասով նախատեսված պարտականությունների հետ մեկտեղ, պարտավոր է նաև՝ մասնակցել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից կազմակերպվող կրթական համապատասխան դասընթացների:

4. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս դատապարտյալը պարտավոր է կատարել սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի պահանջները:

5. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում դատապարտյալի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացքում դատապարտյալի համար սույն հոդվածով սահմանված պարտականություններից բացի օրենքով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ:

Հոդված 130. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում անձի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համապատասխան մարմինների կամ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում անձին զորակոչելիս դատապարտյալի բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումը զինվորական կոմիսարիատ է ուղարկում դատարանի դատավճռի պատճենը և զինծառայության վայրում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերը: Զորամասի հրամանատարությունը պարտավոր է տասն օրվա ընթացքում պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանմանը հայտնել այդ անձին հաշվառման

վերցնելու, իսկ զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում՝ զինծառայությունից նրա արձակվելու և փորձաշրջանի ընթացքում նրա վարքագծի մասին:

3. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում անձի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 131. Փորձաշրջանի հաշվարկումը պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում

1. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում սահմանված փորձաշրջանը հաշվարկվում է դատապարտյալի բնակության վայրի պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումում, իսկ զինծառայողին՝ նրա զորամասի հրամանատարության կողմից հաշվառման վերցնելու պահից:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը դադարեցվում է փորձաշրջանի ավարտից հետո՝ հանվելով հաշվառումից:

Հոդված 132. Պատասխանատվությունը պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում սահմանված պարտականությունները չկատարելու կամ իր վարքագծի նկատմամբ վերահսկողությունից խուսափելու համար

1. Եթե պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում անձը խուսափում է իր վարքագծի նկատմամբ վերահսկողությունից, ապա դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը միջոցներ է ձեռնարկում նրա գտնվելու վայրը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունից խուսափելու պատճառները պարզելու համար: Դատարանն իրավունք ունի հայտարարելու իր

վարքագծի նկատմամբ վերահսկողությունից խուսափող անձի հետախուզում՝ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ:

2. Եթե պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում անձը խուսափում է օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունները կատարելուց կամ իր վարքագծի նկատմամբ վերահսկողությունից, ապա նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը գրավոր յոթօրյա ժամկետում նախազգուշացնում է նրան՝ համապատասխանաբար պատժի պայմանականորեն չկիրառելը, պատիժը կրելը հետաձգելը կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելը վերացնելու հնարավորության մասին:

3. Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացքում անձի կողմից օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու կամ իր վարքագծի նկատմամբ վերահսկողությունից խուսափելու դեպքում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համապատասխան ծառայողը միջնորդություն է ներկայացնում դատարան պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և նշանակված պատիժը կատարելու մասին:

4. Պատիժը պատիժը կրելը հետաձգելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացքում անձի կողմից օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու կամ իր վարքագծի նկատմամբ վերահսկողությունից խուսափելու կամ դատապարտյալի՝ երեխայից հրաժարվելու կամ նախազգուշացումից հետո երեխային դաստիարակելուց և խնամելուց խուսափելու դեպքերում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համապատասխան ծառայողը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատիժը կրելը հետաձգելը վերացնելու և նշանակված պատիժը կատարելու մասին:

5. Եթե դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումից պարբերաբար խուսափում է, ապա դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համապատասխան ծառայողը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

6. Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում դատապարտյալի վարքագծի նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացքում օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարել է համարվում անձի կողմից մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ արգելված գործողություններ կատարելը կամ պարտականությունները չկատարելը կամ օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունները երեսուն օրից ավելի չկատարելը կամ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համապատասխան ծառայողի կանչով երկու անգամ անընդմեջ չներկայանալը: Դատապարտյալը երեխային դաստիարակելուց խուսափող է համարվում, եթե, պաշտոնապես չհրաժարվելով երեխայից, նրան թողնում է ծննդատանը կամ հանձնում է մանկատուն կամ հակահասարակական ապրելակերպ է վարում և չի զբաղվում երեխայի պատշաճ դաստիարակությամբ ու խնամքով կամ ավելի, քան մեկ ամիս երեխային թողնում է ազգականների կամ այլ անձանց մոտ կամ թաքնվում է կամ կատարում է այլ գործողություններ, որոնք վկայում են երեխային դաստիարակելուց խուսափելու մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելու հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում անձն իր վարքագծի նկատմամբ վերահսկողությունից խուսափող է համարվում, եթե նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 30 օրվա ընթացքում:»:

Հոդված 29. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի երրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձերբակալված կամ կալանավորված անձն ազատ է կատարելու այն, ինչ արգելված չէ օրենքով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները:»:

Հոդված 2. Օրենքի 31-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) անչափահասները՝ չափահասներից, ընդ որում՝ անչափահասը մինչև կալանավորման ժամկետը լրանալը պահվում է կալանավորվածներին պահելու միևնույն վայրում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը, եթե չի դրսևորում բացասական վարքագիծ:»:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածը 6-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով.

«Կալանավորված անձը պետք է նախապես տեղեկացվի այն խախտման հանգամանքների մասին, որի կատարումը նրան վերագրվում է, ինչպես նաև նրան պետք է համապատասխան հնարավորություններ ընձեռվեն այդ խախտման կապակցությամբ անձամբ լսվելու և բացատրություններ ներկայացնելու:

Կալանավորված անձը չի կարող կրկին անգամ տույժի ենթարկվել նույն խախտման համար:»:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կալանավորվածներին պահելու վայրի պետը պարտավոր է հետաձգել պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատել պատժախցում գտնվելու ժամանակահատվածը կամ ժամկետից շուտ կալանավորված անձին ազատել տույժը կրելուց՝ հաշվի առնելով հիվանդության կամ վիճակի հետ կապված պատժախցում գտնվելու անթույլատրելիության վերաբերյալ բժշկի եզրակացությունը: Եթե պատժախուց տեղափոխելու հետաձգված ժամանակամիջոցում կալանավորված անձը նոր խախտում չի կատարել և տույժի կիրառումն աննպատակահարմար է, ապա նրա նկատմամբ տույժը կարող է չկիրառվել»:

Հոդված 5. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի «գործողությունների» բառից հետո լրացնել «(անգործության) և որոշումների» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ պրոբացիայի ծառայություն) նպատակները, խնդիրները, կազմակերպման և գործունեության հիմունքները, ծառայություն անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային կոչումների դասակարգումը, պրոբացիայի ծառայության ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Պրոբացիայի ծառայության իրավական կարգավիճակը

1. Պրոբացիայի ծառայությունն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատութան նախարարության համակարգում:

2. Պրոբացիայի ծառայությունը պետական ծառայության տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Պրոբացիայի ծառայությունում ծառայող քաղաքացին պետական ծառայող է:

3. Պրոբացիայի ծառայության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

4. Պրոբացիայի ծառայության հիմնադիր փաստաթուղթը պրոբացիայի ծառայության կանոնադրությունն է, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ:

5. Պրոբացիայի ծառայության իրավական վիճակն ու գործունեության կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

6. Պրոբացիայի ծառայությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, ամրացված գույք և իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Պրոբացիայի ծառայությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

Հոդված 3. Պրոբացիայի ծառայության հիմնական սկզբունքները

Պրոբացիայի ծառայության հիմնական սկզբունքներն են՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնահերթությունը.

2) պրոբացիայի ծառայության կայունությունը.

3) պրոբացիայի ծառայության ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը և օրենքի առջև պրոբացիայի ծառայության ծառայողների իրավահավասարությունը.

4) պրոբացիայի ծառայության հրապարակայնությունը.

5) պրոբացիայի ծառայության ծառայողների քաղաքական զսպվածությունը.

6) քաղաքացիների համար պրոբացիայի ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան.

7) պրոբացիայի ծառայության ծառայողների արհեստավարժությունը.

8) պրոբացիայի ծառայության ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը.

9) պրոբացիայի ծառայության ծառայողների պատասխանատվությունն իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

10) պրոբացիայի ծառայության ծառայողների գործունեության վերահսկելիությունը և հաշվետու լինելը:

Հոդված 4. Պրոբացիայի ծառայության նպատակները և լիազորությունները

1. Պրոբացիայի ծառայության նպատակն է նպաստել հանրային անվտանգության ապահովմանը, քրեական արդարադատության անաչառ իրագործմանն ու հանցագործություն կատարած անձանց սոցիալական ներգրավվածությանը՝ հանցագործությունների կատարումը կանխելու և նվազեցնելու միջոցով:

2. Պրոբացիայի ծառայությունը՝

1) ներկայացնում է մասնագիտական ուսումնասիրությունների իրականացմամբ խորհրդատվական զեկույցներ համապատասխան մարմիններին՝ խափանման միջոց ընտրելու, պատիժ նշանակելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման գործընթացներում առավել տեղեկացված և հիմնավոր որոշումների կայացմանը նպաստելու նպատակով.

2) վարչական վերահսկողությունը և տնային կալանքը որպես խափանման միջոցներ կիրառելու դեպքերում ապահովում է դրանց իրականացումը,

3) կատարում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված, դատարանի նշանակած սույն կետով նախատեսված պատիժները՝

ա. տուգանքը.

բ. որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որպես հիմնական պատիժ նշանակվելու դեպքում.

գ. հանրային աշխատանքները,

4) իրականացնում է անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողություն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատիժը կրելը հետաձգելու կամ դաստիարակչական բնույթի

հարկադրանքի միջոցներ կիրառելով՝ քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերում,

5) իրականացնում է մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի և մեղադրյալի, ինչպես նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դեպքերում տուժողի և դատապարտյալի հաշտեցումը:

3. Պրոբացիայի ծառայության որոշ լիազորությունների կատարումը (այդ թվում նաև՝ պրոբացիայի ծառայության գործառութային որոշ լիազորություններ) կարող է փոխանցվել կամ պատվիրակվել հասարակական կազմակերպություններին՝ պրոբացիայի ծառայության և տվյալ կազմակերպության միջև կնքված պայմանագրի հիման վրա: Պայմանագրով կարող են նախատեսվել սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական ծրագրերի, ինչպես նաև պրոբացիայի ծառայության գործունեությանն օժանդակելու բնույթ ունեցող այլ գործառույթների իրագործում: Տվյալ կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են նույն օրենսդրությամբ, ինչ պրոբացիայի ծառայության ծառայողը:

4. Պրոբացիայի ծառայության գործունեությանը կարող են ներգրավվել կամավորներ, որոնց հետ կնքվում է համագործակցության պայմանագիր: Կամավորները գործում են պրոբացիայի ծառայության ծառայողի հսկողությամբ և նրանց գործունեությունն ուղղված է օժանդակելու պրոբացիայի ծառայության գործունեությանը:

5. Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կամ կամավորների ներգրավումը պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացմանը չի բացառում պետության և պրոբացիայի ծառայության ծառայողների պատասխանատվությունը պրոբացիայի ծառայության գործունեության որակի համար:

6. Պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացման կարգը և պայմանները սահմանվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Հոդված 5. Պրոբացիայի ծառայության կառուցվածքը

1. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական մարմնից և տարածքային մարմիններից:

2. Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմինը բաղկացած է բաժիններից, որոնց կազմում կարող են գործել բաժանմունքներ:

3. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմիններն են պրոբացիայի ծառայության մարզային (Երևան քաղաքի) բաժինները, որոնց կազմում կարող են գործել բաժանմունքներ:

Գ Լ ՈՒ Խ 2

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության լիազորությունները պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը պրոբացիայի ծառայության գործունեության ապահովման համար:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝

1) ղեկավարում և վերահսկում է պրոբացիայի ծառայության գործունեությունը.

2) արձակում է պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է ցուցումներ.

3) կասեցնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց և մարմինների (հանձնաժողովների) համապատասխան հրամանները, որոշումներն ու ցուցումները.

4) հաստատում է պրոբացիայի ծառայության կառուցվածքը և հաստիքացուցակը.

5) նշանակում կամ դադարեցնում է ծառայողական քննությունները, փոփոխում է ծառայողական քննություն կատարողին.

6) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել պրոբացիայի ծառայության ծառայողի լիազորությունները.

7) խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում պրոբացիայի ծառայության ծառայողներին.

8) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 7. Պրոբացիայի ծառայության պետը և նրա լիազորությունները պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում

1. Պրոբացիայի ծառայությունը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության պետը, որը՝

1) ապահովում է պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացումը.

2) ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) ընդունում է պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ.

4) առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ պրոբացիայի ծառայության կառուցվածքի և հաստիքացուցակի վերաբերյալ.

5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն է ներկայացնում պրոբացիայի ծառայության ծառայողների պաշտոնի անձնագրերը.

6) քննում է պրոբացիայի ծառայության ծառայողների նկատմամբ բերված բողոքները, օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամաններն ու ցուցումները.

7) իր իրավասությունների շրջանակներում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է պրոբացիայի ծառայության ծառայողներին, սույն օրենքով սահմանված դեպքերում պրոբացիայի ծառայության ծառայողներին շնորհում է դասային կոչումներ.

8) նշանակում և անցկացնում է ծառայության ծառայողական քննություններ.

9) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնի նշանակված պրոբացիայի ծառայության ծառայողի լիազորությունները.

10) սահմանում է մարզերի (Երևան քաղաքի) տարածքային բաժինների պետերի կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

11) ապահովում է ծառայողների մասնագիտական շարունակական ուսուցումը.

12) խրախուսում կամ կարգապահական տույժի է ենթարկում պրոբացիայի ծառայության՝ իր կողմից պաշտոնում նշանակված ծառայողներին.

13) միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ պրոբացիայի ծառայության ծառայողներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

14) առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

15) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև պրոբացիայի ծառայության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2. Պրոբացիայի ծառայության պետը պատասխանատվություն է կրում պրոբացիայի ծառայության խնդիրների իրականացման համար:

Գ Լ ՈՒ Խ 3

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱՅԻՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Հոդված 8. Պրոբացիայի ծառայության պաշտոնները

1. Պրոբացիայի ծառայության պաշտոնները աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, դասակարգվում են ըստ խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, խնդիրների բարդության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակից: Յուրաքանչյուր խմբի պաշտոնները նույնպես դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր: Նույն աստիճանի պաշտոնները բերված են ստորև՝ նույն տողում՝

1) պրոբացիայի ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝

- պրոբացիայի ծառայության պետ.

- պրոբացիայի ծառայության պետի տեղակալ.

2) պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

- կենտրոնական մարմնի բաժնի պետ, Երևանի քաղաքի բաժնի պետ, մարզային բաժնի պետ,

- բաժնի պետի տեղակալ, բաժանմունքի պետ,

3) պրոբացիայի առաջատար խմբի պաշտոններ՝

- գլխավոր մասնագետ.

- առաջատար մասնագետ.

- մասնագետ:

2. Պրոբացիայի ծառայությունում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոն զբաղեցնող ծառայողները համարվում են պրոբացիայի ծառայության ծառայողներ (այսուհետ՝ պրոբացիայի ծառայող):

3. Պրոբացիայի ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք պրոբացիայի ծառայողներ չեն համարվում, և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Պրոբացիայի ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց տրվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատած նմուշի վկայականներ:

Հոդված 9. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անձնագրերը

1. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում (փոփոխում) է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ պրոբացիայի ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագրի հիման վրա:

2. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են աշխատանքային ստաժի և փորձի առնվազն հետևյալ չափանիշները.

1) պրոբացիայի ծառայության բարձրագույն պաշտոններ՝ բարձրագույն (կամ բարձրագույն մասնագիտական) կրթություն, պրոբացիայի ծառայության գլխավոր պաշտոնների խմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պրոբացիայի ծառայության ստաժ և պրոբացիայի ծառայության առաջին դասի խորհրդականի դասային կոչում կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան.

2) պրոբացիայի ծառայության գլխավոր պաշտոններ՝ բարձրագույն (կամ բարձրագույն մասնագիտական) կրթություն, պրոբացիայի ծառայության առաջատար պաշտոնների խմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա պրոբացիայի ծառայության ստաժ և պրոբացիայի ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային կոչում կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան.

3) պրոբացիայի ծառայության առաջատար պաշտոններ՝ բարձրագույն (կամ բարձրագույն մասնագիտական) կրթություն, պրոբացիայի ծառայության պաշտոններում կամ քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ

հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների) կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անձնագրերով կարող են նախատեսվել նաև այլ չափանիշներ:

4. Պրոբացիայի ծառայության պաշտոնի անձնագիրը կարող է փոփոխվել, եթե դա տվյալ պաշտոնը զբաղեցնող պրոբացիայի ծառայողի համար չի առաջացնում այնպիսի նոր պահանջներ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստման արդյունքով:

Հոդված 10. Պրոբացիայի ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը

Պրոբացիայի ծառայության թափուր պաշտոնը զբաղեցվում է արտամրցութային կարգով կամ մրցույթով:

Հոդված 11. Պրոբացիայի ծառայության թափուր պաշտոն արտամրցութային կարգով զբաղեցնելու դեպքերը

Պրոբացիայի ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում առնվազն մեկամսյա ժամկետում՝ մինչև տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարելը, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում նշանակելու՝

1) պրոբացիայի այն ծառայողին, որը միաժամանակ՝

ա. բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները.

բ. համարվում է պրոբացիայի ծառայության միևնույն խմբի պաշտոն զբաղեցնող կամ առնվազն ունի տվյալ թափուր պաշտոնի համար նախատեսված պրոբացիայի ծառայության դասային կոչում կամ զբաղեցնելու է պրոբացիայի ծառայության իր զբաղեցրած խմբին հաջորդող բարձր խմբի պաշտոն.

գ. այդ մասին տվել է գրավոր համաձայնություն,

2) պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գրանցված պրոբացիայի այն ծառայողին, որը միաժամանակ՝

ա. բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները.

բ. այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:

Հոդված 12. Պրոբացիայի ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Պրոբացիայի ծառայության նոր ստեղծված պաշտոններում (բացառությամբ սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված դեպքերի), ինչպես նաև պրոբացիայի ծառայության թափուր պաշտոններում սույն օրենքի 11-րդ հոդվածով և 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում նշանակումներ չկատարվելու դեպքերում այդ պաշտոնները զբաղեցվում են մրցույթով:

2. Պրոբացիայի ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի համապատասխան ստորաբաժանումը:

3. Պրոբացիայի ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

4. Պրոբացիայի ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթը անցկացնում է մրցութային հանձնաժողովը: Պրոբացիայի ծառայության մրցութային հանձնաժողովի կազմում ներգրավվում է նաև գիտական կամ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչ (ներ): Պրոբացիայի ծառայության մրցութային հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է պրոբացիայի ծառայության պետը:

5. Մրցութային հանձնաժողովը քաղաքացուն չի թույլատրում մասնակցել մրցույթին, եթե քաղաքացին չի բավարարում սույն օրենքի 16-րդ հոդվածով պահանջները, կամ առկա է սույն օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

6. Մրցույթն անցկացվում է նաև, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

7. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

8. Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

9. Թեստերը կազմվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի սահմանած կարգով՝ համակարգչում զետեղված հարցաշարից և դրանցից պատահական ընտրված հարցերից՝ մասնակիցների գիտելիքները հետևյալ բնագավառներում ստուգելու համար՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն.

2) քրեական և քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրություն.

3) համապատասխան պետական մարմնի իրավասությունը կանոնակարգող, ինչպես նաև պրոբացիայի ծառայողի պաշտոնի համար նախատեսված գործառութային պարտականություններին վերաբերող պահանջները սահմանող օրենսդրություն (մասնագիտական հարցեր):

10. Համակարգչում զետեղված հարցաշարը ոչ ուշ, քան մրցույթ անցկացնելուց մեկ ամիս առաջ պետք է հրապարակվի:

11. Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ ճիշտ պատասխան:

12. Թեստավորման փուլն անցկացվում է մասնակիցների համար կոդերի կիրառմամբ՝ գաղտնիությունն ապահովելու նպատակով:

13. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման առաջադրանքների առնվազն 80 տոկոսին ճիշտ պատասխանած մասնակիցները:

14. Մասնակիցների հետ հարցազրույցն անցկացվում է հարցատոմսերով՝ պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողությունները ստուգելու նպատակով:

15. Մրցութային հանձնաժողովը հարցազրույցի արդյունքի հիման վրա յուրաքանչյուր մասնակցի համար անցկացնում է քվեարկություն: Մրցութային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

16. Մրցույթի հաղթող են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր քվեարկության արդյունքով հավաքել են մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:

17. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը:

18. Մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո այդ արդյունքները կարող են մասնակցի (իր արդյունքների մասով) կամ մրցութային հանձնաժողովի անդամի կողմից գրավոր բողոքարկվել:

19. Գրավոր բողոքի քննության ժամանակ ուսումնասիրվում են մասնակցի տված պատասխանները, դրանց վերաբերյալ մրցութային հանձնաժողովի գնահատականները (դրանց ճիշտ կամ սխալ լինելը)՝ դրանք համադրելով քվեարկության արդյունքների հետ և որոշելով տվյալ մասնակցի՝ մրցույթի արդյունքով հաղթող ճանաչվելու հարցը:

20. Բողոքի վերաբերյալ ընդունված որոշումը հրապարակվում է դա ընդունվելուց հետո՝ նույն օրը:

21. Գրավոր բողոք ներկայացնելու, դա քննության առնելու և որոշում կայացնելու կարգն ու ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

22. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո գրավոր բողոքի բացակայության դեպքում մրցութային հանձնաժողովից ստացված մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված մասնակիցների վերաբերյալ եզրակացությունը մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարն ուղարկում է տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված մասնակիցներից մեկին նշանակում է համապատասխան պաշտոնում:

23. Գրավոր բողոքի առկայության դեպքում, սույն հոդվածի 22-րդ մասով նախատեսված կարգով, եզրակացության հետ ուղարկվում է նաև սույն հոդվածի 19-րդ մասով նախատեսված որոշումը՝ դա ստանալուց անմիջապես հետո:

24. Եթե մրցույթի արդյունքով մասնակիցներից ոչ մեկը թեստավորման առաջադրանքների առնվազն 80 տոկոսին ճիշտ պատասխան չի տվել, կամ հարցազրույցի մասնակիցներից ոչ մեկը քվեարկության արդյունքով չի հավաքել մրցութային հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներ ու մրցույթում հաղթող չի ճանաչվել, կամ համապատասխան մարմնի ղեկավարը սույն հոդվածի 19-րդ մասով նախատեսված դեպքում կայացրել է մրցույթում հաղթող չճանաչելու մասին որոշում, ապա անցկացվում է նոր մրցույթ:

25. Եթե մրցութային հանձնաժողովն իրավազոր չէ (նիստին չի մասնակցում հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին), ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է կրկնակի մրցույթ:

26. Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով:

27. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, ապա մրցույթը համարվում է չկայացած, և անցկացվում է նոր մրցույթ:

28. Սույն հոդվածով սահմանված կարգի խախտմամբ անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

29. Նոր մրցույթ է անցկացվում նաև մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում:

30. Նոր մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով:

31. Եթե նոր կամ կրկնակի մրցույթը համարվում է չկայացած (անվավեր), ինչպես նաև նոր կամ կրկնակի մրցույթի արդյունքով հաղթող չի ճանաչվում, ապա պրոբացիայի ծառայության տվյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարվում է նոր մրցույթ:

32. Մրցույթի հետ կապված և սույն օրենքով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:

Հոդված 13. Պրոբացիայի ծառայության դասային կոչումները

1. Պրոբացիայի ծառայողներին շնորհվում են դասային հետևյալ կոչումները՝

- պրոբացիայի ծառայության առաջին դասի պետական խորհրդական.
- պրոբացիայի ծառայության երկրորդ դասի պետական խորհրդական.
- պրոբացիայի ծառայության երրորդ դասի պետական խորհրդական.
- պրոբացիայի ծառայության առաջին դասի խորհրդական.
- պրոբացիայի ծառայության երկրորդ դասի խորհրդական.
- պրոբացիայի ծառայության երրորդ դասի խորհրդական.
- պրոբացիայի ծառայության առաջին դասի ծառայող.
- պրոբացիայի ծառայության երկրորդ դասի ծառայող.
- պրոբացիայի ծառայության երրորդ դասի ծառայող:

2. Դասային կոչումները դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր:

3. Պրոբացիայի ծառայության պաշտոնների բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար սահմանված պրոբացիայի ծառայության առաջին դասի պետական խորհրդական, պրոբացիայի ծառայության երկրորդ դասի պետական խորհրդական և պրոբացիայի ծառայության երրորդ դասի պետական խորհրդական դասային կոչումները շնորհում, դասային կոչումն իջեցնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

4. Պրոբացիայի ծառայության պետի դասային կոչումը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի, շնորհում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

5. Պրոբացիայի ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների դասային կոչումները, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դեպքերի, շնորհում է պրոբացիայի ծառայության պետը:

6. Դասային կոչումները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված կոչումներին համապատասխան, սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

7. Դասային կոչումները շնորհվում են անհատական կարգով, ցմահ: Պրոբացիայի ծառայողների դասային աստիճանները պահպանվում են աշխատանքից ազատվելիս կամ պետական ծառայության այլ պաշտոնի տեղափոխվելիս:

8. Պրոբացիայի ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձին պրոբացիայի ծառայության դասային կոչում շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո: Ընդ որում, պրոբացիայի ծառայողին փորձաշրջանի ավարտից հետո շնորհվում է պրոբացիայի ծառայության երրորդ դասի ծառայողի դասային կոչում, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքերի:

9. Պետական այլ մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող քաղաքացիներին պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է նրանց զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճանին, որակավորման դասին) համապատասխան դասային կոչում: Պետական այլ մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների, դասային աստիճանների, որակավորման դասերի համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10. Պրոբացիայի ծառայողը, ինչպես նաև պրոբացիայի ծառայությունում ծառայությունը դադարեցրած քաղաքացին կարող է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում զրկվել դասային կոչումից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի ծառայության դասային աստիճանից զրկվում է սույն օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատվելու դեպքում:

Հոդված 14. Պրոբացիայի ծառայության պաշտոններին համապատասխանող դասային կոչումները

Պրոբացիայի ծառայության պաշտոնների համար սահմանվում են հետևյալ առավելագույն կոչումները.

1) պրոբացիայի ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝

ա. պրոբացիայի ծառայության պետ՝ պրոբացիայի ծառայության առաջին դասի պետական խորհրդական.

բ. պրոբացիայի ծառայության պետի տեղակալ՝ պրոբացիայի ծառայության երկրորդ դասի պետական խորհրդական,

2) պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. կենտրոնական մարմնի բաժնի պետ, Երևանի քաղաքի բաժնի պետ, մարզային բաժնի պետ՝ պրոբացիայի ծառայության առաջին դասի խորհրդական.

բ. բաժնի պետի տեղակալ, բաժանմունքի պետ՝ պրոբացիայի ծառայության երկրորդ դասի խորհրդական,

3) պրոբացիայի առաջատար խմբի պաշտոններ՝

ա. գլխավոր մասնագետ՝ պրոբացիայի ծառայության երրորդ դասի խորհրդական.

բ. առաջատար մասնագետ, մասնագետ՝ պրոբացիայի ծառայության առաջին դասի ծառայող:

Հոդված 15. Դասային կոչումների շնորհման ժամկետները

1. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական դասային կոչումների շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները՝

- պրոբացիայի ծառայության երկրորդ դասի խորհրդական՝ 5 տարի.
- պրոբացիայի ծառայության երրորդ դասի խորհրդական՝ 4 տարի.
- պրոբացիայի ծառայության առաջին դասի ծառայող՝ 3 տարի.
- պրոբացիայի ծառայության երկրորդ դասի ծառայող՝ 3 տարի.
- պրոբացիայի ծառայության երրորդ դասի ծառայող՝ 2 տարի:

2. Պրոբացիայի ծառայության առաջին դասի պետական խորհրդականի, պրոբացիայի ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի, պրոբացիայի ծառայության երրորդ դասի պետական խորհրդականի և պրոբացիայի ծառայության առաջին դասի խորհրդականի դասային կոչումներով ծառայության ժամկետ չի սահմանվում:

3. Պրոբացիայի ծառայողի հերթական կոչումի շնորհումը հետաձգվում է, երբ՝

1) ծառայողի նկատմամբ ատեստավորման արդյունքում ընդունվել է սույն օրենքի 21-րդ հոդվածի 24-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշում.

2) պրոբացիայի ծառայողն ունի կարգապահական տույժ.

3) պրոբացիայի ծառայողը գտնվում է քրեական հետապնդման կամ ծառայողական քննության մեջ:

4. Հերթական դասային կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում պրոբացիայի ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն հոդվածի 3-րդ մասով նշված խոչընդոտների վերացումից հետո՝ 15-օրյա ժամկետում:

5. Դասային կոչումներով ծառայության ժամկետը հաշվարկվում է այդ կոչման շնորհման մասին հրամանի ստորագրման հաջորդ օրվանից: Հերթական դասային կոչում շնորհելու ժամկետը հաշվարկելիս իջեցված կոչումով ծառայության ժամանակահատվածը չի հաշվարկվում:

6. Պրոբացիայի ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կոչումը շնորհելուն խոչընդոտելն առաջացնում է սույն օրենքով սահմանված կարգապահական պատասխանատվություն:

Գ Լ ՈՒ Խ 4

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

Հոդված 16. Պրոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեցող անձինք

1. Պրոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

2. Պրոբացիայի ծառայությունում թափուր պաշտոնի կարող է նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Պրոբացիայի ծառայությունում ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, այդ թվում՝ ծառայողական քննության դեպքում, կին ծառայողի նախածննդյան կամ հետծննդյան, ինչպես նաև ծառայողի՝ երեխային խնամելու արձակուրդի դեպքերում նրա պաշտոնը

կարող է զբաղեցվել՝ պրոբացիայի ծառայության այլ փոխարինող ծառայողին տվյալ պաշտոնին գործուղելով կամ պրոբացիայի ծառայությունում կադրերի ռեզերվում գտնվող ծառայողին կամ պրոբացիայի ծառայությունում ծառայության անցնող անձին տվյալ պաշտոնին ժամանակավոր նշանակելով: Այդ հիմքերի վերացման դեպքում փոխարինող ծառայողը սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում է հավասարազոր կամ իր համաձայնությամբ ավելի ցածր պաշտոնի, իսկ դրա անհնարինության դեպքում գրանցվում է կադրերի ռեզերվում:

Հոդված 17. Փորձաշրջանի նշանակումը և անցկացումը

1. Պրոբացիայի ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև 6 ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի տևողությունը յուրաքանչյուր ծառայողի համար սահմանում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

2. Փորձաշրջանի ընթացքում ծառայողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները, որոնք սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված են պրոբացիայի ծառայողի համար:

3. Փորձաշրջանի համար սահմանված ժամկետում չեն ներառվում աշխատանքից աշխատողի բացակայության հետևյալ ժամանակահատվածները՝

1) սահմանված կարգով աշխատողի չվճարվող արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը.

2) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը:

4. Եթե պրոբացիայի ծառայողը սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով չի համապատասխանում առաջադրված պահանջներին, ապա կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը ազատվել ծառայությունից, որի մասին գրավոր տեղեկացվում է երեք օր առաջ: Եթե փորձաշրջանն անցնելուց հետո ծառայողը շարունակում է ծառայությունը, ապա նա համարվում է փորձաշրջան անցած:

Հոդված 18. Պրոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձինք

1. Պրոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

1) դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել են պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը պրոբացիայի ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը.

4) դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

2. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 19. Պրոբացիայի ծառայության պաշտոնի նշանակելը

1. Պրոբացիայի ծառայության պաշտոններում նշանակումներ կատարվում են սույն օրենքով սահմանված կարգով:

2. Պրոբացիայի ծառայության պաշտոնում նշանակված անձինք օրենքով նախատեսված՝ պաշտոնից ազատման հիմքերի բացակայության դեպքում անփոփոխելի են:

3. Պրոբացիայի ծառայության ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոններում նշանակում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, իսկ պրոբացիայի ծառայության մյուս պաշտոններում՝ պրոբացիայի ծառայության ղեկավարը:

4. Պրոբացիայի ծառայության պաշտոնում նշանակված անձին տրվում է սահմանված ձևի վկայական, որի ձևը և տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Հոդված 20. Պրոբացիայի ծառայողին այլ պաշտոնի փոխադրելը

Պրոբացիայի ծառայողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, առանց իր համաձայնության կարող է փոխադրվել՝

1) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

2) իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ.

3) զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճանով ցածր պաշտոնի, եթե ատեստավորումից հետո կայացվել է որոշում՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին:

Գ Լ ՈՒ Խ 5

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հոդված 21. Պրոբացիայի ծառայողի ատեստավորման կարգն ու պայմանները

1. Յուրաքանչյուր տարի պրոբացիայի ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա է պարտադիր ատեստավորման:

2. Պրոբացիայի ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:

3. Պրոբացիայի ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:

4. Պրոբացիայի ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կամ պրոբացիայի ծառայության պետի պատճառաբանված հրամանի հիման վրա:

5. Ատեստավորումն անցկացվում է պրոբացիայի ծառայողի անմիջական մասնակցությամբ:

6. Ատեստավորման ենթակա չեն՝

1) պրոբացիայի ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնողները.

2) տվյալ պաշտոնը երեք տարուց պակաս ժամկետով զբաղեցնող պրոբացիայի ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել.

3) հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող պրոբացիայի ծառայողները, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը չի տարածվում սույն օրենքի 11-րդ և 35-րդ հոդվածներով սահմանված կարգով պրոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքերի վրա: Հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող պրոբացիայի ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:

8. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ պրոբացիայի ծառայողները ենթակա են ատեստավորման ծառայության անցնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

9. Ատեստավորման ենթակա պրոբացիայի ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

10. Պրոբացիայի ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների ատեստավորումն անցկացնում է ատեստավորման հանձնաժողովը, որը կազմավորում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Ելնելով ծառայության առանձնահատկություններից՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը կարող է ձևավորել մեկից ավելի ատեստավորման հանձնաժողովներ: Պրոբացիայի ծառայության ատեստավորման հանձնաժողովի կազմում ներգրավվում է նաև գիտական կամ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչ (ներ):

11. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է պրոբացիայի ծառայողի ծառայողական բնութագիրը:

12. Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ պրոբացիայի ծառայողի մասին, նրա գործնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում պրոբացիայի ծառայողի կողմից իր կատարած աշխատանքների մասին յուրաքանչյուր կիսամյակ

անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:

13. Եթե ատեստավորումների միջև ընկած ժամանակահատվածում պրոբացիայի ծառայողի անմիջական ղեկավարն ազատվել է պրոբացիայի ծառայության պաշտոնից ատեստավորման արդյունքով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով (հայեցողական և քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող ղեկավարների դեպքում՝ հեռացման կամ պաշտոնանկության հիմքով), ապա վերջինիս տված եզրակացություններն իրավական ուժ չունեն: Եթե նման ղեկավարի տված եզրակացություններն ընդգրկում են ատեստավորումների միջև ընկած ժամանակահատվածի երկու երրորդից ավելին, ապա պրոբացիայի ծառայողի վերաբերյալ ծառայողական բնութագիր չի ներկայացվում:

14. Պրոբացիայի ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

15. Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել պրոբացիայի ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:

16. Ատեստավորումն անցկացվում է հետևյալ եղանակներով՝

1) փաստաթղթային.

2) թեստավորման և հարցազրույցի:

17. Պրոբացիայի այն ծառայողները, որոնք ունեն զբաղեցրած պաշտոնի խմբի համար սույն օրենքով նախատեսված առավելագույն դասային կոչում, ենթակա են փաստաթղթային ատեստավորման:

18. Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով: Հարցազրույցն անցկացվում է հարցատոմսերով՝ պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի դրույթների շրջանակներում նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով:

19. Ատեստավորման հանձնաժողովը պրոբացիայի յուրաքանչյուր ծառայողի համար քվեարկության է դնում սույն հոդվածի 20-րդ մասի 1-ին կետի որոշումը, որը հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ

չընդունվելու դեպքում ընդունված է համարվում սույն հոդվածի 20-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը:

20. Փաստաթղթային ատեստավորումից հետո ատեստավորման հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

2) ենթակա է ատեստավորման թեստավորման և հարցազրույցի միջոցով:

21. Թեստավորման և հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են պրոբացիայի այն ծառայողները՝

1) որոնք փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն.

2) որոնց վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 20-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը:

22. Թեստավորումը կարող է անցկացվել համակարգչի միջոցով կամ գրավոր:

23. Թեստերը կազմում, հարցազրույցն անցկացնում և արդյունքները գնահատում է ատեստավորման հանձնաժողովը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

24. Ատեստավորման հանձնաժողովը թեստավորման և հարցազրույցի արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

25. Ատեստավորման հանձնաժողովը պրոբացիայի յուրաքանչյուր ծառայողի համար քվեարկության է դնում սույն հոդվածի 24-րդ մասի 1-ին կետի որոշումը, որը հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ չընդունվելու դեպքում ընդունված է համարվում սույն հոդվածի 24-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը:

26. Ատեստավորման հանձնաժողովի որոշումը պարտադիր է պրոբացիայի ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համար, բացառությամբ ատեստավորման հանձնաժողովի որոշման բողոքարկման դեպքերի:

27. Պրոբացիայի ծառայողը, ինչպես նաև ատեստավորման հանձնաժողովի անդամն իրավունք ունեն ծանոթանալու ատեստավորման արդյունքներին և բողոքարկելու դրանք սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

28. Ատեստավորման արդյունքները, սույն օրենքի 12-րդ հոդվածի 21-րդ և 23-րդ մասերով սահմանված կարգով եռօրյա ժամկետում ներկայացվում են պրոբացիայի ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, որը պրոբացիայի ծառայողի զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու արդյունքի դեպքում ընդունում է նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին որոշում:

29. Պրոբացիայի ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը սույն հոդվածի 28-րդ մասով նախատեսված որոշումն ընդունում է ոչ ուշ, քան ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

30. Պրոբացիայի ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պրոբացիայի ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու ժամանակ սույն հոդվածի 28-րդ մասով նախատեսված որոշումն ընդունում է նրա՝ աշխատանքի ներկայանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

31. Ատեստավորման հետ կապված և սույն օրենքով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:

Հոդված 22. Պրոբացիայի ծառայողի վերապատրաստումը, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղումը

1. Պրոբացիայի ծառայողի վերապատրաստումը՝ նրա մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով շարունակական ուսուցումն է: Պրոբացիայի ծառայության գլխավոր և առաջատար խմբերի յուրաքանչյուր ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման:

2. Վերապատրաստումն անցկացվում է նաև պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պրոբացիայի ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման որոշակի պահանջների կատարելագործման կամ այդ

պահանջների փոփոխության դեպքում՝ պրոբացիայի ծառայողի կամ պրոբացիայի ծառայության պետի նախաձեռնությամբ:

3. Պրոբացիայի ծառայողի վերապատրաստումն անցկացվում է պրոբացիայի պետի հայտի հիման վրա:

4. Պրոբացիայի ծառայողների վերապատրաստումն անցկացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատած ծրագրերով: Վերապատրաստման ծրագրերը կազմվում են ըստ ոլորտի և պաշտոնի խմբի, ինչպես նաև դրանց տևողությունը չի կարող պակաս լինել 72 ակադեմիական ժամից:

5. Պրոբացիայի ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Պրոբացիայի ծառայողը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին վերապատրաստվելուց հետո մեկ տարուց պակաս ծառայություն անցնելու դեպքում պարտավոր է, ծառայություն չանցած ամիսներին համապատասխան, կատարված ծախսը, 12 ամսվա կտրվածքով բաժանելով յուրաքանչյուր ամսվա վրա, փոխհատուցել իր վերապատրաստման համար կատարված ծախսերը՝ բացառությամբ սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 8-րդ, 10-րդ կամ 13-րդ կետով սահմանված հիմքով ծառայությունից ազատվելու կամ սահմանված կարգով կենսաթոշակի անցնելու դեպքերում:

6. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով պրոբացիայի ծառայողի գործուղումն իրականացնում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում պահպանվում են պրոբացիայի ծառայողի պաշտոնը և ստաժը, իսկ նրա վարձատրությունը կարող է պահպանվել նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ:

8. Սույն օրենքի հիման վրա պրոբացիայի ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Գ Լ ՈՒ Խ 6

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 23. Պրոբացիայի ծառայողի հիմնական իրավունքները

1. Պրոբացիայի ծառայողի հիմնական իրավունքներն են՝

1) զբաղեցրած պաշտոնում իր իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2) իր անձնական գործի բոլոր նյութերին՝ իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեությանը վերաբերող այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ ներկայացնելը.

3) ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

4) իր իրավասության սահմաններում որոշումներ ընդունելը.

5) սահմանված կարգով և դեպքերում ծառայողական քննություն անցկացնել պահանջելը.

6) աշխատանքի, վարձատրության, առողջության պաշտպանությունը, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածությունը.

7) սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը.

8) իրավական պաշտպանությունը, այդ թվում՝ քաղաքական հետապնդումներից.

9) պրոբացիայի ծառայության դասային կոչման սահմանված կարգով բարձրացումը.

10) պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստվելը.

11) մրցույթի և ատեստավորման արդյունքները բողոքարկելը, այդ թվում՝ դատական կարգով.

12) ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի քննությանը մասնակցելը և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

2. Պրոբացիայի ծառայողը կարող է ունենալ սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ իրավունքներ:

Հոդված 24. Պրոբացիայի ծառայողի հիմնական պարտականությունները

1. Պրոբացիայի ծառայողի հիմնական պարտականություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները կատարելը.

2) մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ ապահովելը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը և համապատասխան հաշվետվություններ ներկայացնելը.

4) վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով ընդունած հրամաններն ու որոշումները, տրված կարգադրություններն ու ցուցումները կատարելը.

5) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկությունները, դիմումները և բողոքները քննության առնելը և դրանց ընթացք տալը.

6) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը.

7) օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները պահպանելը.

8) սահմանված կարգով և ժամկետներում ատեստավորմանը և վերապատրաստմանը մասնակցելը:

2. Պրոբացիայի ծառայողը պարտավոր է իրեն վերապահված իրավունքներն օգտագործել օրենքին համապատասխան և իր գործունեության մեջ թույլ չտալ քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի որևէ խախտում:

3. Պրոբացիայի ծառայողի համար սույն օրենքով և իրավական այլ ակտերով կարող են սահմանվել նաև այլ պարտականություններ:

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Հոդված 25. Պրոբացիայի ծառայողի դրամական բավարարումը

1. Պրոբացիայի յուրաքանչյուր ծառայող ունի ծառայության համար համարժեք դրամական բավարարման իրավունք:

2. Պրոբացիայի ծառայողի դրամական բավարարումը ձևավորվում է՝

1) հիմնական աշխատավարձից՝ պաշտոնային դրույքաչափից, որը պայմանավորվում է պրոբացիայի ծառայության պաշտոնների դասակարգման համակարգում տվյալ պաշտոնի զբաղեցրած դիրքով և ծառայողի ունեցած աշխատանքային ստաժով.

2) լրացուցիչ աշխատավարձից՝ աշխատանքի հատուկ պայմանների և աշխարհագրական միջավայրի համար տրվող հավելավճարից.

3) նյութական խրախուսման համար տրվող լրացուցիչ վճարից.

4) այլ պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարման համար տրվող հավելավճարից:

3. Պրոբացիայի ծառայության հիմնական աշխատավարձի համակարգում պաշտոնների համար սահմանվում է հիմնական աշխատավարձ՝ համաձայն տվյալ պաշտոնների դրույքաչափերի, որոնք սահմանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

4. Պաշտոնային դրույքաչափը և լրացուցիչ աշխատավարձի հավելումները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Դասային աստիճանների համար սահմանվում է դրույքաչափ՝ բազային պաշտոնային դրույքաչափի նկատմամբ, հետևյալ չափերով.

պրոբացիայի ծառայության առաջին դասի պետական խորհրդական	3.44
պրոբացիայի ծառայության երկրորդ դասի պետական խորհրդական	3.2
պրոբացիայի ծառայության երրորդ դասի պետական խորհրդական	2.91
պրոբացիայի ծառայության առաջին դասի խորհրդական	2.38
պրոբացիայի ծառայության երկրորդ դասի խորհրդական	2.25
պրոբացիայի ծառայության երրորդ դասի խորհրդական	1.85

պրոբացիայի ծառայության առաջին դասի ծառայող	1.72
պրոբացիայի ծառայության երկրորդ դասի ծառայող	1.59
պրոբացիայի ծառայության երրորդ դասի ծառայող	1.46

6. Այլ պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարման համար հավելավճարը վճարվում է տվյալ պաշտոնային դրույքաչափի 30 տոկոսի չափով, եթե տվյալ պաշտոնն զբաղեցնող ծառայողն այդ պարտականությունների կատարումը համատեղում է իր պաշտոնեական պարտականությունների հետ:

7. Պրոբացիայի ծառայության պաշտոնների խմբերում ընդգրկված հաստիքային տեղակալներին իրենց անմիջական պետերի պարտականությունների ժամանակավոր կատարման համար հավելավճար չի վճարվում:

Հոդված 26. Պրոբացիայի ծառայողի իրավական պաշտպանությունը և սոցիալական երաշխիքները

1. Պրոբացիայի ծառայողը, ինչպես նաև նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո, և նրանց անվտանգությունը երաշխավորվում է օրենքով:

2. Պրոբացիայի ծառայողի սոցիալական ապահովության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3. Պետությունը պրոբացիայի ծառայողի համար երաշխավորում է՝

1) ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ.

2) վարձատրություն, իր զբաղեցրած պաշտոնի խմբին համապատասխանող դասային կոչման համար հավելավճար և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ.

3) ամենամյա վճարովի արձակուրդ.

4) վերապատրաստում՝ այդ ընթացքում պահպանելով նրա պաշտոնը և դրա համար նախատեսված վարձատրությունը.

5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով, պրոբացիայի ծառայողի դիմումի հիման վրա ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված՝ նրա և նրա ընտանիքի անդամների անվտանգության պաշտպանության ապահովում բռնությունից, ահաբեկումից, այլ ոտնձգություններից.

7) ծառայողական գործուղումների հետ կապված՝ տրանսպորտային, բնակարանային և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում:

4. Պրոբացիայի ծառայողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հատկացվում է տրանսպորտային միջոց կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

Հոդված 27. Պրոբացիայի ծառայողի աշխատաժամանակի տևողությունը

1. Պրոբացիայի ծառայողի համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ:

2. Պրոբացիայի ծառայողը կարող է ներգրավվել արտաժամյա ծառայության ծառայությունում անհետաձգելի կամ հրատապ խնդիրներ առաջանալու դեպքերում:

Հոդված 28. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Պրոբացիայի ծառայողն իրավունք չունի՝

1) կատարելու վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը գտնվում է ծառայության մեջ, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից.

4) իրականացնելու քաղաքական զսպվածության սկզբունքի խախտումներ՝ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական միավորումների (այդ թվում՝ կրոնական) շահերի համար, նրանց նկատմամբ

վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու.

5) հոնորար ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու նյութատեխնիկական, ֆինանսական ու տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.

7) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

8) լինելու որևէ կուսակցության, կրոնական կազմակերպության անդամ.

9) կազմակերպելու գործադուլներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կամ մասնակցելու դրանց:

2. Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պրոբացիայի ծառայողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական (բաժնեհավաք, փայահավաք) կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման: Պրոբացիայի ծառայողն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:

3. Պրոբացիայի ծառայողին չի տրվում իր՝ պաշտոնի նշանակման, այլ պաշտոնի փոխադրման, ազատման կամ նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին հրամանի պատճենը, եթե հրամանը պարունակում է պետական կամ ծառայողական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն: Այդ դեպքում նրան տրվում է հրամանից քաղվածք, որից հանվում է պետական գաղտնիք կամ հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությունը:

ԳԼՈՒԽ 8

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ

Հոդված 29. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքների տեսակները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու համար պրոբացիայի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները՝

1) շնորհակալության հայտարարում.

2) պատվոգրով պարգևատրում.

3) միանվագ դրամական պարգևատրում.

4) հուշանվերով պարգևատրում.

5) արտահերթ դասային կոչման շնորհում.

6) տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային կոչումից մեկ աստիճան բարձր դասային կոչումի շնորհում, եթե կրկնակի լրացել է ունեցած դասային կոչումով ծառայության սահմանված ժամկետը.

7) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.

8) կարգապահական տույժի հանում:

2. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաև իրավական այլ ակտով սահմանված խրախուսման այլ տեսակներ:

3. Միաժամանակ կարող է կիրառվել խրախուսանքի մի քանի տեսակ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսանքները պրոբացիայի ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել մեկ անգամ ծառայության ամբողջ ընթացքում:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսանքները կարող է կիրառել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, ինչպես նաև պրոբացիայի ծառայության պետը: Ընդ որում՝ սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսանքները պրոբացիայի ծառայության պետը կարող է կիրառել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի համաձայնությամբ: Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված խրախուսանքը կարող է կիրառել տույժը կիրառած ղեկավարի կամ նրա վերադասի կողմից, իսկ եթե կարգապահական տույժը նշանակել է Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարը, ապա նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ կարող է հանել միայն նա:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 7-րդ կետերով նախատեսված խրախուսանքները կիրառվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին:

Հոդված 30. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում պրոբացիայի ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) պաշտոնի իջեցում.

4) դասային կոչման իջեցում մեկ աստիճանով.

5) ծառայությունից ազատում:

2. Մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված պրոբացիայի ծառայողից: Բացատրություն տալուց հրաժարվելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն: Բացատրություն տալուց հրաժարվելը հիմք չէ կարգապահական տույժ չկիրառելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել նաև պրոբացիայի ծառայության պետը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը պրոբացիայի ծառայողի նկատմամբ կիրառում է պրոբացիայի ծառայության տվյալ դասային կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Հոդված 31. Կարգապահական տույժը կիրառելու և տույժը հանելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված պրոբացիայի ծառայողի հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը, ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին:

2. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե մեկ տարուց ավելի է անցել կարգապահական խախտում կատարելու օրվանից:

3. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

4. Կարգապահական տույժի մասին պրոբացիայի ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, պրոբացիայի ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա կարգապահական տույժը համարվում է մարված:

6. Կարգապահական տույժը կիրառող պաշտոնատար անձի կամ նրա վերադասի կողմից կարող է հանվել մինչև մեկ տարին լրանալը, եթե պրոբացիայի ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում և դրսևորել է իրեն որպես բարեխիղճ ծառայող: Բացառիկ դեպքերում մեկից ավելի կարգապահական տույժերը կարող է հանել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված կարգով:

7. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

8. Պրոբացիայի ծառայողը պարտավոր է տալ գրավոր բացատրություններ, եթե իր նկատմամբ անցկացվում է ծառայողական քննություն:

9. Ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

10. Ծառայողական քննության ժամանակահատվածում պրոբացիայի ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննությանը: Այդ դեպքում նրան վճարվում է դրամական բավարարում:

11. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս նրա լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում դրամական բավարարումը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է անմեղության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում:

Հոդված 32. Պրոբացիայի ծառայողին հրամաններ տալու սահմանափակումները

1. Պրոբացիայի ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հրամաններ կամ ցուցումներ, որոնք՝

1) հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին.

2) հրամաններ կամ ցուցումներ տվողի կամ կատարողի լիազորությունների սահմաններից դուրս են:

2. Պրոբացիայի ծառայողը սույն հոդվածի 1-ին մասում նշված հրամաններ կամ ցուցումներ ստանալիս պարտավոր է հանձնարարականի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հրաման կամ ցուցում տվողին և նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձանց: Եթե վերադասը (նրա բացակայության դեպքում՝ նրան փոխարինող անձը կամ հանձնարարական տվողը) գրավոր հաստատում է հրամանը կամ ցուցումը, ապա պրոբացիայի ծառայողը պարտավոր է դա կատարել (բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականի

կատարումը կհանգեցնի օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության) և այդ մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին: Պրոբացիայի ծառայողի կողմից այդ հրամանի կամ ցուցումի կատարման համար պատասխանատվությունը կրում է այն գրավոր հաստատած անձը:

3. Ակնհայտ անօրինական հրամանը կամ ցուցումը չկատարելը պրոբացիայի ծառայողին ազատում է հրամանը կամ ցուցումը չկատարելու համար պատասխանատվությունից:

Գ Լ ՈՒ Խ 9

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

Հոդված 33. Պրոբացիայի ծառայությունից ազատելը

1. Պրոբացիայի ծառայողը պրոբացիայի ծառայությունից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

4) կարգապահական խախտումների համար, եթե մեկ տարվա ընթացքում նրա նկատմամբ կիրառվել է երեք և ավելի կարգապահական տույժ, որոնցից գոնե մեկը սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերով սահմանված տույժերից է.

5) սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված տույժը կիրառելու դեպքում.

6) սույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները խախտելու դեպքում.

7) պրոբացիայի ծառայողի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ դատական կարգով պրոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելու դեպքում.

8) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան

140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված նախածննդյան ու հետծննդյան և երեխային խնամելու համար արձակուրդը.

9) սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում.

10) քաղաքական կամ հայեցողական պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.

11) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երեք անգամ չներկայանալը.

12) պրոբացիայի ծառայության պաշտոնը զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը.

13) առողջական վիճակի պատճառով՝ ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.

14) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում:

2. Պրոբացիայի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ:

3. Պրոբացիայի ծառայողին ծառայությունից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

Հոդված 34. Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելու առանձնահատկությունները

1. Պրոբացիայի ծառայողը պաշտոնից ազատման ենթակա չէ սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, եթե առկա է սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 3-14-րդ կետերով նախատեսված՝ պաշտոնից ազատման հիմքերից որևէ մեկը:

2. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով պրոբացիայի ծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից անձնական դիմում ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե այդ դիմումում այլ ժամկետ նախատեսված չէ:

Հոդված 35. Պրոբացիայի ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) ժամանակ

1. Պրոբացիայի ծառայության կառուցվածքային փոփոխությունը (անվանափոխությունը) պրոբացիայի ծառայողին պաշտոնից ազատելու հիմք չէ,

բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են կառուցվածքային փոփոխությամբ (անվանափոխությամբ) պայմանավորված հաստիքների կրճատմամբ: Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ պրոբացիայի ծառայության ավելի բարձր դասային կոչում ունեցող ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ պրոբացիայի ծառայության առավել երկար ստաժ ունեցող ծառայողին:

2. Պրոբացիայի ծառայության կառուցվածքային փոփոխության (անվանափոխության) հետևանքով պրոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած նոր պաշտոնները զբաղեցվում են անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով և ժամկետում նշանակումներ չկատարելու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են սույն օրենքով նախատեսված մրցույթով:

Հոդված 36. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվը

1. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվը վարում է պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմինը:

2. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատված ծառայողները:

3. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում ծառայողի միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը 6 ամիս է, սակայն ոչ ավելի, քան ծառայողի 65 տարին լրանալը:

4. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առաջին 4 ամսվա համար ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային և կոչման համար տրվող դրույքաչափերը, իսկ վերջին երկու ամսվա համար՝ միայն ունեցած դասային կոչման համար նախատեսված դրամական

բավարարում: Եթե պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում ծառայողն անձնական նախաձեռնությամբ ազատվում է պրոբացիայի ծառայությունից, ապա սույն մասում նշված ստաժը և վճարումն իրականացվում են կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակաշրջանին համապատասխան:

5. Սույն օրենքի հիման վրա պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու և ռեզերվից հանելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Գ Լ ՈՒ Խ 10

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հոդված 37. Ծառայության կամ պաշտոնում, դասային կոչման վերականգնումը

Ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված կամ փոխադրված պրոբացիայի ծառայողը ենթակա է իր ծառայությունում կամ պաշտոնում վերականգնման: Անհիմն կամ անօրինական իջեցված դասային կոչումը ենթակա է վերականգնման:

Հոդված 38. Վեճերի լուծման համար դիմելու կարգը և ժամկետները

Ծառայությունում փոխադրելու, պաշտոնը կամ դասային կոչումն իջեցնելու, կարգապահական տույժի ենթարկելու, ծառայությունից ազատելու հետ չհամաձայնվելու դեպքում պրոբացիայի ծառայողը կարող է վերադասության կամ դատական կարգով բողոքարկել այդ հրամանը՝ հրամանին ստորագրությամբ ծանոթանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Հոդված 39. Կոչման շնորհումը և ծառայության ժամկետի հաշվարկը ծառայության վերականգնումից հետո

1. Ծառայությունից անհիմն կամ անօրինական ազատված և հետագայում վերականգնված ծառայողի անընդմեջ ծառայության ստաժում, հերթական դասային կոչում շնորհելու ժամկետում, հավելավճարը հաշվարկելիս և կենսաթոշակ նշանակելիս

հաշվարկվում է նաև անհիմն կամ անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածը:

2. Ծառայությունից անհիմն կամ անօրինական ազատված, դասային կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև նրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում՝ նրան չվճարված դրամական բավարարման չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար: Պրոբացիայի այն ծառայողներին, ովքեր ազատման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ, ստանում են հատուցում, եթե այլ աշխատանքից ստացած ամսական եկամուտը ավելի քիչ է, քան զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պաշտոնային դրույքաչափը: Հատուցումը վճարվում է նրանց՝ ծառայությունում զբաղեցրած վերջին պաշտոնի պաշտոնեական դրույքաչափի և ծառայությունից ազատված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:

Գ Լ ՈՒ Խ 11

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 40. Պրոբացիայի ծառայողի պահանջների կատարման պարտադիր լինելը

1. Պրոբացիայի ծառայողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է բոլոր պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար:

2. Պրոբացիայի ծառայողի օրինական պահանջները չկատարելը կամ նրա պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 41. Պրոբացիայի ծառայողի պատասխանատվությունը, հսկողությունը նրա գործունեության նկատմամբ

1. Պրոբացիայի ծառայողի գործողությունները կարող են բողոքարկվել վերադասության կարգով կամ դատարան:

2. Պրոբացիայի ծառայողը, օրենքին համապատասխան, պատասխանատվություն է կրում իր կատարած զանցանքների և այլ իրավախախտումների համար:

3. Պրոբացիայի ծառայողի կողմից անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Պրոբացիայի ծառայողի կողմից հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունն իրականացվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 12

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 42. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված պաշտոնի անձնագրերը հաստատվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում:

3. Սույն օրենքի 10-12-րդ հոդվածները ուժի մեջ են մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարի հետո:

4. Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը պրոբացիայի ծառայության պաշտոնների անձնագրերն ընդգրկում են նաև աշխատանքային ստաժի և փորձի հետևյալ չափանիշները.

1) պրոբացիայի ծառայության բարձրագույն պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ.

2) պրոբացիայի ծառայության գլխավոր պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

3) պրոբացիայի ծառայության առաջատար պաշտոններ՝ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության «ծառայող քաղաքացին» բառերը փոխարինել «ծառայողը» բառով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «իրավական ակտերից,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 4. Քրեակատարողական ծառայության նպատակը և լիազորությունները

1. Քրեակատարողական ծառայության նպատակն է նպաստել հանրային անվտանգությանը՝ պատիժների կատարման օրինական և անվտանգ համակարգ ապահովելու և հանցագործությունները կանխելու ու նվազեցնելու միջոցով:

2. Քրեակատարողական ծառայությունը՝

1) կատարում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված, դատարանի նշանակած սույն մասով նախատեսված պատիժները (այսուհետ՝ պատիժներ), այդ թվում՝

ա. որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկելու պատիժների հետ միասին որպես լրացուցիչ պատիժ նշանակելու դեպքում.

բ. հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը.

գ. գույքի բռնագրավումը.

դ. կալանքը.

ե. որոշակի ժամկետով ազատազրկումը.

զ. ցմահ ազատազրկումը,

2) կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերում ապահովում է դրա իրականացումը:

3. Քրեակատարողական ծառայությունն իր խնդիրների իրականացման համար կազմակերպում և ապահովում է նաև՝

1) քրեակատարողական հիմնարկների պահպանությունը, ազատությունից զրկելու ձևով պատիժ կրող դատապարտյալներին (այսուհետ՝ դատապարտյալ) և կալանավորվածներին փոխադրելը.

2) քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում օրինականություն, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների՝ իրենց իրավունքներից և ազատություններից օգտվելու երաշխիքները.

3) քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, այդ հիմնարկների անձնակազմերի և այնտեղ գտնվող այլ անձանց անվտանգությունը.

4) կալանավորվածների և դատապարտյալների կյանքի ու առողջության պահպանման, անձնական և մշակութային, կրթական ու հոգևոր զարգացման պատշաճ պայմանները.

5) կալանավորվածների և դատապարտյալների՝ սոցիալական, հոգեբանական աշխատանքներ կազմակերպելը.

6) քրեակատարողական հիմնարկների ու մարմինների նյութատեխնիկական և սոցիալական պայմանների զարգացումը.

7) օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

4. Քրեակատարողական ծառայության՝ ըստ ոլորտների կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 4. Օրենքի 6-ից 8-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը պետական հիմնարկ է, որը գործում է սույն օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 7. Քրեակատարողական հիմնարկները

1. Քրեակատարողական հիմնարկներ են ուղղիչ հիմնարկները և կալանավորվածներին պահելու վայրերը:

2. Քրեակատարողական հիմնարկը պետական հիմնարկ է, որը գործում է սույն օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան:

3. Քրեակատարողական հիմնարկների լրակազմերը, ուղղիչ հիմնարկների տեսակները, ինչպես նաև կառուցվածքները և հաստիքացուցակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Քրեակատարողական հիմնարկները ստեղծում, վերակազմակերպում և դրանց գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 8. Քրեակատարողական ծառայության համակարգում գործող հիմնադրամը

Դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու, դատապարտյալներին և կալանավորվածներին պահելու պայմանները բարելավելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների ու ծառայողների սոցիալական, մշակութային պայմանները բարելավելու նպատակով քրեակատարողական ծառայության համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է

հիմնադրամ, որը գործում է օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:»:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Քրեակատարողական ծառայության պաշտոնները աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, դասակարգվում են ըստ բարձրագույն, գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի: Յուրաքանչյուր խմբի պաշտոնները նույնպես դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր: Նույն աստիճանի պաշտոնները բերված են ստորև՝ նույն տողում՝

1) քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության պետ,

բ. քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ,

գ. քրեակատարողական ծառայության պետի տեղակալ.

2) քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական հիմնարկի պետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետ,

բ. քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժանմունքի պետ.

3) քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի գլխավոր մասնագետ, քրեակատարողական հիմնարկի բաժնի պետ,

բ. քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի բաժանմունքի պետ, քրեակատարողական հիմնարկի տեղամասի պետ,

գ. քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավար,

դ. քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ.

4) քրեակատարողական ծառայության միջին խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի առաջատար մասնագետ,

բ. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի առաջին կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ,

գ. քրեակատարողական հիմնարկի առաջին կարգի մասնագետ.

5) քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի երկրորդ կարգի մասնագետ,

բ. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի երրորդ կարգի մասնագետ,

գ. քրեակատարողական հիմնարկի երկրորդ կարգի մասնագետ,

դ. քրեակատարողական հիմնարկի երրորդ կարգի մասնագետ,

ե. քրեակատարողական հիմնարկի կրտսեր մասնագետ:»:

Հոդված 6. Օրենքի 10-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 28-րդ, 29-րդ, 51-րդ, 51.2-րդ, 51.9-րդ, 51.10-րդ, 51.15-րդ և 51.16-րդ հոդվածներում համապատասխան հոլովաձևերով փոխարինել՝

1) «վարչության պետ» բառերը «ծառայության պետ» բառերով,

2) «վարչություն» բառը «ծառայության կենտրոնական մարմին» բառերով,

3) «վարչության պետի առաջին տեղակալ» բառերը «ծառայության պետի առաջին տեղակալ» բառերով,

4) «վարչության պետի տեղակալ» բառերը «ծառայության պետի տեղակալ» բառերով:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Քրեակատարողական ծառայության պաշտոններին համապատասխանող կոչումները

Քրեակատարողական ծառայության պաշտոնների համար սահմանվում են հետևյալ առավելագույն կոչումները.

1) քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության պետ՝ արդարադատության գեներալ-լեյտենանտ,

բ. քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ, քրեակատարողական ծառայության պետի տեղակալ՝ արդարադատության գեներալ-մայոր.

2) քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական հիմնարկի պետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետ՝ արդարադատության գնդապետ,

բ. քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժանմունքի պետ՝ արդարադատության փոխգնդապետ.

3) քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի գլխավոր մասնագետ, քրեակատարողական հիմնարկի բաժնի պետ, քրեակատարողական հիմնարկի տեղամասի պետ՝ արդարադատության փոխգնդապետ,

բ. քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի բաժանմունքի պետ, քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավար, քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ՝ արդարադատության մայոր.

4) քրեակատարողական ծառայության միջին խմբի պաշտոններ՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի առաջատար մասնագետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի առաջին կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ՝ արդարադատության մայոր.

5) քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի երրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի երրորդ կարգի մասնագետ՝ արդարադատության ավագ ենթասպա,

բ. քրեակատարողական հիմնարկի կրտսեր մասնագետ՝ արդարադատության ենթասպա:»:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) դիմելու պահին նրա 65 տարեկանը չի լրացել:»,

2) 3-րդ մասի «մեկամսյա» բառը փոխարինել «մինչև երկամսյա» բառերով,

3) 3-րդ մասը երրորդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ուսումնական դասընթացների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:»:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Քրեակատարողական ծառայության պետի տեղակալներին, քրեակատարողական հիմնարկների պետերին և քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետերին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:»:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասից հանել «, բացառությամբ բժշկական սպասարկման ոլորտի պաշտոնների» բառերը,

2) 5-րդ մասից հետո լրացնել նոր՝ 5.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«5.1 Քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոնում կարող է նշանակվել նաև միջին մասնագիտական կրթություն ունեցող քաղաքացին: Կրտսեր խմբի պաշտոնում աշխատանքի ընդունելուց նախապատվությունը տրվում է միջին մասնագիտական կրթություն ունեցող քաղաքացուն:»,

3) 8-րդ մասի առաջին պարբերության «այն ծառայողները (այդ թվում՝ նշված մարմինների նախկին ծառայողները)» բառերը փոխարինել «և քրեակատարողական ծառայության խնդիրների ու գործառույթների հետ առնչվող այն ծառայողները (այդ թվում՝ նշված մարմինների և քրեակատարողական ծառայության նախկին ծառայողները)» բառերով,

4) 8-րդ մասի երրորդ պարբերությունից հանել «դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության» բառերը,

5) 9-րդ մասի առաջին պարբերության «ժամանակավոր պաշտոնակատար» բառերից հետո լրացնել «՝ տվյալ պաշտոնի նշանակելու համար սույն հոդվածով սահմանված պայմանների պահպանմամբ» բառերը:

6) 9-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ մասով.

«10. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեակատարողական ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները բավարարող անձանց պաշտոնի նշանակելիս նախապատվությունը տրվում է այն անձին, ով ունի քրեակատարողական մասնագիտություն կամ այլ մասնագիտության քրեակատարողական ուղղվածության մասնագիտացում:»:

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Արտահերթ ատեստավորումն անցկացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կամ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի պետի պատճառաբանված հրամանի հիման վրա:»,

2) 9-րդ մասի առաջին պարբերությունը երկրորդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ատեստավորման հանձնաժողովը պետք է կազմավորվի ներկայացուցչական հետևյալ չափորոշիչներով՝

1) առնվազն մեկ երրորդը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչներ,

2) առնվազն մեկ երրորդը՝ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ,

3) առնվազն մեկ ներկայացուցիչ՝ ուսումնական հաստատություններից:»:

Հոդված 13. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 20. Քրեակատարողական ծառայողի վերապատրաստումը, հատուկ ուսուցումը, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղումը

1. Քրեակատարողական ծառայողի վերապատրաստումը՝ նրա մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով շարունակական ուսուցումն է: Քրեակատարողական ծառայողի հատուկ ուսուցումը՝ նրա օրենքով նախատեսված հրազենի և հատուկ միջոցներ կրելու, պահելու և գործադրելու (մարտական և ծառայողական զենքերից հրաձգություն) հետ կապված գիտելիքների, ունակությունների և հմտությունների կատարելագործման նպատակով շարունակական ուսուցումն է:

2. Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման առնվազն 3 տարին մեկ և հատուկ ուսուցման՝ առնվազն տարին մեկ: Վերապատրաստումն անցկացվում է նաև քրեակատարողական ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման որոշակի պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ քրեակատարողական ծառայողի կամ քրեակատարողական ծառայության պետի նախաձեռնությամբ:

3. Հատուկ ուսուցում անցնելուց հետո քրեակատարողական ծառայողներն իրավունք ունեն սահմանված կարգով կրելու, պահելու և գործադրելու (կիրառելու) հրազեն և օրենքով նախատեսված հատուկ միջոցներ:

4. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքերում քրեակատարողական ծառայողներն իրենց հաշվին անցնում են մինչև երեք ամիս ժամկետով վերապատրաստում:

5. Վերապատրաստում և հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները, ինչպես նաև ուսումնական ծրագրերը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

6. Քրեակատարողական ծառայողների վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Քրեակատարողական ծառայողը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին վերապատրաստվելուց կամ հատուկ ուսուցում անցնելուց հետո մեկ տարուց պակաս ծառայություն անցնելու դեպքում պարտավոր է, ծառայություն չանցած ամիսներին համապատասխան, կատարված ծախսը, 12 ամսվա կտրվածքով բաժանելով յուրաքանչյուր ամսվա վրա, փոխհատուցել իր վերապատրաստման կամ հատուկ ուսուցման համար կատարված ծախսերը՝ բացառությամբ սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 11-րդ կամ 13-րդ կետով սահմանված հիմքով ծառայությունից ազատվելու կամ սահմանված կարգով կենսաթոշակի անցնելու դեպքերում:

7. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով քրեակատարողական ծառայողի գործուղումն իրականացնում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում պահպանվում են քրեակատարողական ծառայողի պաշտոնը, ստաժը և վարձատրությունը:

9. Սույն օրենքի հիման վրա քրեակատարողական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

10. Վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրերը կազմվում են ըստ ծառայության ոլորտի և պաշտոնի խմբի: Վերապատրաստման կամ հատուկ ուսուցման տևողությունը չի կարող պակաս լինել 60 ակադեմիական ժամից:»:

Հոդված 14. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «այլ մարզ ծառայության» բառերը փոխարինել «իր բնակության վայրից 30 կմ-ից ավելի ծառայության այլ վայր» բառերով,

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածով նշված քրեակատարողական ծառայողների ծառայությունը կազմակերպվում է պարտադիր ռոտացիայի սկզբունքով՝ քրեակատարողական

ծառայությունում համապատասխանաբար իրար հաջորդող ծառայության փուլերով: Քրեակատարողական ծառայողների պարտադիր ռոտացիայի ենթակա պաշտոններն են.

1) քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական հիմնարկի պետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետ,

բ. քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժանմունքի պետ:»,

3) չորրորդ մասից հետո լրացնել նոր՝ 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«5. Պարտադիր ռոտացիան իրականացնում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից:»:

Հոդված 15. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասից հանել «՝ քրեակատարողական վարչության պետի առաջարկությամբ» բառերը:

Հոդված 16. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) օրենքով նախատեսված հատուկ միջոցներ և (կամ) հրազեն սահմանված կարգով կրելը, պահելը և գործադրելը (կիրառելը).»:

Հոդված 17. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց» բառերը փոխարինել «օրենքով նախատեսված մարմինների (հանձնաժողովների) և համապատասխան պաշտոնատար անձանց» բառերով:

Հոդված 18. Օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 25. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության լիազորությունները քրեակատարողական ծառայության կազմակերպման գործում

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը քրեակատարողական ծառայության գործունեության ապահովման համար:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝

1) ղեկավարում և վերահսկում է քրեակատարողական ծառայության գործունեությունը.

2) արձակում է քրեակատարողական ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է ցուցումներ.

3) կասեցնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում քրեակատարողական ծառայության պաշտոնատար անձանց և մարմինների (հանձնաժողովների) համապատասխան հրամանները, որոշումներն ու ցուցումները.

4) նշանակում կամ դադարեցնում է ծառայողական քննություններ, փոփոխում է ծառայողական քննություն կատարողին.

5) իրականացնում է պարտականությունների բաշխում քրեակատարողական ծառայության պետի տեղակալների միջև.

6) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել քրեակատարողական ծառայողի լիազորությունները.

7) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 26. Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարը

1. Քրեակատարողական ծառայությունը ղեկավարում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարը, որը՝

1) ղեկավարում է քրեակատարողական ծառայության և քաղաքացիական հատուկ ծառայության գործունեությունը.

2) ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) ընդունում է քրեակատարողական ծառայության և քաղաքացիական հատուկ ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ, անհրաժեշտության դեպքում հայտարարում է տագնապ, այդ թվում՝ ուսումնական տագնապ կամ ուժեղացված ծառայություն.

4) առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ ծառայության կառուցվածքի, իր տեղակալների միջև պարտականությունների բաշխման, քրեակատարողական ծառայության և քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններում նշանակելու թեկնածությունների վերաբերյալ.

5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն է ներկայացնում քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրերը.

6) իր իրավասությունների շրջանակներում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքացիական ծառայողներին.

7) շնորհում է քաղաքացիական հատուկ ծառայության դասային աստիճաններ, բացառությամբ սույն օրենքի 51.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի.

8) միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ քրեակատարողական ծառայողներին և քաղաքացիական ծառայողներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

9) քննարկում է քրեակատարողական ծառայողների և քաղաքացիական ծառայողների նկատմամբ բերված բողոքները.

10) կասեցնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում քրեակատարողական ծառայության պաշտոնատար անձանց հրամանները, որոշումներն ու ցուցումները.

11) նշանակում և անցկացնում է ծառայողական քննություններ.

12) իր իրավասության սահմաններում խրախուսանքի կամ կարգապահական տույժի է ենթարկում քրեակատարողական ծառայողներին, քաղաքացիական ծառայողներին և քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարձու աշխատողներին.

13) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնում նշանակված քրեակատարողական ծառայողի կամ քաղաքացիական ծառայողի լիազորությունները.

14) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2. Քրեակատարողական ծառայության պետը պատասխանատվություն է կրում քրեակատարողական ծառայության խնդիրների իրականացման համար:»:

Հոդված 19. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 1-ին մասին 1-ին կետի «հսկում է» բառերը փոխարինել «վերահսկում է» բառերով,

2) 1-ին մասի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) ստեղծում է համապատասխան պայմաններ կալանավորված անձանց և դատապարտյալների աշխատանքային զբաղվածությունն ապահովելու նպատակով, միաժամանակ՝ քրեակատարողական ծառայության համակարգում գործող հիմնադրամին եռամսյակը մեկ տեղեկատվություն ներկայացնելով աշխատելու ցանկություն ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև նրանց ունեցած մասնագիտությունների կամ մասնագիտական ունակությունների վերաբերյալ,»,

3) 2-րդ մասի «հիմնարկի ղեկավարը» բառերից հետո լրացնել «անմիջականորեն ենթակա է քրեակատարողական ծառայության պետի համապատասխան տեղակալին և» բառերով:

Հոդված 20. Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասում «Քրեակատարողական ծառայողին» բառերից հետո լրացնել «և քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական ծառայողին» բառերով:

Հոդված 21. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) կազմակերպել գործադուլներ կամ մասնակցել դրանց»:

Հոդված 22. Օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 35. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու համար քրեակատարողական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ տեսակները.

1) շնորհակալության հայտարարում.

2) պատվոգրով պարգևատրում.

3) միանվագ դրամական պարգևատրում.

4) հուշանվերով պարգևատրում.

5) արտահերթ կոչման շնորհում.

6) տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր կոչումի շնորհում, եթե կրկնակի լրացել է ունեցած կոչումով ծառայության սահմանված ժամկետը.

7) լրացուցիչ արձակուրդի տրամադրում.

8) կարգապահական տույժի հանում.

9) մեդալով կամ կրծքանշանով պարգևատրում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսանքները քրեակատարողական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել մեկ անգամ ծառայության ամբողջ ընթացքում:

3. Միաժամանակ կարող է կիրառվել խրախուսանքի մի քանի տեսակ:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խրախուսանքները կարող է կիրառել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, ինչպես նաև քրեակատարողական ծառայության պետը: Ընդ որում՝ սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված խրախուսանքները քրեակատարողական ծառայության պետը կարող է կիրառել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի համաձայնությամբ: Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված խրախուսանքը կարող է կիրառել տույժը կիրառած ղեկավարի կամ նրա վերադասի կողմից, իսկ եթե կարգապահական տույժը նշանակել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, ապա նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ կարող է հանել միայն նա:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված խրախուսանքները կարող են կիրառել նաև քրեակատարողական հիմնարկների ղեկավարները:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված մեդալի և կրծքանշանի տեսակները և ձևերը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 9-րդ կետերով նախատեսված խրախուսանքները կիրառվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված համապատասխան միջոցների հաշվին:

Հոդված 36. Քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու դեպքերում քրեակատարողական ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին զգուշացում.

4) պաշտոնի իջեցում.

5) կոչման իջեցում մեկ աստիճանով.

6) ծառայությունից ազատում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել նաև քրեակատարողական ծառայության պետը, ընդ որում՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը քրեակատարողական ծառայության պետը կարող է կիրառել միայն իր կողմից պաշտոնում նշանակված կամ կրտսեր խմբի քրեակատարողական ծառայողների նկատմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը կարող են կիրառել նաև քրեակատարողական հիմնարկների ղեկավարները, ընդ որում՝ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը քրեակատարողական հիմնարկի պետը կարող է կիրառել միայն իր կողմից պաշտոնում նշանակելու իրավունք ունեցող քրեակատարողական ծառայողների նկատմամբ:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը քրեակատարողական ծառայության պետի նկատմամբ չի կիրառվում:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը քրեակատարողական ծառայության պետի կամ առնվազն արդարադատության գեներալ-մայորի կոչում ունեցող ծառայողի նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը քրեակատարողական ծառայության պետի նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությամբ:»:

Հոդված 23. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի առաջին պարբերությունից հանել «նշանակումից վեց ամիս հետո՝» բառերը,

2) 5-րդ մասի «2-րդ մասով» բառերը փոխարինել «4-րդ մասով» բառերով,

3) 6-րդ մասի «3-5 կետերով» բառերը փոխարինել «4-6 կետերով» բառերով:

Հոդված 24. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ կետի «3-րդ կամ 4-րդ» բառերը փոխարինել «4-րդ կամ 5-րդ» բառերով,

2) 7-րդ կետի «5-րդ կետով» բառերը փոխարինել «6-րդ կետով» բառերով,

3) 9-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 25. Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «3-րդ կետով» բառերը փոխարինել «4-րդ կետով» բառերով:

Հոդված 26. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասից հանել «խմբի պաշտոններ զբաղեցնողների համար 50 տարեկանը» բառերը:

Հոդված 27. Օրենքը լրացնել նոր՝ 42.1 հոդվածով, հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 42.1. Քրեակատարողական ծառայության վետերանները

Քրեակատարողական ծառայության վետերաններ են համարվում քրեակատարողական ծառայության այն ծառայողները, ովքեր առնվազն 10 տարի ծառայել են քրեակատարողական ծառայությունում և սահմանված կարգով ստացել են երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք:»:

Հոդված 28. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «3-5-րդ կետերով» բառերը փոխարինել «1-ին և 3-7-րդ կետերով» բառերով:

Հոդված 29. Օրենքի 48-րդ հոդվածի «յուրաքանչյուր դեպքում» բառերից հետո լրացնել «, որը պետք է համաչափ լինի քրեակատարողական հիմնարկում գտնվող անձի կողմից դրսևորած վարքին» բառերով:

Հոդված 30. Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի «մարդու առողջությանը վնաս չպատճառող» բառերը փոխարինել «օրենսդրությամբ նախատեսված» բառերով:

Հոդված 31. Օրենքի 49-րդ հոդվածի 4-րդ մասի, 50-րդ հոդվածի 2-րդ մասի և 51-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «քրեակատարողական ծառայողի» բառերից հետո լրացնել «կամ քրեակատարողական հիմնարկում գտնվող այլ անձի» բառերով:

Հոդված 32. Օրենքի 51.14-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «ատեստավորումն անցկացվում է» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կամ» բառերով,

2) 30-րդ մասից հետո լրացնել նոր՝ 30.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«30.1 Ատեստավորման հանձնաժողովը կազմավորում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը: Ելնելով ծառայության առանձնահատկություններից՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը կարող է ձևավորել մեկից ավելի ատեստավորման հանձնաժողովներ: Ատեստավորման հանձնաժողովը պետք է կազմավորվի ներկայացուցչական հետևյալ չափորոշիչներով՝

1) առնվազն մեկ երրորդը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչներ,

2) առնվազն մեկ երրորդը՝ քրեակատարողական ծառայության ներկայացուցիչներ,

3) առնվազն մեկ ներկայացուցիչ՝ ուսումնական հաստատություններից:»:

Հոդված 33. Օրենքի 51.25-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել նոր՝ 1.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1) պատվոգրով պարգևատրում»:

Հոդված 34. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 12-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պրոբացիայի ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է տարբեր գործոններով, որոնք ստորև կներկայացվեն կարգավորող հարաբերությունների խմբերով: Այդ խմբերից առաջինը, որ կարելի է նախանշել, դա այն է, որ այս օրենքների ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է պատժից ազատման կառուցակարգերի բարեփոխման և հստակեցման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով այն, որ առկա են թե

անհստակություններ տարբեր իրավական ակտերի միջև, և թե կառուցակարգերի կատարելագործման և ժամանակի պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտություն:

Օրենքով սահմանված պատժից ազատելու հիմքերից որոշները խնդրահարույց են: Այդ իսկ պատճառով, քննարկվող նախագծերով անդրադարձ է կատարվում պատժից ազատման ոչ բոլոր ինստիտուտներին: Նախագծերով փոփոխվում և լրացվում են իրավահարաբերություններ, որոնք վերաբերում են՝

ա) պատժից պայմանական վաղաժամկետ ազատելուն, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելուն,

բ) ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելուն,

գ) պատիժը պայմանականորեն չկիրառելուն,

դ) պատիժը կրելը հետաձգելուն,

ե) ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց որոշ խնդիրներին:

Երկրորդ խումբը՝ օրենքների ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է կալանավորված անձանց և դատապարտյալների իրավական կարգավիճակին վերաբերող հարաբերությունների հստակեցման անհրաժեշտությամբ:

Երրորդ խումբը՝ օրենքների ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է առանձին իրավահարաբերությունների զարգացման, բովանդակային կամ խմբագրական կատարելագործման համար, ինչպիսիք են. անչափահասների կալանքի տակ գտնվելու պայմանների, հանցագործությունները դասակարգելու, ինչպես նաև առանձին այլ իրավահարաբերություններ:

Չորրորդ խումբը՝ կապված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով հաստատված մոտեցումներին համապատասխանեցնելու, ինչպես նաև երեք իրավական ակտերի (ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեակատարողական օրենսգրքեր) միջև առկա հակասությունները վերացնելու անհրաժեշտության հետ:

Հինգերորդ խումբը՝ կապված է պրոբացիայի ծառայության ներդրման հետ:

Վեցերորդ խումբ՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները հստակեցնելու և կատարելագործելու հետ:

Յոթերորդ խումբ՝ ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերի առանձին հոդվածները կատարելագործելու նպատակով (խնդիրները մանրամասն՝ ստորև):

1. **Իրավական ակտերի անհրաժեշտությունը /նպատակը/.**

<u>Առաջին խումբ.</u>

ա) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանվում է որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման կարգը: Սահմանելով այն, ՀՀ օրենսդրությունն ամեն դեպքում, չի սահմանում այնպիսի կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան ամբողջությամբ ապահովել մարդու (դատապարտյալի) իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև այն լիարժեք չէ միջազգային և եվրոպական չափանիշներին համապատասխանելու համար: Մասնավորապես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: Այսինքն, դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման համար որպես նախապայման է նշված կարգապահական տույժ չունենալու հանգամանքը: Կամ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրվում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օրենքին հակասելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ ընդունվելու դեպքերի:

Նշված դրույթները հակասում են Եվրոպայի խորհրդի «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» Rec (2003)22 հանձնարարականի դրույթներին և «ՄԱԿ-ի Ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն

չափորոշիչ կանոններին» (Տոկիոյի կանոններ), հնարավորություն չեն տալիս նշանակված պատժին ծառայելու և հասնելու օրենքով սահմանված՝ անձի ուղղման, հանցագործությունների կանխարգելման նպատակներին, ինչպես նաև սահմանափակում են անձի, իր խախտված իրավունքները պաշտպանելու և վերականգնելու սահմանադրական իրավունքը: Ուստի, նշված նախագծերով ներկայացվող փոփոխությունները և լրացումները պայմանավորված են անձի սահմանադրական իրավունքներն իրականացնելու և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտները միջազգային սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն, եթե անձը հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը խոչընդոտում է պատիժը կրելուն, ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարած հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն, ծանր հիվանդությամբ հիվանդացած անձանց պատիժը հետագայում կրելուց ազատելու հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության ծանրությունը, դատապարտյալի անձնավորությունը և այլ հանգամանքներ: Երկու նորմերում կան անորոշություններ, որոնք ուշադրության կարիք ունեն: Այսինքն, հիվանդության բնույթը դատարանը հաշվի է առնում առաջինի դեպքում, իսկ երկրորդի դեպքում՝ ոչ: Իհարկե, կարելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 432-րդ հոդվածի երրորդ մասում նշված «այլ հանգամանքներ» արտահայտությունը հասկանալ այնպես, որ այն կարող է ներառել դատապարտյալին պատժից ազատելուն առնչվող ցանկացած հանգամանք, ներառյալ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «հիվանդության բնույթը»: Սակայն ցանկալի է, որ դատարանի կողմից նշված հարցի լուծման չափանիշներն առավել հստակ ձևակերպում ունենան, ինչը կբարձրացնի ընթացակարգի որոշակիությունը, դրա հետ մեկտեղ՝ նաև այլ ներքին հակասություններ:

գ) ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելիս հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: Եթե պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների առումով օրենսդրական կարգավորումները հստակ են, ապա հանցավորի անձը բնութագրելու տեսանկյունից առաջանում են որոշակի խնդիրներ, այն է. արդյոք դատարանը դա պետք է կատարի ինքնուրույն՝ առանց որևէ մասնագիտական կառույցի եզրակացության, և եթե այո, ապա ինչ չափանիշներով: ՀՀ քրեական օրենսգրքի ներկայիս կարգավորումները թույլ են տալիս ասելու, որ տվյալ խնդիրը դատարանը լուծում է ինքնուրույն և առանց որևէ չափանիշների ու պատճառաբանության: Դա այն դեպքում, երբ օրենքը որևէ սահմանափակում չի նախատեսում նաև հանցագործությունների ծանրությամբ պայմանավորված, այսինքն՝ դատապարտյալի (օրենքն օգտագործում է «դատապարտյալ» բառը, որը պետք է փոխարինել «անձը» բառով, քանի որ պրոցեսուալ իմաստով դատարանը պատիժը պայմանականորեն չի կիրառում ամբաստանյալի նկատմամբ, երբ դեռ բացակայում է ուժի մեջ մտած դատական ակտը) նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը տեսականորեն կարող է կիրառվել նույնիսկ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու դեպքում (չնայած ենթադրվում է, որ հնարավոր են դեպքեր, երբ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառի հանցագործության այնպիսի մասնակիցների նկատմամբ, ովքեր ծանր հանցագործություններում ունեցել են երկրորդական դեր և առկա են հիմքեր ենթադրելու, որ անձը կարող է ուղղվել առանց պատիժ կրելու):

դ) Առկա են անհստակություններ ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեակատարողական օրենսգրքերի միջև՝ դրույթներ, որոնք վերաբերում են պատիժը կատարելու հետաձգելու ինստիտուտին: Այս կապակցությամբ անհրաժեշտ են կատարել տվյալ իրավահարաբերությունները հստակեցնող փոփոխություններ:

<u>Երկրորդ խումբ.</u>

ա) Իրավահարաբերության սուբյեկտների վարքագծի, գործողությունների ազատության շրջանակները որոշվում է սահմանադրական երկու հիմնական կարգախոսով՝ «թույլատվում է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով» և «թույլատրվում

է այն, ինչ սահմանված է օրենքով»: Նշված կարգախոսներն ունեն սահմանադրական ամրագրում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, իսկ 42-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Նշված սահմանադրական նորմերից հստակ բխում է, որ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց համար կիրառելի է «թույլատրելի է այն ամենը ինչ սահմանված է օրենքով», իսկ պաշտոնատար անձ չհանդիսացող մարդու համար՝ «թույլատրվում է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով»: Հասկանալի է, որ առաջին սկզբունքը սահմանափակում է պաշտոնատար անձի գործողությունների ազատությունը, եթե վարքագծի որևէ տարբերակ սահմանված չէ օրենքով, ապա պաշտոնատար անձն իրավասու չէ կատարել տվյալ գործողությունը, մինչդեռ երկրորդ կարգախոսը մարդուն տալիս է ազատության առավել լայն շրջանակ. մարդը կարող է կատարել ցանկացած գործողություն, եթե դա արգելված չէ օրենքով կամ չի խախտում է այլ մարդկանց իրավունքները և ազատությունները: Արդյոք դատապարտյալների համար գործում է «թույլատրվում է այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով» սահմանադրական սկզբունքը: ՄԱԿ-ի 1990թ. դեկտեմբերի 14-ի «Ազատազրկվածների հետ վարվելու հիմնական սկզբունքների» 5-րդ կետում նշվում է, որ ազատազրկվածներն օգտվում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում և դրանց կից արձանագրություններում, ինչպես նաև ՄԱԿ-ի այլ պակտերում արտացոլված մարդու բոլոր իրավունքներից և հիմնական ազատություններից: Անհրաժեշտ է այս սկզբունքների ամրագրումը կամ դրանց համապատասխանեցումը ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի, ինչպես նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի առումով:

բ) Ըստ ՄԱԿ-ի 1955թ. Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 32-րդ կետի 1-ին ենթակետի՝ խիստ բանտարկության կամ սննդի կրճատում նախատեսող պատիժները կարելի է նշանակել միայն բժշկի կողմից բանտարկյալին հետազոտելուց հետո, որը պետք է գրավոր հաստատի, թե բանտարկյալն ի վիճակի է այդօրինակ պատիժ կրելու: Համաձայն Եվրոպական բանտային կանոնների 38.1-րդ կետի՝ որպես պատիժ կարգապահական մեկուսարան տեղավորելը, ինչպես նաև ցանկացած այլ պատիժ, որը կարող է բացասական ազդել բանտարկյալի ֆիզիկական կամ հոգեկան առողջության վրա, կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե բժիշկը բանտարկյալի բժշկական հետազոտումից հետո գրավոր կհավաստի, որ տվյալ բանտարկյալի առողջական վիճակը կարող է թույլ տալ նման պատժի կրում: Պետք է նշել, որ ո՛չ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը և ո՛չ էլ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը նման կարգավորում չեն պարունակում: Անհրաժեշտ է նշված իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ միջազգային այս սկզբունքներն ամրագրելու նպատակով:

գ) Ընդհանրապես միևնույն արարքի համար կրկին անգամ պատասխանատվության ենթարկելու արգելքը ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում առավելապես կապվում է այն անձին պատասխանատվության ենթարկելու հետ, ում դեմ ներկայացված է քրեական մեղադրանք: Խոսքն, ըստ էության, վերաբերում է non bis in idem երաշխիքին, որն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 1-ին մասում. «Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավազորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան»: Նմանատիպ պահանջ է բովանդակում նաև ՀՀ Սահմանադրությունը. «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար» (22-րդ հոդվածի 7-րդ մաս): Դրա հետ միասին, գրեթե չի քննարկվում այն հարցը, թե արդյոք կարող է անազատության մեջ պահվող անձը

քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից կրկին անգամ ենթարկվել պատասխանատվության նույն կարգապահական խախտումը թույլ տալու համար (քննարկվող սկզբունքի թե՛ սահմանադրական, թե՛ կոնվենցիոն ձևակերպումները նման հիմք չեն տալիս):

Այս հարցը որոշակի իրավական կարգավորման է ենթարկված միջազգային-իրավական փաստաթղթերով: Մասնավորապես, համաձայն ՄԱԿ-ի 1955թ. Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 30-րդ կետի 1-ին ենթակետի՝ ոչ մի բանտարկյալ չի կարող կրկնակի պատժի ենթարկվել միևնույն զանցանքի համար: Եվրոպական վերանայված բանտային կանոնների 63-րդ կետում արձանագրված է, որ բանտարկյալը չպետք է պատժվի երկրորդ անգամ միևնույն իրավախախտումը կատարելու համար: Նույնպիսի պահանջ է սահմանված նաև 1987թ. Եվրոպական բանտային կանոնների 36.1-րդ կետով:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի՝ նշված հարցի կապակցությամբ ունեցած կարգավորումը թերի է: Այս հարցի՝ ներպետական օրենսդրությամբ հստակ ամրագրելու անհրաժեշտության մասին խոսվում է Եվրոպական վերանայված բանտային կանոնների 63-րդ կետի վերաբերյալ Եվրոպական կոմիտեի մեկնաբանություններում: Անհրաժեշտ է հստակեցնել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները:

դ) Եվրոպական վերանայված բանտային կանոնները կարևոր պահանջներ են բովանդակում՝ կապված կարգապահական խախտում թույլ տված բանտարկյալների իրավունքների ապահովման հետ: Մասնավորապես, ըստ այդ կանոնների 59-րդ կետի՝ կարգապահական խախտումների մեջ մեղադրվող բանտարկյալները պետք է՝

- իրենց հասկանալի լեզվով անհապաղ և մանրամասն տեղեկացվեն իրենց նկատմամբ առաջ քաշված մեղադրանքների մասին.
- ունենան բավարար ժամանակ և հնարավորություններ իրենց պաշտպանությունը նախապատրաստելու համար.

- հնարավորություն ունենալ պաշտպանել իրենց անձամբ կամ իրավաբանական օգնության դիմելու միջոցով, եթե դա են պահանջում արդարադատության շահերը.
- հնարավորություն ունենալ պահանջել վկաների ներկայություն և ունենալ նրանց հարցաքննելու կամ իրենց անունից հարցաքննելու հնարավորություն.
- ունենան թարգմանչի անվճար օգնության հնարավորություն, եթե նրանք չեն հասկանում լեզուն, որով անցկացվում է դատավարությունը կամ չեն կարող խոսել այդ լեզվով:

Ըստ ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 30-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ «Ոչ մի բանտարկյալ չի կարող պատիժ կրել, եթե նախապես չի տեղեկացվել այն զանցանքի մասին, որով իրեն մեղադրում են և չի ստացել իրեն արդարացնելու պատշաճ հնարավորություն: Իրավասու իշխանություններն այդ բնույթի յուրաքանչյուր գործ պետք է մանրազնին քննության ենթարկեն: Այնտեղ, ուր դա անհրաժեշտ է և իրագործելի, բանտարկյալին պետք է թարգմանչի միջոցով սեփական պաշտպանությամբ հանդես գալու հնարավորություն տալ»: Նմանատիպ պահանջ սահմանում է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1988 թվականի դեկտեմբերի 9-ի 43/173 բանաձևով հաստատված «Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի» 30-րդ սկզբունքը:

Նշված պահանջներն, ըստ էության, հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրերը: Եվրոպական բանտային կանոնները, փաստորեն, պետություններից ուղղակիորեն պահանջում են դրանք կիրառել նաև անազատության մեջ պահվող անձանց կողմից թույլ տրված կարգապահական խախտումների համար տույժեր կիրառելիս:

Անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ օրենսդրության՝ դատապարտյալների կամ կալանավորվածների կողմից թույլ տված կարգապահական խախտումների վերաբերյալ վարույթների քննության ընթացքում արդար դատաքննության իրավունքի որևէ բաղադրատարրի կիրառման հնարավորության նախատեսումը: Այսպես, Եվրոպական վերանայված բանտային կանոնների 57-րդ կետը պահանջում է ներպետական

օրենսդրությամբ կարգապահական խախտումների վերաբերյալ լսումների անցկացման համար հստակ ընթացակարգի սահմանում: Ավելին, ըստ նշված կանոնների 57-րդ կետի վերաբերյալ Հանցագործությունների հիմնահարցերի եվրոպական կոմիտեի մեկնաբանությունների՝ այդ կանոնները պետք է հստակ սահմանված լինեն և, բանտարկյալները պետք է նախապես ծանոթ լինեն այդ կանոններին: Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության ՄԱԿ-ի կանոնները նույնպես պահանջում են կարգապահական պատասխանատվության ենթարկելու հստակ ընթացակարգերի, ենթադրյալ խախտման մասին նախապես պատշաճ կերպով տեղեկացվելու, սեփական պաշտպանությունը կազմակերպելու պատշաճ հնարավորության սահմանում (68-70-րդ կետեր):

Եվրոպական բանտային կանոնների 36.3-րդ կետի համաձայն՝ բանտարկյալը կարող է պատասխանատվության ենթարկվել պայմանով, որ նրան նախապես հայտնվի իրեն վերագրվող իրավախախտման մասին և հնարավորություն տրվի հանդես գալ իր պաշտպանությամբ:

ե) Ինչպես ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 18-րդ հոդվածում, այնպես էլ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածում խոսվում է պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի և կալանավորվածներին պահելու վայրերի վարչակազմերի միայն գործողությունները բողոքարկելու մասին: Նման կարգավորումը անարդարացիորեն նեղացնում է դատապարտյալների ու կալանավորված անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակները, որն անհրաժեշտ է հստակեցնել:

<u>Երրորդ խումբ.</u>

ա) Նախագծերով նախատեսվում է նաև հստակեցնել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրման պայմաններին վերաբերող իրավահարաբերություններ, քանի որ դրանք կարգավորող, մասնավորապես անջատ պահելու սկզբունքների վերաբերող նորմերում առկա են որոշակի թերկարգավորվածություններ, անհստակություններ և ոչ նպատակահարմար լուծումներ:

բ) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի առաջին մասով սահմանվում են դատապարտյալների՝ անջատ պահելու սկզբունքները, մասնավորապես,

նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ անչափահասները անջատ են պահվում չափահասներից, բացառությամբ օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի: Իսկ նշված իրավանորմը նախատեսում է, որ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է միևնույն ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը, եթե բացասական վարքագիծ չի դրսևորում: Նման հնարավորություն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ անչափահաս կալանավորված անձանց համար, որը նպատակահարմար է ունենալ:

գ) Ներկայումս ՀՀ քրեակատարողական օրենսգրքով կալանք պատժատեսակի դատապարտված անձին օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված անձնական բացառիկ հանգամանքների դեպքում կարող է տրամադրվել միայն կարճատև տեսակցություն կամ թույլատրվել օգտվել հեռախոսակապից, մինչդեռ սոցիալ-հոգեբանական տեսանկյունից լուրջ խնդիր է առաջանում, երբ կալանք պատժատեսակի դատապարտված անձը պատժի կրման ընթացքում կորցնում է մերձավոր ազգականին և չի կարողանում մասնակցել նրա հուղարկավորությանը: Նման իրավունք վերապահված է միայն որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց, սակայն ավելի մեղմ՝ կալանք պատժատեսակով դատապարտված անձին անձնական բացառիկ հանգամանքների դեպքում կարճաժամկետ մեկնում նախատեսված չէ:

դ) ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածով սահմանվում է հանցագործությունների տեսակները, համաձայն որի՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ չնայած հանցագործությունների դասակարգման հիմքում արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը որպես չափանիշ դրված լինելուն, դասակարգումն իրականացվում է ըստ հանցագործության համար Օրենսգրքով սահմանված պատժաչափի՝ սահմանելով հանցագործությունների ծանրության աստիճանները, հիմք ընդունելով Օրենսգրքի Հատուկ մասով սահմանված կոնկրետ հանցագործության համար նախատեսված առավելագույն պատժաչափը:

Այս մոտեցումն առաջին հայացքից պարզ է: Թվում է, թե Օրենսգրքով տրված է համապատասխան կարգավորում, որն ընդունված է նաև մի շարք այլ երկրների քրեական օրենսգրքերի կողմից: Սակայն տեսական և գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ տրված կարգավորումը տարընթերցումների տեղիք է տալիս և հանգեցնում որոշ խնդիրների:

Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Օրենսդրական հստակ կարգավորման բացակայության արդյունքում, օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործության հանցափորձի համար նշանակված պատիժը շատ հաճախ համապատասխանում է ավելի նվազ ծանրության աստիճանի համար սահմանված պատժաչափին, սակայն հիմք ընդունելով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը, գործնականում այն երբեմն որակվում է որպես առանձնապես ծանր հանցագործություն:

Քրեական քաղաքականությանն անդրադառնալիս, ներկայումս պետք է նաև հաշվի առնել տնտեսական արդյունավետության գործոնը՝ երկիրը չունի անսահմանափակ քանակությամբ ռեսուրսներ, որպեսզի հանցափորձի և ավարտված հանցագործության համար նշանակի նույն խստության պատիժ: Բացի այդ, հանցափորձի կամ հանցագործության նախապատրաստության, ծանրության աստիճանի հստակ սահմանումը (նույն ձևով հիմք ընդունելով Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված պատժաչափը), ոչ միայն կհստակեցնի կոնկրետ հանցագործության տեսակը՝ դրա նախապատրաստության կամ փորձի դեպքում, այլ նաև հնարավորություն կտա լուծելու նման դեպքերում դատապարտված անձի նկատմամբ պատժի նշանակման, պատժի կրման և պատժից ազատման հետ կապված մի շարք խնդիրներ: Ավելին, հարցի օրենսդրական կարգավորումը բխում է

նաև Օրենսգրքի տրամաբանությունից: Այսպես. եթե Օրենսգրքով հստակ սահմանվում են հանցագործության տեսակները՝ հիմք ընդունելով կոնկրետ պատժի չափը, ապա հանցափորձը և հանցագործության նախապատրաստությունը պետք է հստակ դասակարգվեն ևս նույն ձևով՝ հենց պատժաչափից էլ ելնելով, քանի որ Օրենսգրքի 65-րդ հոդվածով հստակ սահմանվում է պատժաչափ (ավելի շուտ՝ այն հաշվարկելու սկզբունքը) թե հանցափորձի, և թե հանցագործության նախապատրաստության համար:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրների օրենսդրությամբ, տրված է խնդրի նույնանման՝ ոչ հստակ կարգավորում, ինչպես ՀՀ քրեական օրենսգրքով է: Մի շարք երկրների օրենսդրությամբ էլ, չավարտված հանցագործությունը որակվում է որպես նույն ծանրության հանցագործություն՝ ինչ որ ավարտված հանցագործությունը:

Օրենսդրական քննարկվող առաջարկով հանցափորձի կամ հանցագործության նախապատրաստության ծանրության աստիճանի հստակ սահմանումը բխում է նաև այսօր երկրում իրականացվող բարեփոխումներից և հանդիսանում է ևս մեկ քայլ՝ դեպի քրեական համակարգում մարդասիրության սկզբունքի ամրապնդումը:

Ի վերջո, հանցափորձի և հանցագործության նախապատրաստության օրենսդրորեն հստակ դասակարգումն անհրաժեշտ է նաև Օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի (արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով. քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է ամբողջականությունն ու լիարժեքությունն ապահովելու նպատակով:

<u>Չորրորդ խումբ.</u>

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ներկայումս կարգավորում է հարաբերություններ, որոնք վերաբերում են պատժի կատարման փուլին: Կարգավորման առարկայի տեսանկյունից գուցեև ավելի նպատակահարմար կլիներ, որ այդ հարաբերությունները կարգավորվեին ՀՀ քրեակատարողական օրենսգրքով: Ասվածն իր վառ արտացոլումն է գտել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով և նախագծով, որով հաստատված մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով էլ պայմանավորված է իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Տվյալ խմբում առկա հարաբերությունները վերաբերում են նաև այն հանգամանքին, որ անհրաժեշտ է երեք իրավական ակտերի (ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեակատարողական օրենսգրքեր) միջև առկա հակասությունները վերացնել:

<u>Հինգերորդ խումբ.</u>

ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկում որպես քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջնային միջոցառում սահմանված են քրեակատարողական համակարգի բարեփոխումները, որտեղ ամրագրված է նաև ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող պրոբացիայի պետական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը:

<u>Վեցերորդ խումբ.</u>

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. նախ՝ քրեակատարողական ծառայության գործունեության ընթացքում ծագել են հարցեր, որոնց կանոնակարգումները պետք է կատարելագործել կամ նպատակահարմարությունից ելնելով՝ փոփոխել, երկրորդ՝ կան հարաբերություններ, որոնք կանոնակարգված չեն՝ անհրաժեշտ է դրանք կանոնակարգել, երրորդ՝ անհրաժեշտ են կատարել խմբագրական կամ հստակեցման բնույթի փոփոխումներ կամ լրացումներ: Մասնավորապես (չանդրադառնալով օրենքում տեղ գտած խմբագրական և հստակեցման բնույթ ունեցող, ինչպես նաև նպատակահարմարությունից բխող որոշ դրույթների), նախագծի 3-րդ հոդված. ոչ սկզբունքային փոփոխություններով հստակեցվել են ծառայության՝ օրենքով նախատեսված այնպիսի կարգավորումներ, որոնք վերաբերում են ծառայության նպատակին, խնդիրներին և գործառույթներին, ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններին, քրեակատարողական հիմնարկներին և ծառայության համակարգում գործող հիմնադրամին:

Նախագծի 4-րդ հոդված. այս հոդվածով նախատեսվող նորամուծությունն այն է, որ ինչպես քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի, այնպես էլ քրեակատարողական հիմնարկների կառուցվածքը և հաստիքացուցակները, հիմնարկների դեպքում նաև դրանց տեսակները և լրակազմերը պետք է հաստատի Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նախագծի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներ. քրեակատարողական ծառայության ընդհանուր նկարագրով անհրաժեշտ է սահմանել, թե որ պաշտոնատար անձն է ղեկավարում ծառայությունը: Օրենքի «վարչության պետ», «վարչություն» բառերը համապատասխանաբար, համապատասխան հոլովաձևերով «ծառայության պետ» և «ծառայության կենտրոնական մարմին» բառերով փոխարինելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ օրենքով նախատեսված խնդիրների իրականացումն ապահովում է քրեակատարողական ծառայությունը: Իսկ Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քրեակատարողական ծառայության և քաղաքացիական հատուկ ծառայության գործունեությունը ղեկավարում և հսկում է քրեակատարողական վարչության պետը: Այսինքն՝ քրեակատարողական վարչության պետը միաժամանակ հանդիսանում է քրեակատարողական ծառայության պետ: Տեղին է տվյալ պաշտոնի անվանումը պայմանավորել ոչ թե ծառայության ստորաբաժանման (կենտրոնական մարմնի) անվանումով, այլ բուն ծառայությամբ: Նշվածը հանգեցնում է «քրեակատարողական վարչության պետի տեղակալ» բառերը «քրեակատարողական ծառայության պետի տեղակալ» բառերով փոխարինելու անհրաժեշտությանը: Օրենքի 6-րդ հոդվածով տրվում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի հասկացությունը, միևնույն ժամանակ նշված հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն, այսինքն՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինն ունի երկու անվանում՝ «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին» և «քրեակատարողական վարչություն»: Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին երկու անվանում տալու անհրաժեշտություն չկա (անկախ վերջինիս կազմակերպաիրավական ձևից), ուստի ներկայացվող նախագծով

անհրաժեշտ է «քրեակատարողական վարչություն» բառերը փոխարինել «քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին» բառերով:

Նախագծի 8-րդ հոդված. աշխատանքային համապատասխան փորձ չունենալու դեպքում ծառայությունում պաշտոնի նշանակելիս որոշակի խնդիրներ են առաջանում, երբ համապատասխան դասընթացները կազմակերպվում են մեկ ամսով, ուստի նպատակահարմար է դրանք աստիճանաբար (ֆինանսական միջոցների հնարավորության ավելացմանը զուգահեռ) երկարաձգել մինչև երկու ամիս՝ այն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Բացի այդ, ծառայությունում լինում են թափուր պաշտոններ, որոնց կապակցությամբ ներկայացվում են ոչ մեկ դիմում: Իսկ այդ իրավիճակներում ընտրություն կատարելու անհրաժեշտություն է ծագում, որի դեպքում էլ մրցույթի միջոցով այն իրականացնելն ավելի արդյունավետ կլինի:

Նախագծի 9-րդ և 15-րդ հոդվածներ. նախատեսվում է ընդլայնել ՀՀ արդարադատության նախարարի լիազորություններն այն հաշվով, որպեսզի վերջինս, քրեակատարողական ծառայության պետի տեղակալներին և քրեակատարողական հիմնարկների պետերին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու լիազորությունից բացի, իրավասու լինի նաև (այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ) պաշտոնի նշանակել և պաշտոնից ազատել քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետերին: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի պետ և քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի բաժնի պետ պաշտոնները նույն աստիճանի են: Տվյալ հանգամանքը ոչ միայն նպատակահարմար է, այլ նաև անհրաժեշտ, որպեսզի որոշ չափով մեծանա նաև հնարավորությունները Օրենքի 21-րդ հոդվածով սահմանված ռոտացիան իրականացնելիս:

Նախագծի 10-րդ հոդված. տվյալ հոդվածով նախատեսված հիմնական նորամուծությունն այն է, որ աստիճանական փոփոխություն է կատարվում բանտային համակարգի կադրային քաղաքականության մեջ, այսինքն՝ դա ԵԽ անդամակցությամբ պայմանավորված համակարգի ապառազմականացման շարունակության դրսևորումն է (նախորդ մեծ փոփոխությունը քաղաքացիական հատուկ ծառայողների ինստիտուտի՝ դեռևս շարունակվող ներդրումն էր): Ասվածը վերաբերում է նրան, որ բանտային

համակարգերի ներկայիս միջազգային զարգացումների համաձայն, այդ համակարգերը պետք է ունենան ավելի շատ սոցիալական, քան ուժային բնույթ:

Նախագծի 12-րդ հոդված. Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արտահերթ ատեստավորումն անցկացվում է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի պետի պատճառաբանված հրամանի հիման վրա: նախագծով նման իրավասություն վերապահվել է նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին, քանի որ իրականացվող վերահսկողության (ներառյալ՝ ուսումնասիրություններ և ծառայողական քննություններ) արդյունքում ստեղծվում են իրավիճակներ, երբ կասկածելի են լինում ծառայողների մասնագիտական գիտելիքներն ու ունակությունները: Նման դեպքերում նպատակահարմար է լինում նաև արտահերթ ատեստավորումն անցկացնելը: Տվյալ հոդվածով սահմանվել են նաև ատեստավորման հանձնաժողովի կազմավորման չափորոշիչներ:

Նախագծի 13-րդ հոդված. տվյալ հոդվածով կարգավորվել են մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով քրեակատարողական ծառայողի գործուղումների դեպքերում առաջացող՝ Օրենքով չկարգավորված հարաբերությունները:

Նախագծի 14-րդ հոդված. տվյալ հոդվածով էլ ավելի են հստակեցվել քրեակատարողական ծառայողների ռոտացիային վերաբերող հարաբերությունները, քանի որ դրանք թերկարգավորված էին:

Նախագծի 7-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներ. սկզբունքային փոփոխություններ չկատարելով հստակեցվել են նախարարի, ծառայության կենտրոնական մարմնի և քրեակատարողական հիմնարկի պետի, ինչպես նաև ծառայողների լիազորությունները:

Նախագծի 22-րդ և 23-րդ հոդվածներ. անհրաժեշտ է հստակեցնել տվյալ՝ ծառայողների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժերի կիրառմանը վերաբերող կարգավորումները՝ հստակեցնելով նաև դրանք կիրառող պաշտոնատար անձանց լիազորությունները: Միաժամանակ, սահմանվել են խրախուսանքի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ պատվոգրով պարգևատրումը, մեդալով պարգևատրումը (կրծքանշանով պարգևատրումը Օրենքով առկա է), լրացուցիչ արձակուրդի տրամադրումը: Սահմանվել է նաև կարգապահական այնպիսի տույժի միջոցն, ինչպիսինն է՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին զգուշացումը:

Նախագծի 27-րդ հոդված. ծառայության գրավչության տեսանկյունից անհրաժեշտ է նաև համապատասխան վերաբերմունք ցուցաբերել նաև ծառայությունից արձակված անձանց նկատմամբ, որի փորձն էլ կատարված է տվյալ հոդվածով նախատեսված դրույթով (չնայած նրան, որ դրույթն ունի դեկլարատիվ բնույթ):

Նախագծի 32-րդ հոդված. հստակեցվել են ատեստավորման հանձնաժողովի կազմավորման գործընթացը՝ որոշակի չափով սկզբունքներ և չափորոշիչներ սահմանելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի համար:

Նախագծի 33-րդ հոդված. քաղաքացիական հատուկ ծառայողի համար նախատեսված խրախուսանքի միջոցների ցանկը մասամբ (ամբողջությամբ չի համապատասխանեցվել, քանի որ մյուս տեսակները նպատակահարմար է նախատեսել միայն քրեակատարողական ծառայողներին) համապատասխանեցվել է քրեակատարողական ծառայողի համար Օրենքով սահմանված խրախուսանքի միջոցների ցանկին:

<u>Յոթերորդ խումբ.</u>

ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ և 54-րդ հոդվածների կանոնակարգումների փոփոխումները պայմանավորված է ինչպես պրոբացիայի ծառայության ներդրմամբ (պատիժը կատարող մարմնի սահմանմամբ), այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր 23.04.2013 թվականի ՍԴՈ-1082 որոշմամբ ճանաչվելու հանգամանքով: Անհրաժեշտ է տվյալ հակասությունը վերացնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 354-րդ հոդվածի փոփոխությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նշված հոդվածով պատասխանատվություն չի նախատեսվում քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու թույլտվություն ունեցող դատապարտյալների տեղաշարժման թույլտվության ժամկետի ավարտից հետո քրեակատարողական հիմնարկ չվերադառնալու և դրանով իսկ պատժի կրումից խուսափելու համար, ինչպես նաև այն կալանավորված անձի նկատմամբ, ով ստացել է կարճաժամկետ մեկնման իրավունք և ժամկետը լրանալուց հետո խուսափում է քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց: Այս հարաբերությունների իրավական տվյալ ակտով կարգավորումը անհրաժեշտ է և նպատակահարմար:

ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածում լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ քրեակատարողական հիմնարկի կամ ձերբակալվածներին պահելու վայրի սահմաններից դուրս պահախմբի կողմից հսկվող վայրից կամ պահախմբով փոխադրելիս կամ ուղեկցելիս ազատազրկման դատապարտված, կալանավորված կամ ձերբակալված անձի կողմից հնարավոր փախուստի դեպքի համար պատասխանատվություն չի նախատեսվում:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

<u>Առաջին խումբ.</u>

ա) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանվում է, որ որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման կարգը, համաձայն որի պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: Ըստ էության, դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննելու կարևոր նախապայման է (բացի օրենքով հստակ սահմանված պատժի մասը լրանալը) դատապարտյալի կարգապահական տույժ չունենալու հանգամանքը: Այս մոտեցումը ժամանակավրեպ է և հնարավորություն չի տալիս ամբողջությամբ և նպատակային իրականացնել պատժի առաջնային նպատակներից մեկի՝ անձի ուղղմանը խթանելով:

Ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը որոշելիս առավել կարևորություն պետք է տրվի պատիժը կատարող հիմնարկում դատապարտյալի դրսևորած վարքին: Դրսևորած վարքի բնույթից կախված՝ որոշ դատապարտյալներ կարող են նույնիսկ չներկայացվել պայմանական վաղաժամկետ ազատման: Այսինքն, որոշումներ կայացնելիս Հայաստանում առավել կարևորվում են պայմանական վաղաժամկետ ազատման հարցը

որոշելուց առաջ տեղի ունեցած հանգամանքները: Այդ վարքը գնահատելիս հաշվի է առնվում կարգապահական տույժի առկայությունը կամ բացակայությունը, դատապարտյալի հետ կատարված աշխատանքները և դրանց ներգործությունը, որի հիման վրա քրեակատարողական հիմնարկի վարչակազմը նաև կարծիք է հայտնում դատապարտյալի ուղղված լինելու աստիճանի վերաբերյալ: Անցյալում տեղի ունեցած հանգամանքները՝ դատապարտյալի վարքը, նրա հետ կատարված աշխատանքները և դրանց արդյունքները կարող են հիմք հանդիսանալ դատապարտյալի հետագա վարքի վերաբերյալ կանխատեսումներ անելու համար: Սակայն կանխատեսումներ անելիս միայն կարգապահական տույժի առկայության կամ բացակայության հանգամանքը բավարար չէ, քանի որ կարգապահական խախտումները կարող են ունենալ վտանգավորության տարբեր աստիճաններ և դրդապատճառներ: Պետք է կարևորվի ոչ թե տույժ ունենալու հանգամանքը, այլ այն, թե ինչ պայմաններում, և ինչ արարքի համար է դատապարտյալը ենթարկվել կարգապահական տույժի:

Մարդասիրության սկզբունքին համապատասխան, օրենքը դատարանին հնարավորություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինել, այն անձանց, ովքեր իրենց դրսևորած և կանխատեսելիք վարքագծով թույլ են տալիս եզրակացնելու, որ հետագա ուղղման գործընթացը կարող են անցնել ոչ ազատազրկման ձևով պատժի կրմամբ: Սակայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը չպետք է պայմանավորել միայն դատապարտյալի ուղղման աստիճանի հետ, այլ դատապարտյալի՝ հասարակություն վերադառնալու և օրինապահ կյանքով ապրելու պատրաստվածության աստիճանով:

Եվրոպայի Խորհրդի «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» Rec (2003)22 հանձնարարականի 18-րդ կետի համաձայն դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը քննելիս պետք է որպես չափանիշ վերցնել դատապարտյալի անձնային հատկանիշները, սոցիալական, տնտեսական իրավիճակը, ինչպես նաև վերականգնողական ծրագրերին մասնակցելու հնարավորությունը:

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ

ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը: Անկախ հանձնաժողովի հավանությունը ստանալու դեպքում միայն հիմնարկի վարչակազմը միջնորդագիրը կարող է ներկայացնել դատարան: Անկախ հանձնաժողովի՝ հավանություն չտալու մասին որոշումն ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննարկում է հավանություն չստանալու որոշումը կայացվելուց երեք ամիս անց:

Միևնույն ժամանակ, նշված հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օրենքին հակասելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ ընդունվելու դեպքերի: Այսպիսով, դատապարտյալը, որի նկատմամբ կարող է կիրառվել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով ինստիտուտը, զրկված է սահմանադրորեն ամրագրված՝ իր խախտված իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Այսինքն, դատապարտյալը, ստանալով հիմնարկի վարչակազմի միջնորդագրին հավանություն չտալու մասին անկախ հանձնաժողովի որոշումը, զրկված է այն բողոքարկելու իրավունքից և ստիպված է սպասել ևս 3 ամիս, մինչև կրկին անգամ կքննարկվի իրեն պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը:

Բացի այդ, անկախ հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իրավունքի սահմանափակումը հակասում է նաև Եվրոպայի Խորհրդի «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» Rec (2003)22 հանձնարարականի դրույթներին և «ՄԱԿ-ի Ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն

չափորոշիչ կանոններին» (Տոկիոյի կանոններ)։ Մասնավորապես, ԵԽ «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» հանձնարարականի 33-րդ կետի համաձայն դատապարտյալը պետք է իրավունք ունենա ընդունված որոշումները, ինչպես նաև ընթացակարգային խախտումները բողոքարկել վերադաս անկախ որոշում կայացնող մարմին։

Նույն դրույթն ամրագրված է նաև «ՄԱԿ-ի Ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն չափորոշիչ կանոններով» (3.6 կետ)։

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխության արդյունքում հստակ տարբերակում կդրվի քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ անկախ հանձնաժողովներին ներկայացվող միջնորդագրերի միջև։

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է էականորեն կատարելագործել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտի կիրառման հնարավորությունը՝ համապատասխան իրավական կարգավորումները զուգահեռ պահելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու կառուցակարգին։ Մասնավորապես, ի տարբերություն ներկայիս կարգավորման՝ ընդլայնվում են դրա կիրառման շրջանակները՝ ներառելով բոլոր ծանրության հանցագործությունները կատարած անձանց, բացառությամբ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց (այստեղ նկատի է առնվում այն, որ, չնայած այս կառուցակարգի համեմատ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի ավելի բարվոք լինելուն, պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ինստիտուտի կիրառումից առժամանակ անց բացակայում է որևէ իրավական հետևանքը)։ Ուստի այս փոփոխությունների արդյունքում էականորեն կընդլայնվի ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածով սահմանված կառուցակարգի գործնական կիրառման հնարավորությունը, այդ թվում՝ ի համեմատ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման։ Բացի այդ, նախագծով յուրաքանչյուր ծանրության հանցագործության համար նախատեսվում է ազատազրկման ձևով պատիժ կրելու փաստացի ժամկետ, որը կրելուց հետո միայն դատապարտյալի նկատմամբ

կարող է կիրառվել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտը: Հստակ սահմանվում է նաև պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս տուգանքի և հանրային աշխատանքների հաշվարկման կարգը:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախ վերացվում են պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս տուգանքի և հանրային աշխատանքների նշանակման հնարավորության հետ կապված անհստակությունները և դրանք նախատեսող հոդվածներում (51-րդ և 54-րդ հոդվածներ) հատուկ նշվում է ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածի կիրառման ժամանակ դրանց նշանակման հնարավորությունը: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածում կատարվում են որոշակի ճշգրտումներ տվյալ պատժատեսակի նշանակման և կատարման, ինչպես նաև համապատասխան սուբյեկտների կապակցությամբ:

բ) Համաձայն օրենսդրության, հիվանդ դատապարտյալին պատժից ազատելու հիմքը տվյալ դատապարտյալի մոտ պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդության առկայությունն է: Օրենսդրությունից բխում է, որ ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ ամրագրված ծանր հիվանդություններից յուրաքանչյուրն ինքնին խոչընդոտ են հանդիսանում պատիժը կրելու հարցում: Այսինքն, եթե դատապարտյալի ախտորոշումը համապատասխանում է թիվ 825-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկում սահմանված որևէ հիվանդությանը, ապա այն հարցը, թե արդյոք տվյալ հիվանդությունը խոչընդոտում է դատապարտյալի կողմից պատիժը կրելուն չի կարող առանձին քննարկման առարկա դառնալ որևէ մարմնի կողմից: Մինչդեռ, դատապարտյալին ծանր հիվանդության պատճառով պատժից ազատելու վերաբերյալ դատարան միջնորդություն ներկայացնելիս անհրաժեշտ է անշեղորեն ղեկավարվել ՄԻԵԴ-ի՝ անձի ազատության սահմանափակմանը վերաբերող չափանիշներով: ՄԻԵԴ-ը («Խուդոբինն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով, բողոք թիվ 59696/00, 2006թ. հոկտեմբերի 26-ի որոշում) անդրադառնալով անձին ազատությունից զրկելու չափանիշների հարցին նշել է, որ բացառիկ դեպքերում, երբ ազատազրկվածի առողջական վիճակը բացարձակապես անհամատեղելի է նրան անազատության մեջ պահելու հետ, Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 3-րդ հոդվածը պահանջում է ազատ արձակել նման անձին որոշակի պայմաններով: Առկա են երեք տարրեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել անձին անազատության մեջ պահելու պայմանների և նրա առողջական վիճակի համապատասխանության հարցը քննարկելիս (տես՝ Եվրոպական դատարանի որոշում «Մուիզելն ընդդեմ Ֆրանսիայի» գործով, բողոք թիվ 67263/01)՝ անձի առողջական վիճակը, ազատազրկման վայրերում ցույց տրվող բժշկական օգնության և սպասարկման պատշաճ բնույթը, ազատության սահմանափակման կիրառման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով անձի առողջական վիճակը:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակի պատճառով պատժից ազատելու ընդհանուր պարտավորություն: Այն ավելի շուտ պետական իշխանության մարմիններին պարտավորեցնում է ապահովել ազատազրկվածների ֆիզիկական բարեկեցությունը: ՄԻԵԴ-ը միաժամանակ ընդունում է այն փաստը, որ ազատազրկման վայրերում ցույց տրվող բժշկական օգնությունը ոչ միշտ կարող է լինել այն մակարդակի, ինչպես մնացած բնակչության համար նախատեսված լավագույն բժշկական հաստատություններում (տես՝ Եվրոպական դատարանի Մեծ Պալատի որոշում «Կուդլան ընդդեմ Լեհաստանի» գործով, բողոք թիվ 30210/96): Վերոգրյալից հետևում է, որ անձի ազատության սահմանափակման (տվյալ դեպքում պատիժը հետագայում կրելուց նրան ազատելու) չափանիշների հարցում ինչպես ՀՀ ազգային օրենսդրությունը, այնպես էլ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը առավելապես կարևորում են նախ անձի առողջական վիճակը (քրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդություն, որը համապատասխանում է թիվ 825-ն որոշման «Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների» թիվ 2 հավելվածում նշված ցանկին), այնուհետև այն, թե որքանով է հնարավոր ազատազրկման վայրերում ապահովել պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում (հիվանդություն, որն արգելք է հանդիսանում պատիժը կրելուն), երրորդ՝ պատիժը հետագայում կրելուց դատապարտյալին ազատելու նպատակահարմարության հարցը:

Այսպիսով, անհրաժեշտ է վերանայել ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան դրույթներն այն առումով, որ ծանր հիվանդության պատճառով պատժից ազատելիս դատարանի հայեցողությունը բացարձակ չլինի,

վերջինս ղեկավարվի հստակ չափանիշներով, մասնավորապես հաշվի առնելով դատապարտյալի հիվանդության բնույթը, անազատության պայմաններում ցույց տրվող բժշկական օգնության և սպասարկման բնույթը, ինչպես նաև տվյալ դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը: Միաժամանակ, անհարժեշտ է նաև հստակ սահմանել դատական քննության սեղմ ժամկետներ:

Մեկ այլ խնդիր ևս. ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն, 79-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված անձինք առողջանալու դեպքում կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի, եթե չեն անցել համապատասխան վաղեմության ժամկետները: Ակնհայտ է, որ հիվանդության պատճառով պատժից ազատված անձն արդեն իսկ ենթարկվել է քրեական պատասխանատվության և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ: Ստացվում է, որ հիվանդության պատճառով պատժից ազատվելուց հետո առողջանալու դեպքում նույն անձը կրկին անգամ կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի՝ նույն արարքի համար: Մինչդեռ նույն արարքի համար կրկին դատապարտվելն արգելված է ՀՀ քրեական օրենսգրքով, ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայով, ինչպես նաև Քաղաքական և Քաղաքացիական Իրավունքների Միջազգային Դաշնագրով: Ակնհայտ է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի երրորդ մասում օրենսդիրը նկատի է ունեցել արդեն իսկ նշանակված պատժի չկրած մասի կրելը շարունակելը: Սակայն տվյալ նորմի նման շարադրանքի դեպքում առկա է տարամեկնաբանման հնարավորություն: Անհրաժեշտ է տարամեկնաբանություններից խուսափելու նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի տվյալ դրույթը հստակեցնել:

գ) Դատարանի՝ ինքնուրույն և առանց որևէ չափանիշների ու պատճառաբանության պատիժը պայմանականորեն չկիրառելու կապակցությամբ օրենքով սահմանված ամբողջական հայեցողությունն իր մեջ պարունակում է սխալականության ռիսկեր: Եվ համապատասխան երաշխիք ամրագրելու նպատակով առաջարկվում է. նախ, սահմանել պատիժը պայմանականորեն չկիրառելու համապատասխան չափանիշներ՝ նույնը ինչ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում, և երկրորդ. մինչ դատարանի կողմից համապատասխան եզրահանգման գալը, դատարան ներկայացվի մասնագիտական կառույցի կողմից

կազմված եզրակացություն: Սահմանված կարգի համաձայն, ստեղծվելիք «Պրոբացիա» ՊՈԱԿ-ի (անվանումը՝ պայմանական) կողմից կկազմվի անձի բնութագիրը, որում մասնագետի կողմից կտրվեն համապատասխան չափորոշիչների առկայության (առկա է, թե ոչ) և դրսևորման աստիճանները (անբավարար, չեզոք, բավարար):

Ներկայացված գնահատականների հիմքով էլ դատարանի կողմից կլուծվի պատիժը պայմանականորեն չկիրառելու (բավարարի դեպքում) կամ այդ ինստիտուտի կիրառումից հրաժարվելու (անբավարարի դեպքում) հարցը:

դ) Որոնք են ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերի միջև առկա անհստակությունները, որոնք վերաբերում են պատիժը կատարելու հետաձգելու ինստիտուտին: Նախ, ՀՀ քրեական օրենսգիրքը (նյութական իրավունքը) չի նախատեսել դատական որոշման կատարման հետաձգման ինստիտուտ ծանր հիվանդության հիմքով (այն միայն հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց համար է նախատեսված՝ 78-րդ հոդված), այնինչ նման ինստիտուտ նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (պրոցեսուալ իրավունքով): Երկրորդ, ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածը նախատեսում է պատժի կատարման հետաձգում մինչև երեք տարեկան երեխա ունեցող ցանկացած սեռի անձի համար, այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը նախատեսում է նման հնարավորություն միայն կնոջ համար: Երրորդ, ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածը նախատեսում է պատժի կատարման հետաձգում մինչև երեք տարեկան մեկ երեխա ունեցողի համար, այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը նախատեսում է նման հնարավորություն երեխաներ (մեկից ավելի) ունենալու դեպքում: Այս իմաստով համապատասխան փոփոխության է ենթակա նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 117-րդ հոդվածը:

<u>Երկրորդ խումբ.</u>

ա) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են դատապարտյալի իրավունքները, իսկ 2-րդ մասում նշված է, որ դատապարտյալին կարող են վերապահվել օրենքով սահմանված այլ իրավունքներ: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի՝ կալանավորված անձանց իրավունքները սահմանող 13-րդ հոդվածը նույնպես նախատեսում է կալանավորված

անձանց վերապահվում են օրենքով սահմանված այլ իրավունքներ (3-րդ մաս, նույնը վերաբերում է նաև ձերբակալվածներին)։ Նշված իրավանորմերից բխում է, որ դատապարտյալների կամ կալանավորված անձանց թույլատրելի վարքագիծը կարող է սահմանվել միայն օրենքով։ Այլ կերպ ասած, դատապարտյալները և կալանավորված անձինք օժտված են այնպիսի իրավունքներով, որոնք սահմանված են օրենքով։ Այդ անձանց իրավական կարգավիճակի հիմքում նշված սկզբունքի ներդրմամբ նենգափոխվում է դատապարտյալի՝ որպես ոչ պաշտոնատար անձ հանդիսացող մարդու սահմանադրական կարգավիճակի փիլիսոփայությունը։ Ազատությունից զրկված անձին, վերապահելով բացառապես օրենքով սահմանված վարքագծի հնարավորություն, նշանակում է, որ դատապարտյալը կամ կալանավորված անձն ազատության շրջանակների ուրվագծման տեսանկյունից հավասարեցվում է պետական մարմինների պաշտոնատար անձանց։ Դրան հակառակ, նշված իրավական ակտերով պետք է հստակ սահմանվեն այն արգելքները և պարտականությունները, որոնք համարվում են դատապարտյալի կամ կալանավորված անձի ակտիվ և պասիվ վարքագծի պարտադիր չափ, իսկ այդ արգելքների և պարտականությունների շրջանակներից դուրս դատապարտյալի վարքագծի հիմքում պետք է ընկած լինի՝ «թույլատրվում է այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով» սկզբունքը։

բ) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, որն ամրագրում է պատժախցում կալանավորված անձանց պահելու առանձնահատկությունները, միայն սահմանում է, որ պատժախցում պահվող կալանավորված անձինք գտնվում են բժշկական հսկողության ներքո։ Նույն հոդվածի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրի պետն իրավունք ունի հետաձգել պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատել տույժի ժամկետը կամ վաղաժամկետ ազատել տույժի կրումից՝ բժշկական եզրակացության հիման վրա կամ այլ հիմքով։ Իսկ ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի՝ դատապարտյալին պատժախցում պահելու պայմանները կանոնակարգող 98-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պատժախցում պահվող դատապարտյալը գտնվում է բժշկական հսկողության ներքո և պատժախցում պահվող դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցը կարող է վաղաժամկետ դադարեցվել բժշկի եզրակացության հիման վրա։ Ըստ ԱՆ կանոնակարգի 225-րդ կետի՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ

հիմնարկի պետն իրավունք ունի հետաձգելու պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատելու պատժախցում գտնվելու ժամանակահատվածը կամ ժամկետից շուտ կալանավորված անձին կամ դատապարտյալին ազատելու տույժը կրելուց՝ հաշվի առնելով հիվանդության հետ կապված պատժախցում գտնվելու անթույլատրելիության վերաբերյալ բժշկի եզրակացությունը: Կարգապահական մեկուսարանի պետին կալանքի դատապարտված զինծառայողին պատժախուց տեղափոխելու հետ կապված նույնպիսի կարգավորում է բովանդակում նաև ՊՆ կանոնակարգի 109-րդ կետը: Առաջին հայացքից մեջբերված իրավանորմերը կարծես լուծում են բժշկական եզրակացության հետ կապված խնդիրը: Սակայն դրանց մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի առավել լիարժեք ապահովման տեսանկյունից չեն համապատասխանում վերը հիշատակված միջազգային չափանիշներին: Բանն այն է, որ պատժախուց տեղավորելու ձևով տույժի կիրառումը ի վերջո ձևակերպված է որպես կալանավորվածներին պահելու վայրի, ուղղիչ հիմնարկի կամ կարգապահական մեկուսարանի պետի իրավունք և ոչ թե պարտականություն: Այսինքն՝ գործնականում կարող է լինել այնպիսի իրավիճակ, երբ բժիշկը պատժախուց տեղավորելու հետ կապված տա բացասական եզրակացություն, սակայն կալանավորված անձը կամ դատապարտյալը հիմնարկի վարչակազմի ղեկավարի որոշմամբ ամեն դեպքում հայտնվեն պատժախցում: Ընդ որում, խնդիրն ավելի է բարդանում այն պատճառով, որ եթե հետաձգված ժամանակամիջոցում կալանավորված անձը կամ դատապարտյալը նոր խախտում թույլ չտան, ապա նրանք տույժի կրումից կարող են ազատվել միայն կալանավորվածներին պահելու վայրի, ուղղիչ հիմնարկի կամ կարգապահական մեկուսարանի պետի որոշմամբ: Ինչպես երևում է, պատժախուց տեղավորելը՝ որպես տույժի միջոց, ՀՀ օրենսդրությամբ պարտադիր կախվածության մեջ չի դրվում բժշկի եզրակացությունից: Վերջինս նշանակություն կարող է ունենալ միայն այդ տույժի միջոցի կրման ընթացքում:

Ուստի, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը և ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը անհրաժեշտ է փոփոխել և դրանցում նախատեսել դրույթներ, այն մասին, որ բժշկի բացասական եզրակացության դեպքում կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ ոչ մի պարագայում չկիրառվի որպես տույժի միջոց պատժախուց տեղավորելը:

գ) «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածն ամրագրել է մեկ խախտման համար մեկից ավելի տույժի միջոցներ նշանակելու արգելքը: Նույնպիսի արգելք է բովանդակում նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասը: Որոշ գիտնականներ նշում են, որ նման կարգավորումը նշանակում է, որ դատապարտյալը կամ կալանավորվածը չեն կարող կրկին անգամ կարգապահական պատասխանատվության ենթարկվել միևնույն խախտման համար, սակայն նշված մեկնաբանությամբ առաջնորդվելն այնքան էլ արդարացված չէ, քանի որ միևնույն արարքի համար կրկին անգամ պատասխանատվության ենթարկելու արգելքը վերաբերում է հենց արարքին, այլ ոչ թե այն կատարելու համար կիրառվող ներգործության միջոցին: Ըստ այդմ, ՀՀ օրենսդրության հիշյալ ձևակերպումը պետք է վերաբերի մեկ խախտման համար համակցված տույժեր նշանակելու արգելքին:

Ասվածը հիմնավորվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածին վերաբերող նախադեպային որոշումներով, որտեղ շեշտը դրվում է արարքի (non bis in idem արտահայտության դեպքում խոսքը վերաբերում է “idem” եզրին) և ոչ թե պատժի տարրի վրա: Նշված հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանն իր դիրքորոշումը, մասնավորապես, արտահայտել է Սերգեյ Զոլոտուխինն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռում: Ընդ որում, այդ վճռում իր մոտեցումները շարադրելիս Եվրոպական դատարանն առաջնորդվել է այն գաղափարով որ «... Կոնվենցիան պետք է մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ դրանով սահմանված իրավունքները լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե տեսական և պատրանքային: Կոնվենցիան կենդանի օրգանիզմ է, որը պետք է մեկնաբանվի ժամանակակից պայմանների լույսի ներքո: ... Միջազգային պայմանագրի դրույթները, ինչպիսին Կոնվենցիան է, պետք է մեկնաբանվեն դրա օբյեկտի և նպատակի լույսի ներքո, և արդյունավետության սկզբունքին համապատասխան» (Case of Sergey Zolotukhin v. Russia, 10.02.2009, կետ 80): Այնուհետև, համաձայն նույն գործով վճռի 82-րդ կետի՝ «... 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածը պետք է ընկալվի որպես քրեական հետապնդման կամ դատավարության արգելք այնպիսի երկրորդ «հանցանքի» համար, որը բխում է նույնական կամ էականորեն նույնական փաստերից»:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ օրենսդրությամբ պարտադիր պետք է նախատեսվեն նորմեր, որոնք արգելում են միևնույն արարքի համար կալանավորված անձին կամ դատապարտյալին կրկին անգամ պատասխանատվության ենթարկելը:

դ) Պետք է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածը ընդհանուր ձևակերպմամբ միայն սահմանում է դատապարտյալի իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, դատարանի նշանակած պատժի կատարման կարգի և պայմանների, դրանց փոփոխությունների, առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև միջազգային համապատասխան փաստաթղթերի մասին մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալու, ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունքները: Նույնը սահմանված է կալանավորված անձանց համար «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով:

Քննարկվող խնդրին իր նախադեպային որոշումներում անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Քեմփբելը և Ֆելլն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով դատարանը, խոսելով նշված բանտարկյալների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցների մասին, նշել է. «... արդար դատաքննության երաշխիքները այն տեսքով, որ սահմանված են Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից են ... արդարադատությունը չի կարող կարող ավարտվել բանտի դարպասների հետևում: Այդ պատճառով համապատասխան դեպքերում որևէ հիմք չկա բանտարկյալներին զրկելու 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից» (Case of Campbell and Fell v. the United Kingdom, 28.06.1984, կետ 69):

ե) Դատապարտյալների ու կալանավորված անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակները չնեղացնելու նպատակով անհրաժեշտ է տվյալ հարաբերությունները կարգավորող համապատասխան իրավանորմերը ենթարկել փոփոխության և կալանավորված անձանց ու դատապարտյալներին հնարավորություն տալ բողոքարկելու ոչ միայն նշված հիմնարկների վարչակազմերի գործողությունները, այլ նաև վերջիններիս անգործությունն ու որոշումները: Կարծում ենք, առաջարկվող փոփոխությունը կնպաստի

անազատության մեջ գտնվող անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի առավել լիարժեք իրացմանը:

Երրորդ խումբ.

ա) Նախատեսվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի առաջին մասով և 109-րդ հոդվածով անչափահաս դատապարտյալների համար նախատեսված անջատ պահելու սկզբունքները նախատեսել նաև անչափահաս կալանավորված անձանց համար: Նկատի է առնվում այն, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով սահմանվի դրույթ, որի համաձայն անչափահաս կալանավորված անձը մինչև կալանավորման ժամկետը լրանալը պահվի կալանավորվածներին պահելու միևնույն վայրում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը, եթե բացասական վարքագիծ չի դրսևորում: Ինչ վերաբերում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածում կատարվող փոփոխությանը, ապա դրա նպատակն է որպեսզի կալանք պատժատեսակով դատապարտված անձին անձնական բացառիկ հանգամանքների դեպքում կարճաժամկետ մեկնում տրամադրվի, որը նախատեսված չէ: Սակայն, նշված իրավունքը վերապահված է միայն որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց:

բ) Օրենսգրքի 33-րդ հոդվածը տալիս է ավարտված և չավարտված հանցագործությունների սահմանումը, ըստ որի.

1. *Ավարտված հանցագործություն է համարվում այն արարքը, որը պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:*

2. Չավարտված հանցագործություն են համարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար պատասխանատվությունը վրա է հասնում Օրենսգրքի հատուկ մասի նույն հոդվածով, ինչ ավարտված հանցագործության համար՝ հղում կատարելով Օրենսգրքի 34-րդ (հանցափորձը) կամ 35-րդ (հանցագործության նախապատրաստությունը) հոդվածին:

Այսպիսով, Օրենսգրքով հանցագործության փորձի կամ նախապատրաստության համար արարքը որակելիս նշվում է Օրենսգրքի հատուկ մասի համապատասխան

հոդվածը՝ հղում անելով Օրենսգրքի 34-րդ կամ 35-րդ հոդվածին (օրինակ՝ 34-104՝ սպանության փորձ):

Բացի այդ, Օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանվում է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելը, ըստ որի՝ հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը (Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մաս): Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Ըստ էության, Օրենսգիրքը հստակ սահմանում է հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատժաչափերը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանվում է հանցագործությունների տեսակները, համաձայն որի՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ, չնայած հանցագործությունների դասակարգման հիմքում արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը որպես չափանիշ դրված լինելուն, դասակարգումն իրականացվում է նաև ըստ հանցագործության համար Օրենսգրքով սահմանված պատժաչափի, սահմանելով հանցագործությունների ծանրության աստիճանները, հիմք է ընդունվում Օրենսգրքի Հատուկ մասով սահմանված կոնկրետ հանցագործության համար նախատեսված առավելագույն պատժաչափը:

Այս մոտեցումն առաջին հայացքից պարզ է: Թվում է, թե Օրենսգրքով տրված է հստակ կարգավորում: Սակայն տեսական և գործնական վերլուծությունները վեր են հանում առկա որոշ խնդիրներ: Մասնավորապես, օրենսդիրն ուղղակի ամրագրել է, որ հանցագործությունների դասակարգումը ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարվում է «ըստ բնույթի և հանրության

համար վտանգավորության աստիճանի»: Դրանից ելնելով, պետք է հավաստել, որ յուրաքանչյուր հանցագործություն նշված տեսակներից որևէ մեկին դասելը պետք է իրականացվի հատկապես հաշվի առնելով ոտնձգության հասարակական վտանգավորությունը, դրա բնույթն ու աստիճանը: Մինչդեռ Օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր տեսակի միակ տարբերիչ հատկանիշ է Օրենսգրքով նախատեսված պատժի առավելագույն ժամկետը: Արդյունքում, օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործության հանցափորձի համար նշանակված պատիժը շատ հաճախ համապատասխանում է ավելի նվազ ծանրության աստիճանի համար սահմանված պատժաչափին, սակայն հիմք ընդունելով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը միայն, գործնականում այն որակվում է որպես առանձնապես ծանր հանցագործություն՝ օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության հետևանքով: Այս բացը հանգեցնում է նաև գործնական մի շարք խնդիրների:

Մասնավորապես՝ նշանակված պատժի կրման համար ուղղիչ հիմնարկի տեսակը, որով էլ պայմանավորված, պատժի կրման կարգն ու պայմանները, որոշելիս, հիմք է հանդիսանում հանցագործության ծանրության աստիճանը (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 100-րդ հոդված): Հետևաբար, օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործության փորձի համար առաջին անգամ դատապարտված անձը, պատիժը կրում է ոչ թե կիսաբաց, այլ կիսափակ ուղղիչ հիմնարկում: Դրանով իսկ՝ պատժի անհատականացման սկզբունքի կիրառումը գործնականում դառնում է խաթարված:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը ևս անմիջականորեն կապված են հանցագործության ծանրության աստիճանի հետ (Օրենսգրքի 76-77-րդ հոդվածներ): Այսինքն, առանձնապես ծանր հանցագործության փորձի համար դատապարտված անձը, պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար, պետք է կրի նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը, իսկ ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

Վերը նշված և առկա մի շարք այլ խնդիրներ լուծելու անհրաժեշտությունից ելնելով, նպատակահարմար է կատարել ներկայացված օրենսդրական լրացումը, որը թույլ կտա հստակեցնել չավարտված հանցագործությունների համար հանցագործության դասակարգումը և լուծել առկա խնդիրները:

Չորրորդ խումբ.

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգով հաստատված մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրը. քրեական դատավարության օրենսգրքով պետք է կարգավորվեն իրավահարաբերություններ ներառյալ դատական ակտի ընդունումը, այլ ոչ թե դատավճռի ուժի մեջ մեջ մտնելուց հետո եղած իրավահարաբերությունները: Այս կապակցությամբ, այն հոդվածները, որոնք վերաբերում են պատժի կատարման փուլին, ներառվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքում՝ ունենալով իրենց կատարելագործումները: Տվյալ լուծումների իրականացման համար իրավական թե տեսական, և թե գործնական առումով որևէ խոչընդոտող հանգամանք չկա (նկատի է առնվում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի՝ ավելի ուշ ընդունման և գործողության մեջ դնելու հանգամանքը):

Տվյալ խմբում առկա հարաբերությունները վերաբերում են նաև այն հանգամանքին, որ անհրաժեշտ է երեք իրավական ակտերի (ՀՀ քրեական, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեակատարողական օրենսգրքեր) միջև առկա հակասությունները վերացնել, օրինակ՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարաբերությունները կարգավորող հարցում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասին, կամ պատիժը կրելը հետաձգելու հարաբերությունները կարգավորող հարցում ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 1-ին մասին:

Հինգերորդ խումբ.

Թարգմանաբար «պրոբացիա» նշանակում է փորձաշրջան կամ փորձություն: Պրոբացիա հասկացության բնորոշման վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ. որոշ հեղինակներ, գտնում են, որ պրոբացիայի էությունը կայանում է նրանում, որ դատավճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցվում է, փոխարենը հանցագործություն կատարած անձը ազատություն է ստանում՝ պրոբացիայի մարմնի

վերահսկողության և հատուկ պայմանների առկայությամբ[1]: Մեկ այլ աղբյուրի համաձայն[2]՝ պրոբացիան հատուկ ընտրված հանցագործություն կատարած անձանց հետ աշխատանքներ տանելու մեթոդ է, որը բնութագրվում է պատժի պայմանական կասեցմամբ և իրավախախտի նկատմամբ վերահսկողության սահմանմամբ: Ըստ մեկ այլ բնորոշման՝ պրոբացիան լայն հասկացություն է, պատժի յուրահատուկ մեթոդ, որը հիմնվում է սոցիալ-մանկավարժական սկզբունքների վրա և բնութագրվում է հանցագործություն կատարած անձի նկատմամբ վերահսկողություն սահմանելու և օգնություն տրամադրելու համակցությամբ: Հաջորդ մոտեցման համաձայն՝ պրոբացիան ազատ համակարգ է, որը կիրառվում է այն իրավախախտների նկատմամբ, ովքեր առանձնանում են իրենց քրեական անհատականությամբ, կատարված հանցանքի բնույթով, գործող համակարգի նկատմամբ ունեցած վերաբերմունքով (Cartledge et al. 1981, in Harris 1995: 3-4):

Այդուհանդերձ, պրոբացիա արտահայտության իրավական բացատրությունը տրվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից անդամ-պետություններին ուղղված թիվ 2010/1 հանձնարարականով[3] (այսուհետ նաև՝ ԵԽ հանձնարարական), համաձայն որի. «Պրոբացիան վերաբերում է օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը հասարակությունում: Այն ներառում է մի շարք գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն»՝ օրենքով սահմանված կարգով նշանակված ցանկացած մարմին, ով իրականացնում է վերը թվարկած գործառույթները, ձևավորում է պրոբացիայի ծառայությունը:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գոյություն չունի պրոբացիայի առանձին ծառայություն, սակայն վերջինիս բնորոշ մի շարք գործառույթներ իրականացնում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժինը (իր տարածքային

[1] Handbook on Probation Services, UN Interregional Crime and Justice Research Institute
[2] United Nations 1951: 4
[3] Recommandation CM/Rec(2010)1 du Comité des Ministres aux Etats membres sur les règles du Conseil de l'Europe relatives à la probation

բաժանմունքներով) և սոցիալական, հոգեբանական ու իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները՝ քրեակատարողական հիմնարկներում:

Արդեն ավելի, քան 10 տարի է, ինչ Հայաստանի Հանրապետության ազատազրկման վայրերում գործում են սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների (այսուհետ նաև՝ ՍՀԻ աշխատանքներ) իրականացման ստորաբաժանումները: ՀՀ քրեակատարողական համակարգում այս ծառայությունների ձևավորումը սերտորեն կապված է համակարգում տեղի ունեցող արմատական փոփոխությունների և վերակազմավորումների հետ, որոնք սկսվել են դեռևս 1999 թվականից: Նշված բարեփոխումների արդյունքում նոր ծառայությունում որպես կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծվեցին սոցիալ-հոգեբանական վերականգնման բաժինները: Չնայած այս միավորները ստեղծվեցին նախկին քաղաքական դաստիարակչական բաժինների աշխատակազմի հենքի վրա՝ շարունակելով նախկին որոշ գործառույթների իրականացումը, սակայն գաղափարական առումով դրանք նոր կազմավորումներ էին, քանի որ հիմնված էին այլ գիտատեսական հենքի վրա և ներառեցին տվյալ ոլորտի համար սկզբունքորեն նոր մասնագիտություններ: Այսպիսով, նորաստեղծ միավորները ստեղծման սկզբնական ժամանակահատվածում կոչվեցին սոցիալ-հոգեբանական վերականգնման, ապա՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններ՝ ներառելով երեք առանձին ծառայություններ և մասնագիտական ուղղություններ՝ սոցիալական աշխատանք, հոգեբանական ծառայություն և իրավական աշխատանք: Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինները կոչված են գործնականում կյանքի կոչել պատժի կատարման մարդասիրության ու անհատականացման սկզբունքները, ինչն էլ ընկած էր ողջ բարեփոխումների գաղափարական հիմքում:

Բաժնի առջև դրվեցին մի շարք գործառույթներ, որոնց իրականացումն ըստ էության պետք է ապահովեր դատապարտյալների ուղղումը, վերականգնումը և հասարակության մեջ նրանց հետագա վերաինտեգրման համար կայուն երաշխիքների ստեղծումը: Այս հիմնարար խնդիրն արտացոլվեց նաև ոլորտը կանոնակարգող ՀՀ արդարադատության նախարարի 2008թ. մայիսի 30-ի «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը

հաստատելու մասին» թիվ 44-Ն հրամանով, որտեղ ամրագրվեց գործառույթների այն շրջանակը, որոնք պետք է կատարվեն տվյալ ստորաբաժանումների կողմից: Մասնավորապես՝ սոցիալական աշխատանք, հոգեբանական աշխատանք, իրավական աշխատանք, արտաքին աշխարհի հետ կապի պահպանման աշխատանքներ և մի շարք մասնավոր այլ գործառույթներ, ինչպիսիք են՝ կրթական, մարզական, մշակութային, հոգևոր-կրոնական միջոցառումների կազմակերպումը, օգտակար զբաղվածության խթանումը (ստեղծագործական գործունեության խթանում), հասարակական և այլ կազմակերպությունների ներգրավումը համատեղ վերականգնողական ծրագրերում և այլն:

Ընդհանուր առմամբ, քրեակատարողական հիմնարկներում իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների սակավ արդյունավետության վերլուծությունը հանգում է հիմնականում 3 խումբ խնդիրների.

ա. իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտություն (ներառյալ՝ այլ պետական ու ոչ պետական կառույցների հետ համագործակցության ամրագրում, անձի ու վարքի գնահատման հստակ և ունիվերսալ չափորոշիչների ամրագրում, պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացման կարգի հստակեցում և այլն).

բ. անձնակազմի որակական ու քանակական անբավարարություն (ներառյալ՝ նեղ մասնագիտական կադրերի առկայություն, հստակ և նեղ մասնագիտական վերապատրաստումների, հաճախ նաև պատրաստումների անհրաժեշտություն, ինչպես նաև մեկ մասնագետին բաժին ընկնող դատապարտյալների թվաքանակի հավասարակշռում և այլն).

գ. նյութատեխնիկական բազայի բարելավման անհրաժեշտություն (աշխատակազմի սենյակների անբավարար կահավորվածություն, համակարգչային թերհագեցվածություն, տնայցերի կամ սոցիալական աշխատանքի համար անհրաժեշտ այլ գործողությունների կատարման համար տրանսպորտային միջոցի և վառելիքի բացակայություն և այլն):

Հետխորհրդային Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների պահանջներից մեկը ազատազրկմանն այլընտրանքային պատիժների ենթահամակարգի զարգացումն է: Հանցագործությունների կանխարգելման նպատակով եվրոպական պատժիչ համակարգը որդեգրեց այլընտրանքային պատիժների

կատարման պրակտիկան, որին փորձում է հետևել նաև Հայաստանը: Այդպիսի պատժատեսակները թույլ են տալիս պատժի ենթարկել անձին՝ նրան հնարավորին չափով քիչ «վնասելով»:

Բարեփոխումների հաջորդ, ավելի ուշ փուլում, դատապարտյալների նկատմամբ այլընտրանքային պատիժների կատարման և նրանց ուղղման ու վերականգնման աշխատանքները հասարակությունում իրականացնելու նպատակով, 2005 թվականին ստեղծվեցին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները (այսուհետ նաև՝ ԱՊԿԲ)՝ ՀՀ վարչատարածքային բաժանմանը համապատասխան բաժանմունքներով: Կազմավորված նորաստեղծ ստորաբաժանումների առջև խնդիր դրվեց ապահովել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը, որոնք են. տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը և գույքի բռնագրավումը: Այնուհետև, ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1561-Ն որոշմամբ բաժնի առջև դրվեցին նաև հետևյալ խնդիրները՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց, պատժի կրման հետաձգումով հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ վերահսկողությունը:

Հանրային աշխատանքներ պատժատեսակը կատարելիս, որպես կանոն, հիմնականում որոշ աշխատանքներ են տարվում աշխատատեղի հայտնաբերման և դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքի վերահսկման ուղղությամբ: Իսկ բուն իրավախախտման պատճառների բացահայտման և դրանց հաղթահարման ուղղությամբ աշխատանքները դեռևս անբավարար են: Սակայն, ինչպես ազատազրկման տեսքով պատժատեսակները, այնպես էլ այլընտրանքայինի դեպքում նույնպես, պատժին զուգահեռ հիմնական գործառույթներից մեկը հանդիսանում է

դատապարտյալի ուղղումը: Իսկ դա նշանակում է, որ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալն, իր կարիքներին համապատասխան, պետք է ներգրավված լինի ուղղիչ և վերականգնողական ծրագրերի մեջ: Այս առումով, հանրային աշխատանքներ պատիժը սահմանվում է միայն դատապարտվող անձի համաձայնությամբ, ինչը թույլ է տալիս ակնկալել, որ նա ցանկություն ունի կատարել որոշակի ներանձնային և վարքային փոփոխություններ, և մասնագետներին ավելի հեշտ է նրա վարքում փոփոխություններ կատարել:

Հանրային աշխատանքների դատապարտումը, ինչպես նաև ազատազրկման մյուս այլընտրանքները հիմնված են այն մարդասիրական գաղափարի վրա, որ անհատին նորից հնարավորություն տրվի օրինապահ վարքին վերադառնալու համար: Հանրային աշխատանքներն ուղղակի միջոց պետք է լինեն, որպեսզի մասնագետները կապ պահպանեն դատապարտյալի հետ՝ նրան թողնելով իր ընտանիքում և համայնքում, վերահսկելով նրա սոցիալական կապերը, ուժեղացնելով նրան սոցիալապես, մեծացնելով նրա հարմարվածությունը: Սակայն, թերի են դեռևս նաև շահառուների կարիքների գնահատման, նրանց քրեական վարքագծի հաղթահարման նպատակով իրականացվող աշխատանքները:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու դատապարտված անձինք նույնպես հանդիսանում են այլընտրանքային պատիժների իրականացման բաժինների շահառուները: Սակայն նման պատժի դատապարտված անձանց հետ ոչ մի ուղղիչ ու վերականգնողական աշխատանք չի տարվում: Նույնն է վիճակը նաև փորձաշրջանում գտնվողների և պայմանական վաղաժամկետ ազատվածների վարքի նկատմամբ վերահսկողության դեպքում:

Առկա են նաև մի շարք այլ խնդիրներ ևս. այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների ստեղծման օրվանից՝ սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքներ առհասարակ չեն նախատեսվել և այսօր էլ գոյություն չունեն: Այն դեպքում, երբ ՀՀ կառավարության՝ ոլորտը կանոնակարգող որոշմամբ, ամրագրված են որոշակի գործառույթներ, որոնք ուղղակիորեն պահանջում են համապատասխան մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ:

Մյուս խնդիրը, որ նկատվում է այս ստորաբաժանումներում, դա սոցիալական ծառայությունների հետ առկա համագործակցության ցածր աստիճանն է, հատկապես՝ զբաղվածության ծառայությունների հետ: Կան մի շարք իրավական, կազմակերպչական ու մասնագիտական ռեսուրսների բարելավման խնդիրներ, որոնց լուծումն այսօր ևս խիստ հրատապ է դարձել: Հաշվի առնելով այն, որ օրենսդրությամբ սահմանված պատժի անհատականացման սկզբունքը և պատժի նպատակներից մեկը՝ ուղղումը (առավելապես մասնագիտական միջամտությունների ձևով) ազատազրկման ընթացքում իրականացվում է քրեակատարողական ծառայության ՍՀԻ աշխատանքների բաժինների միջոցով, անհրաժեշտ է խիստ ուշադրություն դարձնել նաև մասնագետների գործառույթների և նրանց միջև համագործակցության եզրերի հստակ սահմանմանը, մասնագետների թվաքանակի և նրանց համար սահմանված գործառույթների հավասարակշռությանը, մասնագետների անընդհատյա և կանոնավոր պատրաստմանն ու վերապատրաստմանը:

Ինչ վերաբերում է այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանմանը, ապա պրոբացիայի ծառայությունը, համագործակցելով ազատազրկման ձևով պատիժ կատարող հիմնարկի մասնագիտական անձնակազմի հետ, կիրականացնի դատապարտյալի վերականգնման և վերաինտեգրման երաշխիքների ստեղծման գործառույթները՝ միևնույն ժամանակ ստանձնելով ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված այլընտրանքային պատիժների կատարումը (մանրամասն՝ ստորև): Հաշվի առնելով այն, որ անձի դիրքորոշումներն ու արդարադատության նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում, և նրա վերաինտեգրման և վերասոցիալականացման հիմքերը դրվում են դեռևս նախաքննական շրջանում, ուստի անհրաժեշտ է նույնանուն բազմամասնագիտական միջամտություն ցուցաբերել ոչ միայն արդեն դատապարտված անձի, այլև մեղադրյալի նկատմամբ՝ հենց նախաքննական փուլից սկսած: Այս առումով, միջազգային պրակտիկան վկայում է, որ նշված գործառույթները լավագույնս իրականացվում են պրոբացիայի ծառայությունների կողմից:

Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծումը և զարգացումը հիմնավորվում է առնվազն հետևյալ հանգամանքներով. պրոբացիայի ծառայության ստեղծումը բխում է քրեական արդարադատության ոլորտում եվրոպական երկրների

որդեգրած քաղաքականությունից: Մասնավորապես, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը, մյուս կողմից դրանց պաշտպանությունը, այն հիմնարար արժեքներն են, որոնք երաշխավորվում են պետության կողմից, և պետական հարկադրանքի բոլոր միջոցները, այդ թվում՝ պատիժը, պիտի հիմնված լինեն այդ արժեքների վրա: Պետական հարկադրանքի և վերահսկողության գործառույթներ ունեցող ոլորտում առավել ցայտուն և նկատելի է, թե որքանով է Հայաստանը իրապես որդեգրել այս քաղաքականությունը, և որքանով է պատրաստ իրականացնել այն բարեփոխումները, ստեղծել այն օրենսդրական, իրավական դաշտը, որի վերաբերյալ ստանձնել է համապատասխան պարտավորություններ:

Պրոբացիայի ծառայության ստեղծումը հիմնավորվում է նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայով: Նախ, քրեական գործերի մինչդատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվում է մեծամասամբ կալանավորումը, իսկ որպես որոշումների հիմնավորում, մեծամասամբ է նշվում նաև մեղադրյալի կողմից քննությունից խուսափելը, կամ վերջինիս խոչընդոտելը, ապացուցողական տվյալների վրա ազդեցությունը, նոր իրավախախտումների կատարման հավանականությունը: Այս առումով, հատկանշական է նաև այն, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում, որպես կանոն, ամբաստանյալը չի «խուսափում» ազատազրկում պատժատեսակից և ստացվում է այնպես, որ հանցանք կատարած անձանց նկատմամբ դատարանների կողմից նշանակվող պատժատեսակը գերազանցապես ազատազրկումն է (2010թ. ընթացքում դատարանների կողմից քննված քրեական գործերով 20 տոկոս դեպքերում է, որ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ցածր է նաև ազատազրկման հետ չկապված պատիժների նշանակման տոկոսը. ուսումնասիրված 2446 ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժները՝ ազատազրկումը որպես պատժատեսակ կիրառվել է 1792 (73.3%) ամբաստանյալների նկատմամբ: Այս պատժատեսակով պատժաչափի միջին տևողությունը կազմել է 38.3 ամիս: Առավելագույն պատժաչափը կազմել է 15 տարի և կիրառվել է երկու ամբաստանյալների նկատմամբ: Դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չի

կիրառվել 506 ամբաստանյալների նկատմամբ, ինչը կազմում է ամբաստանյալների ընդհանուր թվի 20.7%-ը[4]:

Նման պայմաններում պրոբացիայի ծառայության ներդրումը կնպաստի ինչպես դատարանների կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատիժների անհարկի նշանակման, այնպես էլ մեղադրյալների նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու դեպքերի նվազմանը և կնվազեցնի նաև քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը: Հետևություն. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման անհրաժեշտությունը բխում է նաև քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության խնդրից: Ներկայումս, ինչպես մինչդատական վարույթի ընթացքում կալանավորված, այնպես էլ ազատազրկման դատապարտված անձինք պահվում են քրեակատարողական գերծանրաբեռնված հիմնարկներում: Այս խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է նաև խոշտանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտեի կողմից ներկայացված զեկույցներում[5]:

Բացի այդ, պրոբացիայի ծառայությունն ապացուցել է իր տնտեսական արդյունավետությունը կիրառության բոլոր ձևերում և մոդելներում: Միանշանակ է, որ անձին ազատությունից զրկելով՝ պետությունը որոշակի նյութական միջոցներ է ծախսում նրան քրեակատարողական հիմնարկում պահելու համար: Եթե հասարակության անվտանգությունը առավել վտանգված կարող է լինել, ապա հանրությունը նախընտրում է ազատազրկումը: Սակայն, եթե անձի վտանգավորության չափը չի ազդում համընդհանուր անվտանգության վրա, ապա ընդհանուր հասարակական շահը պահանջում է, որպեսզի նա կրի այլընտրանքային պատիժ: Անձը, կատարելով հանցագործություն, արդեն իսկ որոշակի վնաս է հասցնում պետությանը, իսկ ազատազրկմամբ ոչ միայն չի հատուցվում այդ վնասը, այլև, հասարակությունը շարունակում է հարկեր վճարել պետությանը, որպեսզի վերջինս պահի դատապարտյալին: Այսպիսով, եթե խնդիրը նաև տնտեսական հիմնավորման տեսանկյունից դիտարկվի, ապա Հայաստանը որպես սահմանափակ ռեսուրսներ, այդ

---

[4] Զեկույց, Պատժողական քաղաքականությունը ՀՀ-ում: «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, Երևան, 2010

[5] Հայաստանի Հանրապետության վերաբերյալ նյութերը տես՝ http://www.cpt.coe.int/en/states/arm.htm

թվում՝ բնակչություն ունեցող երկիր, չի կարող իր վրա վերցնել պատժի այնպիսի անարդյունավետ տեսակ, ինչպիսին ազատազրկումն է և կիրառել հանցագործությունների 90 տոկոսից ավելիի նկատմամբ: Այսպես.

2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալների ընդհանուր՝ 3555 թվաքանակը ըստ հանցագործության ծանրության աստիճանի կազմել է՝

ա. մոտ 950 դատապարտյալ կատարել են առանձնապես ծանր հանցագործություն,

բ. մոտ 1650 դատապարտյալ կատարել են ծանր հանցագործություն,

գ. մոտ 850 դատապարտյալ կատարել են միջին ծանրության հանցագործություն,

դ. մոտ 100 դատապարտյալ կատարել են ոչ մեծ ծանրության հանցագործություն:

Մոտավոր նույն տոկոսային համեմատականն է կալանավորված անձանց կապակցությամբ, որոնց ընդհանուր թվաքանակը 2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմում է 1218 անձ:

2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պատիժ են կրում կյանքի և առողջության դեմ ուղղված (ՀՀ քրեական օրենսգրքի 104-ից 130-րդ հոդվածներ) հանցագործություն կատարած թվով 956 դատապարտյալ: Նույն օրվա դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ են կրում առաջին անգամ ազատազրկման դատապարտված թվով 1724 դատապարտյալ:

Վերոգրյալ թվերի վերլուծությունը և միջազգային փորձի հետ համեմատականը թույլ է տալիս եզրակացնելու, որ առկա ազատությունից զրկված (կալանավորված և որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված) անձանցից մոտ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություն կատարած կամ դրա կատարման մեջ մեղադրվող՝ թվով մոտ 1350 անձանց գրեթե երկու երրորդը՝ 900-ը պոտենցիալ հնարավորություն ունի լինելու պրոբացիայի ծառայության «վերահսկողության» տակ: Իսկ այս թվին եթե ավելացվի պատժից պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասը ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտների կատարելագործման արդյունքում ազատազրկման դատապարտման անձանց «հոսքը» դեպի պրոբացիայի ծառայություն, ապա կարելի է նշել, որ այդ անձանց ընդհանուր

թվաքանակը կկազմի առնվազն մոտ 1300 անձ: Այս պարագայում, եթե համեմատենք մեկ անձի քրեակատարողական հիմնարկում պահվելու՝ 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսը (ընդհանուր տարեկան 1312.0 հազ. կամ օրական 3595 դրամ) պրոբացիայի ծառայության «վերահսկողության» ներքո գտնվող անձի վրա կատարվելիք ծախսի (տարեկան 150.0 հազ. կամ օրական 410 դրամ, որի բացվածքը կբերվի ստորև) հետ, ապա տարբերությունը կկազմի տարեկան՝ 1300 * (1312.0 հազ. – 150.0 հազ.) = մոտ 1510600.0 հազ. դրամ (իսկ քրեակատարողական հիմնարկում պահվող մեկ անձի միայն սննդի, հագուստի և կենցաղի կազմակերպման համար կատարվելիք՝ ոչ ընդհանուր ծախսը՝ տարեկան 401.5 հազ. կամ օրական մոտ 1100 դրամի դեպքում՝ 1300 * (401.5 հազ. – 150.0 հազ.) = մոտ 326950.0 հազ. դրամ):

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավական և դատական բարեփոխումների շրջանակներում նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ընդունումը ևս (ինչը պայմանավորում է նաև փոփոխություններ քրեակատարողական օրենսգրքում) հանգեցնում է պրոբացիայի ծառայության ստեղծման անհրաժեշտության: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման հայեցակարգով նախանշված մի շարք փոփոխությունների արդյունավետ իրականացումը մեծապես պայմանավորված է այս ծառայության ստեղծմամբ (մասնավորապես՝ նոր այլընտրանքային խափանման միջոցների, մեդիացիայի ինստիտուտի ներմուծումը):

Պրոբացիայի ծառայության ներդրման հետ է կապված նաև «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 22-րդ գլխի փոփոխությունները, որով պայմանավորված ամբողջությամբ կատարելագործվում է նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքերում դատապարտյալի նկատմամբ իրականացվող վերահսկողության մեթոդաբանությունը՝ օրենքով սահմանելով նաև վերահսկողության ընթացքի համար կոնկրետ պարտականություններ:

<u>Վեցերորդ խումբ.</u>

Քրեակատարողական ծառայության գործունեությունը կանոնակարգվում է «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ինչպես նաև դրանից բխող այլ իրավական ակտերով), սակայն առկա են մի շարք

խնդիրներ, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի. նախ՝ քրեակատարողական ծառայության գործունեության ընթացքում ծագել են հարցեր, որոնք ժամանակի պահանջներին չեն համապատասխանում և դրանց կանոնակարգումները պետք է կատարելագործել կամ նպատակահարմարությունից ելնելով՝ փոփոխել: Երկրորդ՝ կան հարաբերություններ, որոնք կանոնակարգված չեն կամ կանոնակարգված են թերի, և նման իրավիճակները հանգեցնում է որոշակի խնդիրների. անհրաժեշտ է դրանք կանոնակարգել կամ կանոնակարգումները կատարելագործել:

<u>Յոթերորդ խում.</u>

ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր՝ 23.04.2013 ՍԴՈ-1082 որոշմամբ: Անհրաժեշտ է տվյալ հակասությունը վերացնել:

ՀՀ քրեական օրենսգրքի 354 հոդվածի փոփոխությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նշված հոդվածով պատասխանատվություն չի նախատեսվում քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու թույլտվություն ունեցող դատապարտյալների տեղաշարժման թույլտվության ժամկետի ավարտից հետո քրեակատարողական հիմնարկ չվերադառնալու և դրանով իսկ պատժի կրումից խուսափելու համար, մինչդեռ բացի կարճաժամկետ մեկնման թույլտվություն կամ պատժի հետաձգման իրավունք ունեցող դատապարտյալներից աշխատելու նպատակով քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու իրավունք ունեն նաև առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի կամ

կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս գտնվելու թույլտվություն ստացած դատապարտյալները (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 79-րդ հոդված), ինչպես նաև ցերեկային ժամերին ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ բաց ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալները (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 103-րդ հոդված): ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն չի նախատեսվում նաև այն կալանավորված անձի նկատմամբ, ով ստացել է կարճաժամկետ մեկնման իրավունք և ժամկետը լրանալուց հետո խուսափում է քրեակատարողական հիմնարկ վերադառնալուց: Նշված հոդվածով անհրաժեշտ է սահմանել նաև այն առավելագույն ժամկետը, որից սկսած կարող է վրա հասնել քրեակատարողական պատասխանատվությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածում լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ քրեակատարողական հիմնարկի կամ ձերբակալվածներին պահելու վայրի սահմաններից դուրս պահախմբի կողմից հսկվող վայրից կամ պահախմբով փոխադրելիս կամ ուղեկցելիս ազատազրկման դատապարտված, կալանավորված կամ ձերբակալված անձի կողմից հնարավոր փախուստի դեպքի համար պատասխանատվություն չի նախատեսվում, մինչդեռ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ազատազրկման դատապարտված, կալանավորված կամ ձերբակալված անձը կարող է տեղափոխվել մեկ այլ քրեակատարողական հիմնարկ, հիվանդանոց կամ այլ վայր՝ քննչական գործողություն կատարելու նպատակով, կամ գտնվել հիվանդանոցում, դատարանում կամ պահախմբի կողմից հսկվող այլ վայրում:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու, ինչպես նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտները միջազգային չափանիշներին համահունչ դարձնելու նպատակով անհրաժեշտ են սկզբունքային նոր մոտեցումներ, որոնց հիմքում կդրվի պատժի անհատականացման սկզբունքը, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովումը:

Ներկայացվող փոփոխություններն ու լրացումները նպատակ ունեն համապատասխանեցնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտը ԵՄ «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» հանձնարարականի և «ՄԱԿ-ի Ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն չափորոշիչ կանոնների» դրույթներին, ինչպես նաև ամրագրելու անձի՝ իր խախտված իրավունքները պաշտպանելու սահմանադրական իրավունքները: Բացի այդ, ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու իրավահարաբերություններն էլ՝ ՄԻԵԴ-ի նախադեպերին:

Միաժամանակ, պատժից ազատման արդյունավետ ինստիտուտների օրենսդրորեն սահմանումը և դրանց պատշաճ կիրառումը երաշխիքներից մեկն է նաև քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման խնդրի լուծման:

Նախագծերով էլ ավելի են հստակեցվում կալանավորված անձանց և դատապարտյալների իրավական կարգավիճակին առնչվող իրավահարաբերությունները, դրանք՝ ՀՀ Սահմանադրությանը և միջազգային տարբեր իրավական փաստաթղթերին համապատասխանության իմաստով:

Նախագծերով սահմանվում են որոշակի առանձնահատկություններ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրման, ինչպես նաև անչափահասների կալանքի տակ գտնվելու պայմանների կապակցությամբ:

Նախագծերով առաջարկվում են հստակեցնել հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար հանցանքի ծանրության աստիճանը սահմանելու գործընթացը, որով էլ պայմանավորված մի շարք գործնական խնդիրներ լուծելու անհրաժեշտությունից ելնելով, նպատակահարմար է ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածում համապատասխան լրացում կատարել:

Նախագծերի ընդունումը թույլ կտա լուծել քրեակատարողական ծառայության ոլորտում առկա և վերը մատնանշված խնդիրները:

Նախագծերը համահունչ են երկրում իրականացվող դատահիրավական բարեփոխումներին և բխում են վերանայված քրեական քաղաքականությունից:

4. Կարգավորման առարկան

Առաջին խումբ. Նախագծերով վերանայվում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար պարտադիր նախապայման համարվող կարգապահական տույժ չունենալու հանգամանքը, որպես պայման սահմանելով միայն պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների համար կարգապահական տույժ չունենալը:

Վերացվում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների որոշումների բողոքարկման անթույլատրելիությունը:

Դրանք համապատասխանում են Եվրոպայի խորհրդի «Պայմանական վաղաժամկետ ազատման մասին» Rec (2003)22 հանձնարարականի և «ՄԱԿ-ի Ազատազրկման հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն չափորոշիչ կանոնների» դրույթներին:

Երկրորդ խումբ. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեակատարողական օրենսգիրքում կատարվող փոփոխությունների և լրացումների արդյունքում էլ ավելի են հստակեցվում կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքներն ու դրանց իրացման երաշխիքները՝ համապատասխանեցնելով սահմանադրական՝ «թույլատրվում է այն ամենը, ինչ արգելված չէ օրենքով» սկզբունքին: Միաժամանակ, նախատեսվում են այնպիսի դրույթներ, որոնց համաձայն բժշկի բացասական եզրակացության դեպքում կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ ոչ մի պարագայում չկիրառվի որպես տույժի միջոց պատժախուց տեղավորելը, ինչպես նաև նորմեր, որոնք արգելում են միևնույն արարքի համար կալանավորված անձին կամ դատապարտյալին կրկին անգամ պատասխանատվության ենթարկելը, կամ կնպաստեն անազատության մեջ գտնվող անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի առավել լիարժեք իրացմանը՝ դատապարտյալներին և կալանավորվածներին հնարավորություն տալով բողոքարկելու ոչ միայն նշված հիմնարկների վարչակազմերի գործողությունները, այլ նաև վերջիններիս անգործությունն ու որոշումները:

Երրորդ խումբ. նախատեսվում է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրման առանձնահատկությունները հստակեցնել, վերացնելով

օրենսդրության մեջ առկա այն թերկարգավորվածությունը, որի պատճառով ցմահ ազատազրկման դատապարտված անձինք պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո կարող են պայմանական վաղաժամկետ ազատվել պատիժը կրելուց, սակայն նույն ժամկետից հետո չեն կարող տեղափոխվել ավելի ցածր մեկուսացվածության աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ՝ պատիժը կրելու համար:

Նախատեսվում է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի առաջին մասով և 109-րդ հոդվածով անչափահաս դատապարտյալների համար նախատեսված անջատ պահելու սկզբունքները նույնությամբ նախատեսել նաև անչափահաս կալանավորված անձանց համար:

Առաջարկվում է լրացում կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածում՝ հստակ սահմանելով հանցագործության նախապատրաստության և հանցափորձի ծանրության աստիճանը որոշելու կարգը: Ներկայացված տեսական և գործնական խնդիրները լուծելու համար առաջարկվող լրացումը բխում է ներկայիս քրեական քաղաքականության համատեքստից: և միջոց է: Այն ոչ միայն կհստակեցնի կոնկրետ հանցագործության տեսակը՝ դրա նախապատրաստության կամ փորձի դեպքում, այլ նաև հնարավորություն կտա լուծելու նման դեպքերում դատապարտված անձի նկատմամբ պատժի նշանակման և պատժի կրման հետ կապված մի շարք խնդիրներ: Ավելին, հարցի օրենսդրական կարգավորման հիմքում դրված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանությունը:

<u>Հինգերորդ խումբ.</u> Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ստեղծումը և գործառույթների ներդրումը պետք է իրականացվի փուլային կարգով, որը կապահովագրի ծառայությանը հնարավոր խնդիրներից և դժվարություններից, ինչպես նաև կերաշխավորի ծառայության առջև դրված նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացումը: Նկատի է առնվում նաև ծառայության ներդրման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների ծավալն ու բազմազանությունը, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ ռեսուրսների անբավարարությունը (ծախսերի միաժամանակյա իրականացման դեպքում): Նախատեսվում է այդ աշխատանքները բաժանել երեք՝ նախապատրաստական, ծառայության ստեղծման և ծառայության գործունեության ամբողջականացման (բոլոր լիազորությունների իրականացման) փուլերի:

Նախապատրաստական փուլի (մինչև 2014թ. հունվար) հիմնական խնդիրն է դրա ավարտին ունենալ Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծման համար անհրաժեշտ բոլոր իրավական և գործնական նախադրյալները, այդ թվում՝

ա. պրոբացիայի ծառայության ստեղծումը մեկնարկելու համար իրավասու մարմինների կողմից հաստատված անհրաժեշտ գործողությունների ծրագրի առկայությունը,

բ. իրավական համապատասխան ակտերի ընդունումը ՀՀ Ազգային Ժողովի և ՀՀ կառավարության կողմից,

գ. աշխատակազմի ներգրավմանն ուղղված աշխատանքների,

դ. պետական միջոցներից ֆինանսավորման իրավական ապահովմանն ուղղված աշխատանքների և

ե. կազմակերպչական բնույթի աշխատանքների իրականացումը:

Հայաստանում պրոբացիայի ծառայություն ստեղծելուն ուղղված աշխատանքների արդյունավետությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, թե դրանք որքանով են ճիշտ պլանավորված իրենց բովանդակությամբ, հաջորդականությամբ և ժամանակի մեջ: Ծառայության ներդրման համար անհրաժեշտ՝ բխող գործողությունների ծրագիրը պետք է համաձայնեցված լինի պրոբացիոն գործառույթներին առնչվող պետական բոլոր իրավասու մարմինների հետ և ընդունելի լինի նրանց համար: Միաժամանակ, այդ մարմինների՝ պրոբացիայի ծառայության ստեղծելուն ուղղված աշխատանքները ևս պետք է հստակ և ժամանակին լինեն, որպեսզի համահունչ լինեն ծրագրի ամբողջական և համաժամանակյա լինելու տեսանկյունից: Ոլորտի կարգավորման տեսակետից, հիմնարար են Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 առաջարկությունը «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ», որոնք ուղեցույց պետք է լինեն դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների ստեղծման ու պատշաճ գործունեության համար: Կանոնները կիրառվում են նաև այլ կազմակերպությունների նկատմամբ՝ տվյալ Կանոններով կարգավորվող խնդիրներն իրականացնելիս՝ ներառյալ այլ պետական կազմակերպությունների, հասարակական և առևտրային կազմակերպությունների նկատմամբ: Այդուհանդերձ, նշված Կանոնները չեն գործում և չեն կարող գործել

ինքնուրույն և առանձին վերցրած, քանի որ դրանք խիստ կապված են անդամ պետություններին ուղղված մի շարք այլ հանձնարարականներով ու առաջարկություններով: Այս առումով, հիշատակված Կանոնները ևս ամրագրում են, որ դրանք անհրաժեշտ է մեկնաբանել «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16 առաջարկության համատեքստում: Ավելին, նշված կանոնները լրացնում են «Պատիժների կամ միջոցների կատարման հետ առնչվող անձնակազմի վերաբերյալ» թիվ R (97) 12 առաջարկության, «Քրեական գործերով միջնորդության վերաբերյալ» թիվ R (99) 19 առաջարկության, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22 առաջարկության, «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Rec(2003)22 առաջարկության, «Քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից ցմահ ազատազրկվածների և երկարաժամկետ ազատազրկվածների պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ» Rec(2003)23 առաջարկության, «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» Rec(2006)2 առաջարկության, «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec(2006)13 առաջարկության համապատասխան դրույթները և պետք է մեկնաբանվեն դրանց համատեքստում:

Թերևս, բացի եվրոպական միասնական օրենսդրությունից, կարևոր է նշել նաև Միավորված Ազգերի կազմակերպության «Ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոնները» կամ, ինչպես ընդունված է կոչել՝ Տոկիոյի Կանոնները[6]: Այս փաստաթուղթը սահմանում է հիմնական և կարևորագույն սկզբունքները, որոնց միջոցով խթանվում է ազատությունից զրկելու հետ չկապված՝ այլընտրանքային պատժամիջոցների կիրառությունը: Դրա արժեքավոր դերը կայանում է նրանում, որ ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցները մանրամասն ներկայացված են մինչդատական, դատական, վճռի հրապարակման փուլերի և դատապարտումից հետո եկող գործընթացի համար:

---

[6] United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules), G.A. res. 45/110, annex, 45 U.N. GAOR Supp. (No. 49A) at 197, U.N. Doc. A/45/49 (1990).

Ներկայումս գրեթե բոլոր եվրոպական երկրներում[7] պրոբացիայի ծառայության վերաբերյալ օրենսդրական դրույթները նախատեսված են կամ քրեական օրենսդրությամբ (Բելգիա, Էստոնիա, Չեխիա, Ֆրանսիա, Հունգարիա, Լատվիա, Մոլդովա, Հոլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ռումինիա) կամ առանձին իրավական ակտերով (Իռլանդիա, Մեծ Բրիտանիա): Կան երկրներ, որտեղ քրեական արդարադատության համակարգում պրոբացիայի ծառայության դերը նախատեսված է քրեական դատավարության օրենսգրքով:

Ինչպես ցանկացած մարմնի, այնպես էլ պրոբացիայի ծառայության հիմնադրման և արդյունավետ գործունեության համար, առավել ևս, երբ այդ ծառայությունը պետք է իրականացնի բազմամասնագիտական լայնածավալ աշխատանքներ, խիստ անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել այն հիմնարար սկզբունքները, որոնք ապահովելու և ամրագրելու են տվյալ ծառայության գործունեության ու գործողությունների շրջանակը:

Ինչպես պրոբացիայի ծառայությանը վերաբերող այլ հստակեցումներ, այնպես էլ ծառայությունների գործունեության հիմնարար սկզբունքներն ամրագրված են ԵԽ հանձնարարականով, որոնք գործունեության ուղենիշ պետք է լինեն նաև Հայաստանում ստեղծվելիք պրոբացիայի ծառայության համար: Այդ սկզբունքներն են.

ա. պրոբացիայի ծառայության նպատակներից պետք է լինի կրկնահանցագործության կրճատումը՝ հանցագործություն կատարած անձի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու միջոցով նրանց վերահսկելու (ներառյալ՝ հարկ եղած դեպքում հսկելու), ուղղորդելու ու աջակցելու և նրանց բարեհաջող սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով,

բ. պրոբացիայի ծառայությունը պետք է հարգի հանցագործություն կատարած անձանց իրավունքները: Դրա բոլոր միջամտությունների դեպքում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն հանցագործություն կատարած անձանց արժանապատվությունը, առողջությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը,

[7] European Probation Service Systems, a comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu

գ. բոլոր դեպքերում, երբ պրոբացիայի ծառայությունը զբաղվում է հանցագործությունից տուժած անձանց վերաբերող հարցերով, պետք է հարգվեն նրանց իրավունքներն ու կարիքները,

դ. պրոբացիայի ծառայությունը պետք է ամբողջությամբ հաշվի առնի հանցագործություն կատարած անձանց անհատական առանձնահատկությունները, պայմանները և կարիքները՝ ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվի արդարացի և համարժեք վերաբերմունք: Միջամտությունները պետք է իրականացվեն՝ բացառելով խտրականությունը որևէ հիմքով, ինչպես օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, էթնիկ փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը,

ե. որևէ պատժի կամ միջոցի կատարման ժամանակ պրոբացիայի ծառայությունը հանցագործություն կատարած անձին չպետք է ծանրաբեռնի կամ սահմանափակի նրա իրավունքներն ավելի, քան նախատեսված է դատական կամ վարչական մարմնի որոշմամբ և պահանջվում է յուրաքանչյուր առանձին դեպքում՝ կախված հանցագործության ծանրությունից կամ կրկնահանցագործության՝ պատշաճ կերպով գնահատված ռիսկից,

զ. պրոբացիայի ծառայությունը, որքանով հնարավոր է, պետք է ձգտի հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը ստանալուն և համագործակցությանը՝ նրանց առնչությամբ կատարվող միջամտության կապակցությամբ,

է. մեղքի վերջնական հաստատմանը նախորդող ցանկացած միջամտության համար պետք է պահանջվի հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը, և այդպիսի միջամտությունը չպետք է հակասի անմեղության կանխավարկածին,

ը. պրոբացիայի ծառայությունը, դրա խնդիրներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական և այլ մարմինների հետ հարաբերությունները պետք է սահմանվեն ազգային օրենսդրությամբ,

թ. պետական մարմինները պետք է շարունակեն պատասխանատվություն կրել պրոբացիայի համար նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունները մատուցվում են այլ մարմինների կամ կամավորների կողմից,

ժ. պրոբացիայի ծառայության համար պետք է ապահովվի համապատասխան հեղինակություն, ճանաչում և ռեսուրսներ,

ժա. որոշում կայացնող մարմինները, հարկ եղած դեպքում, պետք է դիմեն պրոբացիայի ծառայությանը, որպեսզի վերջինս կրկնահանցագործությունը նվազեցնելու և ազատությունից զրկելու այլընտրանքների կիրառումը խթանելու նպատակով տրամադրի մասնագիտական խորհրդատվություն և իրականացնի վերահսկողություն,

ժբ. պրոբացիայի ծառայությունը պետք է համագործակցի այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների և տեղական մարմինների հետ՝ հանցագործություն կատարած անձանց սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Հանցագործություն կատարած անձանց համալիր կարիքները բավարարելու և հանրային անվտանգությունն ամրապնդելու համար անհրաժեշտ է կատարել համակարգված ու լրացուցիչ միջգերատեսչական և միջոլորտային համագործակցված աշխատանք,

ժգ. պրոբացիայի ծառայության կողմից ձեռնարկվող բոլոր գործողություններն ու միջամտությունները պետք է համապատասխանեն ազգային և միջազգային, էթիկական ու մասնագիտական ամենաբարձր չափանիշներին,

ժդ. անհրաժեշտ է ունենալ պրոբացիոն բնույթի գործունեության հետ կապված բողոքարկման մատչելի, անկողմնակալ և արդյունավետ ընթացակարգեր,

ժե. պրոբացիայի ծառայությունը պետք է ենթակա լինի պարբերական պետական ստուգումների և (կամ) անկախ դիտանցման,

ժզ. իրավասու մարմինները պետք է բարձրացնեն պրոբացիոն բնույթի աշխատանքների արդյունավետությունը՝ խթանելով հետազոտական աշխատանքները, որոնք պետք է օգտագործվեն ուղղորդելու պրոբացիոն քաղաքականությունը և պրակտիկան,

ժէ. իրավասու մարմինները և պրոբացիոն ծառայությունը պետք է տեղեկացնեն լրատվամիջոցներին և լայն հասարակությանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատանքի մասին՝

հասարակությունում նրանց դերի և արժեքի մասին առավել լավ պատկերացման ձևավորումը խթանելու նպատակով:8»:

«Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքով պետք է հստակ սահմանվեն ծառայության խնդիրները, գործունեության սկզբունքները, լիազորությունները, կառուցվածքը, պրոբացիայի ծառայության ծառայողի իրավական և սոցիալական ապահովման պետական երաշխիքները, նյութատեխնիկական ապահովման, ֆինանսավորման և գործունեության վերահսկման կարգը, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ իրավահարաբերություններ:

Քրեական արդարադատության համակարգում պատժի ինստիտուտն այն կարևոր բաղադրիչներից է, որն ապահովում է արդարադատության ամբողջականությունը, նաև տեսանելի և արդյունավետ դարձնում արդարադատության իրականացումը: Այս համակարգերի արդի միտումների միջազգային փորձը ցույց է տալիս, որ պատժի և արդարադատության իրականացումը գնում է դեպի այլընտրանքային պատժամիջոցների կիրառման ընդլայնում և վերականգնողական արդարադատության համակարգ: Ընդ որում, զուտ իրավական գիտելիքների կիրառումից անցում է կատարվում բազմամասնագիտական թիմի կիրառությանը՝ շեշտ դնելով սոցիալական աշխատանք, սոցիալական մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտություններին: Առաջնորդվելով այս մոտեցմամբ, արդի առաջավոր երկրները նախորդ դարի կեսերից առավել ինտենսիվ ձևով վերանայեցին պատժի ողջ էությունը և դրա կիրառման արդյունավետությունը:

Հատկապես Մեծ Բրիտանիան առաջատարն էր այս ոլորտում, որը և համաշխարհային պրակտիկային առաջարկեց նոր՝ պրոբացիայի ծառայությունը: Պրոբացիան մեծ տարածում գտավ մի շարք եվրոպական երկրների իրավական համակարգերում: Վերջին տասնամյակի ընթացքում պրոբացիայի պետական ծառայություն է ստեղծվել նաև նախկին ԽՍՀՄ անդամ պետություններում՝ Լատվիայում, Էստոնիայում, Մոլդովայում, Վրաստանում: Գոյություն ունեն այնպիսի երկրներ, որտեղ պրոբացիոն բնույթի աշխատանքները սկզբում թույլատրվել են միայն անչափահասների դեպքում: Մասնավորապես, Հունգարիայում և Լեհաստանում պրոբացիայի

[8] Recommandation CM/Rec(2010)1 du Comité des Ministres aux Etats membres sur les règles du Conseil de l'Europe relatives à la probation

ծառայությունների խնդիրն էր դատարանների համար անչափահասների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և ծնողական հսկողության ներքո գտնվող անչափահասներին լրացուցիչ խնամքի տրամադրումը: Մեծ թվով երկրներում (ինչպես օրինակ Ավստրիան, Չեխիան, Լատվիան, Էստոնիան, Ֆինլանդիան և այլն) պրոբացիայի ծառայությունների գործառույթներն ընդգրկում են ինչպես չափահասներին, այնպես էլ անչափահասներին: Որոշ երկրներում էլ պրոբացիայի ծառայություններն իրականացնում են հանցագործությունների կանխարգելման ծրագրեր անչափահասների շրջանում (Բուլղարիայում դա օրենքով սահմանված հստակ պարտավորություն է, Լատվիայում և Լիտվայում դա իրականացվում է պրոբացիայի ծառայության նախաձեռնությամբ): Եվ, չնայած մի շարք նմանությունների ու տարբերությունների, այնուամենայնիվ, եվրոպական երկրների համար գլխադասային իրավական կարգավորում է տրված Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից ԵԽ անդամ-պետություններին ուղղված թիվ 2010/1 հանձնարարականով:9

Աշխարհում գոյություն ունեցող յուրաքանչյուր երկիր առանձնանում է իր սոցիալ-մշակութային արժեքներով և ավանդույթներով, ինչը բնականաբար ազդեցություն է ունենում տվյալ երկրի իրավական համակարգի և, մասնավորապես, պրոբացիոն բնույթի ծրագրերի իրագործման և կազմակերպման կոնկրետ համակարգի վրա: Որոշ երկրներում գործում են պրոբացիայի այնպիսի ծառայություններ, որոնք ներառում են հանրային ծառայություններ (աշխատանքներ), տուժող ու հանցագործություն կատարած անձ հաշտեցում և այլն: Երկրների մեծամասնությունը պատկանում է այս երկրների շարքին, սակայն համակարգի ներսում տարբերություններ և առանձնահատկություններ միշտ էլ լինում են: Հաշվի առնելով առկա նմանություններն ու տարբերությունները, այնուամենայնիվ, միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պրոբացիայի ծառայության ենթակայությունը հանգում է հիմնականում հետևյալ մի քանի ձևերի.

ա. դատական իշխանության մեջ. այդպիսի պետություններ են օրինակ՝ Էստոնիան, Չեխիան: Դրանցում ընդհանուր իրավասության յուրաքանչյուր դատարանին կից գործում է պրոբացիայի ծառայության առանձին ստորաբաժանում, իսկ պրոբացիայի ծառայողները հանդիսանում են դատական ծառայողներ:

---

[9] Recommandation CM/Rec(2010)1 du Comité des Ministres aux Etats membres sur les règles du Conseil de l'Europe relatives à la probation

բ. Գործադիր իշխանության մեջ. եվրոպական պետությունների մեծ մասն ընտրել է այս իրավակարգավորումը՝ Անգլիան, Շվեդիան, Դանիան, Ֆինլանդիան, Հունգարիան, Վրաստանը, Մոլդովան, Լատվիան և ուրիշներ: Այս դեպքում պրոբացիայի ծառայությունը կարող է հանդես գալ որպես արդարադատության համակարգի առանձին վարչություն, առանձնացված ստորաբաժանում կամ այլ կից ծառայություն, ինչպես օրինակ՝ Հունգարիայում և Բելգիայում է:

Արդարադատության համակարգի ներսում՝ բանտային համակարգի հետ միացված պրոբացիայի ծառայությունները նույնպես ունեն իրենց առանձնահատկությունները: Մասնավորապես, Ֆրանսիայում պրոբացիայի ծառայությունը աչքի է ընկնում տարաբնույթ գործառույթներով: Սակայն, խնդիրը կայանում է նրանում, որ այս խումբ պետություններում մեծամասամբ գործառույթները ոչ միայն սահմանափակ են, այլ նաև բացակայում է մինչդատական փուլում և հետ-ազատման փուլում (Pre Trial Phase, Post Release Phase) վերահսկողություն սահմանելը, անձին տարաբնույթ օժանդակություն տրամադրելը (թմրամոլության, գինեմոլության դեմ պայքարում) և այլն: Հետևաբար, այս դեպքում պրոբացիայի ծառայությունը նոր հանցագործությունները կանխելու և դատապարտյալին վերաինտեգրելու հարցում ավելի քիչ արդյունավետ է (արդարադատության նախարարության կառուցվածքում են պլանավորում ստեղծել պրոբացիայի ծառայություն նաև Ռուսաստանն ու Ուկրաինան):

գ. Լիովին անկախ. այդպիսի պետություններ են հանդիսանում Ավստրիան և Հոլանդիան: Մասնավոր ոլորտի կողմից պրոբացիայի իրագործումը դեռևս այդքան էլ տարածված չէ, սակայն դրա առանձնահատկություններն ու առավելությունները արդեն իսկ նկատելի են: Նախ՝ պրոբացիայի ծառայության իրականացումը մասնավոր կազմակերպությունների կողմից ապահովում է դրա գործառույթների իրագործումը պրոբացիայի ողջ ընթացքում (փորձաշրջանից առաջ, դրա ընթացքում) և ազատության մեջ լինելու ընթացքում: Պրոբացիայի ծառայությունները, որոնք ստեղծված են և գործում են դատական կամ գործադիր իշխանության համակարգում, անձի՝ ազատության մեջ գտնվելու ժամանակ այդքան էլ ակտիվ չեն: Այսպես, երկրներում, որտեղ պրոբացիայի ծառայությունը բանտային համակարգին կից կամ որպես ինքնուրույն մարմին է հանդիսանում, բացակայում են փորձաշրջանից հետո ազատության մեջ գտնվող անձի նկատմամբ վերահսկողության իրագործումը (Post Release Phase), նրա վերաբերյալ

հաշվետվությունների կազմումը, ուսուցողական և կրթական դասընթացների կազմակերպումը, օժանդակության ցուցաբերումը այն անձանց, ում գործը պայմանական դադարեցվել է և այլն: Ի տարբերություն այս ամենի, մասնավոր կազմակերպությունները պրոբացիայի ծառայություններ իրականացնելիս ակտիվ են բոլոր փուլերում: Դրանք իրականացնում են ոչ միայն վերը ներկայացված գործառույթները, այլ նաև հանրային աշխատանքներ կատարելիս միջնորդի դերում են հանդես գալիս, աջակցում են կացարանի հարցում և այլն: Այսուհանդերձ, այս երկրներում ևս, այդ կազմակերպությունները վերահսկվում և ֆինանսավորվում են արդարադատության նախարարության կողմից:

դ. Խառը կամ ինքնատիպ մոտեցումներ. մասնավորապես.

- դատախազության կառույցում, ինչպիսին գործում է միայն Լյուքսեմբուրգում,

- ներքին գործերի նախարարության համակարգում գործող պրոբացիայի և բանտային համակարգի կազմում, ինչպիսին է Իտալիան10,

- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ սոցիալական ծառայությունների միջոցով, ինչպիսին Շոտլանդիայում է,

- ոստիկանության և արդարադատության միասնական նախարարության կազմում, ինչպիսին գործում է Նորվեգիայում,

- իրավաբանական օգնության, պրոբացիայի և կորեկցիայի նախարարության կազմում, ինչպիսին գործում է Վրաստանում:

Ինչպիսին պետք է լինի պրոբացիայի պետական ծառայության ենթակայությունը Հայաստանի Հանրապետությունում, որ հանրապետական գործադիր մարմնի համակարգում պետք է ընդգրկված լինի այն, եթե ՀՀ արդարադատության նախարարության, ապա արդյոք այն պետք է գործի քրեակատարողական ծառայության ներսում, թե պետք է կազմակերպական և գործառութային առումով հանդես գա որպես վերջինից լիովին անկախ և առանձին մարմին, և ինչ հարաբերակցություն պետք է ունենան այս երկու կառույցները. միջազգային որևէ իրավական ակտի բացակայությունից (որը կպարտադրեր այս կամ այն մոտեցումը) և միջազգային տարածված փորձից ելնելով՝ պրոբացիայի ծառայությունը Հայաստանում պետք է

[10] European Probation Service Systems, a comparative overview by Anton van Kalmthout and Ioan Durnescu

ստեղծվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում՝ անջատ քրեակատարողական ծառայությունից՝ հետևյալ հիմնավորումներով.

ա. ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկի համաձայն՝ նախատեսվում է ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն.

բ. քրեակատարողական գործող համակարգում մասնագիտական որակների անբավարարությունը վկայում է այն մասին, որ համակարգն անկարող է արդյունավետորեն կազմակերպել պրոբացիոն լուրջ ծառայության գործունեությունը.

գ. պրոբացիայի անկախ ծառայությունը գործնականում ավելի հեշտորեն կկարողանա շահել դատարանների վստահությունը, որն էական նախապայման է արդարադատության առավել անաչառ համակարգ ունենալու համար, որում, ի տարբերություն ներկայումս տիրող իրավիճակի, դատարաններ մուտք լինող գործերի մեծ մասի դեպքում չի կիրառվի ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց կամ պատիժ.

դ. պրոբացիայի անկախ ծառայությունն ի վիճակի կլինի կառավարել և վերահսկել իր ֆինանսական և կադրային ռեսուրսները՝ այդ կերպ երաշխավորելով համարժեք ռեսուրսների ներգրավումն իր գործունեության կազմակերպման համար.

ե. պրոբացիայի անկախ ծառայությունն ավելի մեծ հնարավորություններ կունենա՝ հաղթահարելու դատարանների, ոստիկանության և քրեակատարողական ծառայության միջև հորիզոնական հաղորդակցության ոլորտում առկա ներկայիս խոչընդոտները.

զ. պրոբացիայի անկախ ծառայությունն ավելի լավ կկարողանա երաշխավորել պրոբացիայի ժամանակակից փիլիսոփայությունների ներդրումը՝ լինելով ոչ ուժային.

է. պրոբացիայի անկախ ծառայությունը կնպաստի պատժի համակարգի որոշակի բաղադրիչների՝ պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասի ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման համակարգերի բարեփոխումներին:

Ծառայությունը պետք է լինի ոչ ուժային կառույց: Ծառայության կազմակերպաիրավական տեսակի խնդրի առումով նախատեսվում է հետևյալ լուծումը. պրոբացիայի ծառայությունը գործում է որպես պետական կառավարչական հիմնարկ, որի առանձնահատկությունները կսահմանվեն <<Պրոբացիայի ծառայության մասին>> ՀՀ օրենքով:

Պրոբացիայի ծառայությունն իր գործունեության ընթացքում պետք է սերտ համագործակցի նաև պետական մարմինների հետ, որոնք կարող են դասակարգվել երկու տեսակի՝ պրոբացիայի ծառայության շահառուներ և պրոբացիայի ծառայությանը հնարավոր ծառայություններ մատուցողներ: Առաջին խմբի մարմիններն են դատարանները, դատախազությունը, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, որոնց քրեական դատավարության վարույթի տարբեր փուլերում պրոբացիոն ծառայությունն օժանդակում է՝ իրենց լիազորություններն իրականացնել: Իսկ երկրորդ խմբի մարմիններն են պետական կրթական հաստատությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, խնամակալության և հոգաբարձության մարմինները, սոցիալական ծառայությունները:

Պրոբացիայի ծառայության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի և արտասահմանյան պետությունների օրենսդրության փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ տարբեր իրավական համակարգերում պրոբացիայի ծառայություններն օժտված են տարբեր ծավալի իրավասությամբ և լիազորություններով: Հնարավոր չէ նախապատվություն տալ որևէ կոնկրետ մոդելի, քանի որ դրանք հիմնված են տեղական, պատմական, ավանդական, մշակութային, սոցիալական և տնտեսական առանձնահատկությունների վրա: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության հիմնումն ու զարգացումը նույնպես պետք է ելնի ինչպես պրոբացիայի համակարգի վերաբերյալ միջազգային նորմերից, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության և քրեակատարողական համակարգի առանձնահատկություններից ու պահանջներից:

Քրեակատարողական ծառայությունում գործող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումները կատարում են որոշակի ժամկետով և ցմահ ազատազրկում պատժատեսակի հիմնական նպատակներից մեկի՝ դատապարտված անձի ուղղմանը նպաստելը՝ ապահովելով պատժի

անհատականացման սկզբունքի կիրարկումը: Եվ այս առումով, նշված ստորաբաժանումների և պրոբացիայի ծառայության կողմից սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարման կրկնությունից խուսափելու նպատակով, համագործակցության սահմանագծի որոշման հարցում որպես չափանիշ պետք է ընտրել անձի ազատության կամ անազատության մեջ լինելը: Այսինքն՝ ազատության մեջ պատիժ կրող դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարումը դուրս են քրեակատարողական ծառայության գործառույթներից և պետք է իրականացվեն պրոբացիայի ծառայության կողմից: Այս ստորաբաժանումները պետք է սերտորեն համագործակցեն պրոբացիայի ծառայության հետ (գործողությունների մակարդակով համագործակցության մասին մանրամասն՝ ստորև): Պրոբացիայի ծառայության գործունեության հետ համատեղ՝ պետք է մշակվի նաև սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող բաժինների զարգացման նոր ռազմավարություն՝ ներառելով նվազագույնը. մասնագետների տարանջատված ու հստակ գործառութային պարտականություններ, մասնագետների վերապատրաստումներ, դատապարտյալների անձնային և վարքային դրսևորումների գնահատման հստակ չափորոշիչներ, գնահատման մեխանիզմի ներդրում, կրթական ու աշխատանքային ռեսուրսների հզորացում, պետական ու ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ամրագրում ու իրագործում, այս ամենի (և ոչ միայն) ամրագրում ոլորտը կանոնակարգող իրավական ակտում և դրանից բխող մեթոդական ձեռնարկներում:

Պրոբացիայի ծառայության կողմից այլընտրանքային պատժատեսակների կատարման հնարավորության հարցը քննարկելիս անհրաժեշտ է պարզել, թե Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի պետական ծառայությունը, իր բնույթով կարող է արդյոք ապահովել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը, որոնք են. տուգանքը, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները: Նշված պատժատեսակները դրված են ՀՀ քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վրա: ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 26-ի «ՀՀ արդարադատության

նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված Կարգից բխում է, որ դրանք կարող են կատարվել նաև այլ մարմնի կողմից, քան քրեակատարողական ծառայությունն է, քանի որ այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները «միջնորդի» դեր են կատարում պատժի կատարման նպատակով: Դրանցից միայն հանրային աշխատանքներն են, որոնց կատարումը ենթադրում է դատապարտյալի նկատմամբ վերահսկողական միջոցառումների անմիջական իրականացում և կրում է պարբերական բնույթ: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պրոբացիայի ծառայություն ունեցող բոլոր պետությունները հանրային աշխատանքների կատարումը վերապահել են ոչ թե քրեակատարողական, այլ պրոբացիայի ծառայությանը: Ելնելով վերոգրյալից՝ արդարացված է նաև այն, որ այլընտրանքային բոլոր պատիժների կատարումը պետք է վերապահել պրոբացիայի ծառայությանը:

Պրոբացիայի ծառայությունն այն ինստիտուտն է, որը կերաշխավորի այլընտրանքային պատժատեսակների արդյունավետ և նպատակային կիրարկումը: Ընդ որում, նպատակային խնդիր է որպեսզի այլընտրանքային պատժատեսակներ և այլընտրանքային խափանման միջոցներ իրականացնող մարմինը չհանդիսանա ուժային կառույց և ենթակայական կապ չունենա ազատությունից զրկելու հետ կապված պատիժներ կատարող մարմնի հետ:

Ելնելով պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների արդյունավետ և ամբողջական իրականացման, հնարավորինս բարձր որակի հատուկ մասնագիտական ծառայություններ մատուցելու նկատառումներից, ինչպես նաև ֆինանսական միջոցների սղությունից կամ դրանց տնտեսման նպատակահարմարությունից՝ պրոբացիայի ծառայության գործունեությանն անհրաժեշտ է ներգրավել նաև հասարակական և առևտրային կազմակերպություններին, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին և կամավորներին՝ նրանց պատվիրակելով պրոբացիայի ծառայության որոշակի գործառույթներ: Նման կարգավորման հնարավորություն է նախատեսվում «Ազատազրկման հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների» 16-րդ և 19-րդ կետերով (նման կարգավորում է նախատեսվում նաև նախկին ԽՍՀՄ անդամ պետություններում, օրինակ՝Էստոնիայում):

Պրոբացիայի ծառայության որոշ գործառույթների կատարումը կարող է փոխանցվել այլ կազմակերպությունների՝ պրոբացիայի ծառայության կողմից կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա ընդունված ՀՀ արդարադատության նախարարի հրամանով: Այդ կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են նույն օրենսդրությամբ, ինչ պրոբացիայի ծառայության աշխատակիցները: Նրանց համապատասխան ներկայացուցիչները և կամավորները կրում են նույն պարտականությունները և օգտվում են նույն իրավունքներից, ինչ պրոբացիայի ծառայության աշխատակիցները:

Մասնավոր ոլորտի ներկայացուցիչների կամ կամավորների ներգրավումը պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացմանը չի բացառում պետության պատասխանատվությունը պրոբացիայի ծառայության գործունեության որակի համար:

Սերտ համագործակցելով արդեն իսկ գործող հասարակական և առևտրային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների, զբաղվածության գործակալությունների, սոցիալական ծառայությունների հետ, պրոբացիայի ծառայությունը կարող է պատվիրակել վերջիններիս իրականացնելու սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հանցանք կատարած անձանց վերասոցիալականացմանը:

Պրոբացիայի ծառայության գործունեությանը կարող են ներգրավվել նաև կամավորներ, որոնց հետ կնքվում է համագործակցության պայմանագիր, ինչպես օրինակ՝ Լատվիայում և Էստոնիայում: Տոկիոյի Կանոնների համաձայն՝ կամավորների ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով նրանց ունեցած վերաբերմունքը այն աշխատանքի նկատմամբ, որին նրանք ներգրավվելու են: Նրանք պետք է ապահովագրված լինեն իրենց պարտականությունները կատարելիս ստացած ֆիզիկական վնասվածքներից կամ պատահարներից: Կամավորները հիմնականում ներգրավվում են այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են. դատապարտյալներին օգնություն տրամադրել աշխատանք փնտրելիս, օգնել այլ կամավորներին ծառայություններին ներգրավվելու հարցում, ինչպես նաև գրագիտության հետ խնդիրներ ունեցող դատապարտյալների համար ծառայել որպես ուսուցիչներ և այլն:

Այլ կազմակերպությունների և կամավորների ակտիվ ներգրավումը պրոբացիայի ծառայության գործունեությանը լայն կիրառումը Հայաստանի Հանրապետությունում կարող է որոշակի չափով լուծել պրոբացիայի ծառայության ստեղծման առաջին փուլում նրա առջև ծառացած մի շարք խնդիրներ, որոնցից են տվյալ ոլորտում ֆինանսական միջոցների և կադրերի անբավարարության հարցը, ինչպես նաև կնպաստի ռեսուրսների ճիշտ տեղաբաշխմանն ու տնտեսմանը:

Հասարակական կազմակերպություններն ի թիվս այլ գործառույթների, կարող են օգտակար լինել նվազագույնը հետևյալ ոլորտներում.

ա. մատուցել սոցիալական ծառայություններ (օրինակ՝ ժամանակավոր կացարանի տրամադրում, խորհրդատվություն, ուղղորդում աշխատանքի հարցերում և այլն),

բ. իրականացնել հանցավոր վարքի ուղղմանը նպաստող ծրագրեր,

գ. զբաղվել համայնքային աշխատանքների համար հարմար աշխատատեղերի որոնմամբ,

դ. կատարել հետազոտություններ,

ե. կազմակերպել կամավորների կամ մենտորների (մեդիատոր կամ հաշտարար) աշխատանքը և այլն:

Պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրներն իրականացնելու նպատակով, այլ պետական մարմինների հետ նշված կառույցի համագործակցությունը պետք է ենթադրի նվազագույնը համագործակցություն հետևյալ մարմինների հետ և պետք է հստակ ամրագրվի օրենսդրությամբ. ՀՀ կրթության և գիտության, ՀՀ առողջապահության, ՀՀ սպորտի և երիտասարդության, ՀՀ մշակույթի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ: Այն իր հերթին պետք է ներառի նաև համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական ծառայությունների, վերականգնողական կենտրոնների, խնամատար հաստատությունների, զբաղվածության գործակալությունների, կրթական հաստատությունների հետ:

Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության կառավարման լիազորությունները պետք է վերապահվեն ՀՀ արդարադատության նախարարության համակարգում պրոբացիայի ծառայության ղեկավարին, որին պաշտոնում նշանակելու և

պաշտոնից ազատելու լիազորություն պետք է ունենա ՀՀ արդարադատության նախարարը: Ծառայությունը կունենա կենտրոնական մարմին և տարածքային ստորաբաժանումներ (ՀՀ վարչատարածքային բաժանմանը համապատասխան), որոնց մեջ, ելնելով աշխատանքային ծավալից, առանձնահատկություն կունենա Երևան քաղաքը (ստորաբաժանման ղեկավարը կունենա երեք տեղակալներ): Ծառայության, այդ թվում՝ կենտրոնական մարմնի, կառուցվածքը կբխի իրականացվելիք խնդիրներից (ծառայության կառուցվածքը բերված է հավելված 1-ում):

ՀՀ պրոբացիայի ծառայության տարածքային ստորաբաժանումները պետք է ստեղծվեն յուրաքանչյուր մարզում և Երևան քաղաքում, մարզերում մարզային ստորաբաժանումը կունենա նստավայրեր տարբեր համայնքներում (նպատակահարմար է նստավայրերը լինեն 40 համայնքներում): Յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանման գործունեությունը պետք է կառավարվի և վերահսկվի Պրոբացիայի կենտրոնական մարմնի կողմից: Յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանում (մասնավորապես տարածքային ստորաբաժանման ղեկավարը) պետք է պատասխանատու լինի ստորաբաժանման տարբեր գործառույթների ղեկավարումն իրականացնելու համար: ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունը պետք է պատասխանատու լինի պրոբացիայի ծառայության համընդհանուր կառավարման համար: Պրոբացիայի գործակալության գործառույթները հիմնականում պետք է իրականացվեն պարբերական հաշվետվություններ մշակելու և ստուգումներ իրականացնելու միջոցով:

Աշխատակազմի առումով գրեթե բոլոր ծառայությունները եռաստիճան համակարգ ունեն. ղեկավարություն, պրոբացիոն աշխատակիցներ և վարչակազմ: Պրոբացիոն բնույթի աշխատանքների մեջ կարող են ներգրավվել նաև աշխատանքային այլ խմբեր: Նախ, հատուկ պարտականություններով պրոբացիոն աշխատակիցներ, ովքեր ապահովում են վերահսկողության իրականացումը:

Էլեկտրոնային վերահսկողության բաժինը պետք է կազմակերպվի պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնում՝ ամբողջ հանրապետության համար (մեկ պահախմբով, երկու ծառայողով և 4 հերթափոխով):

Պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է նաև անձնակազմի ճիշտ թվաքանակից, որի հաշվարկման համար ճիշտ

ուղեցույց կարող է հանդիսանալ ծառայության կենտրոնական մարմնի խնդիրների և տարածքային մարմիններում ծառայության կողմից իրականացվող գործառույթների համար կադրային ռեսուրսների ճիշտ հաշվարկը: Այս տեսանկյունից պրոբացիոն բնույթի աշխատանքների համար գործերի լավագույն քանակը մեկ աշխատակցի համար որոշելը չափազանց կարևոր հարց է, որի ժամանակ պետք է հաշվի առնել, որ բոլոր հանցագործություն կատարած անձանց նկատմամբ միատեսակ վերահսկողություն չի իրականացվում և կարևորություն տալ պրոբացիայից ազատ արձակվելուն մոտ ժամանակահատվածին: Միջազգային փորձի համաձայն՝ մեկ աշխատակցի վերահսկողության ներքո եղած պրոբացիոն գործերի քանակը (մեկ աշխատակցի հաշվով թվաքանակի սահմանումը) տատանվում է 40-ից մինչև 70-ը: Այս իսկ պատճառով կարևոր է սահմանել պրոբացիայի ենթակա հանցագործություն կատարած անձանց համար հստակ դասակարգում և գործերի կառավարման համակարգ: Մոդելային համակարգը ներառում է դասակարգում, որտեղ կա նաև «աշխատանքի ծավալը» որոշելու մոդել: «Աշխատանքի ծավալը» որոշելու մոդելը հիմնված է գործերի տարբերակման վրա:

Ելնելով ծառայության ընդհանուր խնդիրների և մեկ աշխատակցի կողմից իրականացվող գործառույթների համար միջինում 50 գործ չափանիշից՝ ՀՀ պրոբացիայի ծառայության ընդհանուր անձնակազմը կկազմի մոտ 220 անձ:

Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ պրոբացիայի ծառայության աշխատակիցները հիմնականում հանրային ծառայողներ են, ովքեր պետք է համապատասխանեն սահմանված պահանջներին: Ինչ վերաբերում է կրթական չափանիշներին, ապա աշխատակիցները պետք է սոցիալական գիտությունների, մանկավարժության կամ իրավաբանության, հոգեբանության ոլորտում բակալավրի աստիճան ունենան: Կան երկրներ (Իռլանդիա և Ֆրանսիա), որտեղ աշխատակիցները պետք է նաև աշխատանքային փորձ ունենան, սակայն նման ցենզ սահմանելը Հայաստանի դեպքում նպատակահարմար չէ: Շատ հաճախ աշխատանքի անցնելուց հետո աշխատակիցները նախապատրաստական դասընթացների են մասնակցում, որպեսզի ավելի ծանոթ լինեն աշխատանքներին, որոնց պետք է մասնակցեն: Արդարադատության նախարարության կամ բանտային համակարգի կողմից հաճախ կազմակերպվում են ուսումնական հատուկ դասընթացներ կոնկրետ աշխատանքներ

կատարելու համար: Այդպիսիք են, օրինակ թմրանյութերի կամ ալկոհոլի օգտագործման դեմ տարվող աշխատանքները:

Պրոբացիայի ծառայությունում պետք է աշխատեն անչափահասների գործերով վերապատրաստումներ անցած առանձին մասնագետներ, որոնք պետք է զբաղվեն անչափահասների առնչությամբ պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացմամբ: Անչափահասների գործերով պետք է ներգրավվեն նաև հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ՝ պրոբացիոն բնույթի ծրագրերում անչափահաս օրինախախտների սոցիալական, հոգեբանական, իրավական և մտավոր ծրագրային առանձնահատկություններից ելնելով:

Վեցերորդ խումբ. Նախագծի ընդունմամբ հստակեցվում և կատարելագործվում են «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգավորումները, ինչպես նաև կարգավորվում են քրեակատարողական ծառայության գործունեության ընթացքում ի հայտ եկած՝ տվյալ օրենքով չկարգավորված հարաբերությունները:

Յոթերորդ խումբ. Նախագծերի ընդունմամբ հստակեցվում և կատարելագործվում են ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսգրքերով նախատեսված կարգավորումները, ինչպես նաև կարգավորվում են տվյալ ոլորտում օրենքով չկարգավորված հարաբերություններ:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագծերով ևս մեկ քայլ է կատարվում դեպի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտները վերանայելը, գործող ընթացակարգերը հստակեցնելը և եվրոպական ու միջազգային չափանիշներին համապատասխանեցնելը, որոնք հնարավորություն կտան լիարժեք ապահովելու անձի իրավունքներն ու ազատությունները:

Ակնկալվում է քրեակատարողական ծառայության գործունեությանը վերաբերող առանձին «աշխատանքային գործիքների» կիրառման արդյունավետության բարձրացում՝ զերծ մնալով օրենսդրական թերի կամ ոչ հստակ կարգավորումներից:

Նշված փոփոխությունների արդյունքում ակնկալվում է նաև Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ստեղծումը, դրա լիազորությունների շրջանակի հստակ սահմանումը և արդյունավետ իրականացումը, որի արդյունքում կապահովվի՝ հանցագործությունների կատարման ու կրկնահանցագործությունների նվազումը, քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումը, խափանման միջոցի ընտրության և պատժի նշանակման գործընթացներում, առավել տեղեկացված և անաչառ որոշումների կայացումը, դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ներկայացման գործընթացներում առավել տեղեկացված և անաչառ որոշումների կայացումը, հանցանք կատարած անձի ուղղումը, սոցիալական արդարության վերականգնումը, հանցանք կատարած անձի վերասոցիալականացումը, հասարակության անվտանգության ապահովումը՝ հանցանք կատարած անձի կողմից նոր հանցագործությունների կատարման հավանականությունը նվազեցումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պրոբացիայի ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման կապակցությամբ ՀՀ գործող օրենսդրությունում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես, «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ ՀՀ Նախագահի 31.07.2006թ. թիվ ՆՀ-163-Ն հրամանագրում, ՀՀ կառավարության 19.10.2001թ. թիվ 1015, 15.09.2005թ. թիվ 1728-Ն, 06.10.2005թ. թիվ 1806-Ն, 29.12.2005թ. թիվ 2303-Ն, 24.08.2006թ. թիվ 1304-Ն, 23.02.2006թ. թիվ 393-Ն, 27.04.2006թ. թիվ 982-Ն, 03.08.2006թ. թիվ 1543-Ն, 24.08.2006թ. թիվ 1256-Ն, 26.10.2006թ. թիվ 1561-Ն, 26.05.2006թ. թիվ 825-Ն, 30.04.2009թ. թիվ 550-Ն, 13.05.2010թ. թիվ 530-Ն, 21.04.2011թ. թիվ 487-Ն որոշումներում և ՀՀ արդարադատության նախարարի 27.05.2006թ. թիվ 50-Ն, 18.12.2009թ. թիվ 311-Ն, 09.09.2010թ. թիվ 184-Ն, 09.09.2010թ. թիվ 185-Ն, 09.09.2010թ. թիվ 186-Ն, 24.11.2010թ. թիվ 229-Ն, 24.11.2010թ. թիվ 230-Ն, 08.12.2010թ. թիվ 235-Ն հրամաններում: Անհրաժեշտ է նաև ընդունել ՀՀ կառավարության՝ ամբողջությամբ նոր որոշումներ, որոնցով՝

1) կհաստատվի քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կառուցվածքը և հաստիքացուցակները (նախագծի 3-րդ, իսկ Օրենքի 5-րդ հոդված),

2) կսահմանվեն քրեակատարողական հիմնարկների տեսակները և լրակազմերը, ինչպես նաև կառուցվածքները և հաստիքացուցակները (նախագծի 3-րդ, իսկ Օրենքի 7-րդ հոդված):

«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված անհրաժեշտ կլինի ընդունել ամբողջությամբ նոր իրավական ակտեր, որոնք են՝

1) ՀՀ կառավարության որոշում «Պրոբացիայի ծառայություն ստեղծելու և պրոբացիայի ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին»,

2) ՀՀ կառավարության որոշում «Պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացման կարգը և պայմանները սահմանելու մասին»,

3) ՀՀ կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1797-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»,

4) ՀՀ կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1796-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

5) ՀՀ կառավարության որոշում «Լրացուցիչ աշխատավարձի հավելումները սահմանելու մասին»,

6) ՀՀ արդարադատության նախարարի հրամանը «Պրոբացիայի ծառայության կառուցվածքը, հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին»,

7) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայության ծառայողների պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին»

8) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վկայականի նմուշը հաստատելու մասին»

9) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայության ծառայողի թեկնածուների համար նախատեսված թեստերը կազմելու կարգը սահմանելու մասին»,

10) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայության ծառայողի թեկնածուների համար նախատեսված մրցույթի կապակցությամբ գրավոր բողոք ներկայացնելու, այն քննության առնելու և որոշում կայացնելու կարգն ու ժամկետները սահմանելու մասին»,

11) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայության ծառայողի վկայականի ձևը և տրամադրելու կարգը սահմանելու մասին»,

12) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին»,

13) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայությունում ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու կարգը սահմանելու մասին»,

14) ՀՀ արդարադատության նախարարի հրաման «Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու և ռեզերվից հանելու կարգը սահմանելու մասին»:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պրոբացիայի ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացում կամ նվազում չի նախատեսվում:

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների

բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	ընթացիկ (2013) տարի		Հաջորդող 3 տարիները		
			2014 թ.	2015 թ.	2016 թ.
	Ըստ 2012 թվականի պետական բյուջեի	Փոփոխու-թյունը 2012 թվականի պետական բյուջեի համեմատ	Փոփոխություն ն ընթացիկ տարվա համեմատ (2012 թվական)	Փոփոխություն ն ընթացիկ տարվա համեմատ (2012 թվական)	Փոփոխություն ն ընթացիկ տարվա համեմատ (2012 թվական)
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ	-	-	-	-	-
1.1. պետական բյուջեի եկամուտներ	-	-	-	-	-
1.2. ՏԻՄ եկամուտներ	-	-	-	-	-
2. Ծախսեր	-	-	-	-	-
2.1. պետական բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական	0	-	-	-	-
3.1. պետական բյուջե	0				
3.2. ՏԻՄ բյուջե	-	-	-	-	-
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	-				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	-				